երաժշտական բեմադրություններ, իսկ իր ստեղծագործական կյանքի ընթացքում դասավանդել է բազմաթիվ երաժիշտների: Արխիվային նյութերից տեղեկանում ենք Դեմուրյանի կազմած տարբեր ուսումնական ծրագրերի մասին (4. ֆոնդ հ 26, 2 թերթ), որոնք նախատեսված են հանրակրթական դպրոցներում երգ-երաժշտություն դասավանդելու համար: Այդ շարքում են նաև բազմաբնույթ հոդվածներ և թարգմանություններ նվիրված, ի թիվս այլոց Ռ. Վազների (4. ֆոնդ հ 24, 5 թերթ), Պ. Բ. Չայկովսկու (4. ֆոնդ հ 21, 4 թերթ), Ֆ. Լիստի (4. ֆոնդ հ 23, 4 թերթ) ստեղծագործություններին, հոդվածներ արևելյան երաժշտության (4. ֆոնդ հ 17, 12 թերթ, ֆոնդ հ 18, 3 թերթ), արևելյան երաժշտական գործիքային անսամբլի կազմակերպման (4. ֆոնդ հ 6, 4 թերթ), ժողովրդական երաժշտության (4. ֆոնդ հ 2, 22 թերթ) մասին: Ուշագրավ է նաև Դեմուրյանի հոդվածը Կոմիտասի «Հորովելի» մասին (4. ֆոնդ հ 8, 3 թերթ):

XIX դարի երկրորդ կեսին, երբ հայ երաժշտությունը թևակոխեց իր զարգացման նոր շրջանը, պահանջ առաջացավ ունենալ բազմակողմանի երաժշտական պատրաստվածությամբ մանկավարժներ, քանի որ առանց նրանց անհնարին էր լուծել ժամանակի առաջադրած բարդ ու դժվարին խնդիրները:

Երաժշտության ուսուցման և կիրառման դժվարին գործը կենտրոնացրել էր հայ եկեղեցական գործիչների ձեռքերում: Դպիրներն ու դպրապետները մեծ աշխատանք էին կատարում հայ հոգևոր երգի պահպանման գործում, թեպետ նրանց երաժշտական կրթությունը սահմանափակվում էր հայկական նոր նոտագրության և եկեղեցական երաժշտության իմացությամբ:

Սակայն, ինչպես նշեցինք, XIX դարի երկրորդ կեսից և հատկապես 1860-ական թվականներից սկսած հետզհետե երևան է գալիս ժողովրդի լայն շրջաններում երաժշտական կրթություն տալու անհրաժեշտության գիտակցությունը: Ասպարեզում ի հայտ եկած առաջին գործիչները նպատակ են դնում երաժշտական գիտելիքները տարածել ժողովրդի մեջ՝ դրա համար օգտագործելով ինչպես տպագիր միջոցներ (երաժշտական հանդեսների էջերում պարբերաբար դասընթացների հրատարակում, եվրոպական նոտագրության և հայկական նոր ձայնագրության ուսուցում*, նոտային հրատարակություններ, երգարանների ստեղծում և տարածում), այնպես և բանավոր միջոցներ (անվճար դասախոսություններ և ուսուցում): Լուսավորչական այս շարժումն անկասկած, չափազանց կարևոր էր նաև այն տեսակետից, որ հնարավորություն էր ստեղծում շփվելու եվրոպական զարգացած երաժշտության հետ, յուրացնելու առաջավոր փորձը և այն ծառայեցնելու ազգային երաժշտության զարգացմանը: Իսկ սա իր հերթին խթան էր հանդիսանում եվրոպական մշակութային կենտրոններում մասնագիտական երաժշտական կրթություն ստանալու համար:

Եվ, վերջապես, այստեղ հարկ է հատուկ նշել կրթության ոլորտում Կոմիտասի կատարած գործունեությունը:

* Բազմաթիվ դասագրքերից նշենք օրինակ՝ Նիկողայոս Ս. Թաշճյանի (1874), Եզնիկ քահանայ Երզնկեանց (1880), Արշակ Բրուտյանի (1890) աշխատությունները:



Կ. Պոլիս 1914 թ.

նը, քանի որ հենց նրա վարած գիտամանկավարժական աշխատանքի շնորհիվ հետագայում զարգացավ և մեծ թափ առավ հայ երաժշտագիտությունը, ֆուլկլորագիտությունը, երգչախմբային արվեստը և վերջապես, դրվեց հայ ազգային կոմպոզիտորական դրպրոցի հիմքը:

Ինչպես հայտնի է, Կոմիտասը Գևորգյան ճեմարանի լրիվ դասընթացն ավարտել է

1893 թ. մայիսին և նույն թվականի աշնանից նշանակվել ճեմարանի երգ-երաժշտության դասատու՝ փոխարինելով պաշտոնից ազատված իր ուսուցիչ Ք. ԿարաՄուրզային: Կարա-Մուրզան, որն ընդամենը մեկ ուսումնական տարի դասավանդեց ճեմարանում, նպատակ էր դրել լայն ծրագիր իրագործել, սակայն, հնարավորություն չունենալով կատարել իր մտահղացումները՝ ստիպված էր հեռանալ Էջմիածնից:

Հենց այս շրջանում Կոմիտասը սուր կերպով զգում էր իր երաժշտական պատրաստվածության պակասը և ստանալով Խրիմյան Հայրիկի համաձայնությունը 1895 թ. հոկտեմբերից մեկնում է Թիֆլիս՝ մտադրություն ունենալով ընդունվելու երաժշտական ուսումնարան: Բայց նրան այդ մտքից հետ է պահում Մակար Եկմալյանը, գտնելով, որ պետք է ձգտել բարձրագույն մասնագիտական կրթության: Ինչպես հայտնի է, Եկմալյանը մոտ մեկ ուսումնական տարի պարսպել է Կոմիտասի հետ և նախապատրաստել կոնսերվատորիայի ընդունելության քննություններին: Դրանից հետո միայն Կոմիտասը մեկնում է Բեռլին և երեք տարի սովորելով Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում ու Բեռլինի արքունական համալսարանի երաժշտության պատմության և փիլիսոփայության ֆակուլտետում, եզրափակում իր մասնագիտական կրթությունը և վերադառնում Էջմիածին:

Սկսվեց Կոմիտասի գործունեության նոր և փայլուն շրջանը, որի ընթացքում իր մանկավարժական գործունեությանը զուգընթաց նա զբաղվեց ժողովրդական երաժշտության հավաքման, մշակման և ուսումնասիրության, խազաբանության, երաժշտական-կատարողական և այլ հարցերով:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այժմ, նա մշտապես մտահոգված էր ազգային երաժշտական ուժերի դաստիարակման հարցով: Նրա մեջ հետզհետե հասունանում էր հայկական երաժշտական դպրոց հիմնելու գաղափարը, որովհետև նա տեսնում ու զգում էր, որ Գևորգյան հոգևոր ճեմարանն ի վիճակի չէ անել այն, ինչն անհրաժեշտորեն թելադրվում էր ազգային երաժշտական մշակույթի զարգացման հեռանկարի կողմից: Ճիշտ է, այս տարիներին ճեմարանում նրա

ձեռքի տակ ձևավորվեցին Ս. Մելիքյանի և Հ. Հարությունյանի նման աշակերտներ, որոնք հետագայում զգալի գործ կատարեցին հայ երաժշտական մշակույթի զարգացման բնագավառում, սակայն դա քիչ էր և չէր կարող բավարարել հարածուն պահանջը:

Ժամանակի դժվարին պայմաններում անգամ Կոմիտասը երաժշտանոց հիմնելու ծրագիր էր փայփայում՝ հույս ունենալով, որ Էջմիածնի կաթողիկոսությունը կըհամոզվի դրա անհրաժեշտության մեջ և միջոցներ չի խնայի այդ ազգօգուտ նպատակի իրագործման համար: Այս է վկայում արխիվային ֆոնդերում գտնված և հրատարակված Կոմիտասի կազմած առաջին ուսումնական ծրագրի սևագիրը, որն առաջին անգամ հրատարակել է Գ. Հարությունյանը «Կոմիտասի կյանքն ու գործունեությունը նորահայտ վավերագրերի լույսի տակ» հոդվածում (5. էջ 154):

Կոմիտասի նպատակադրումը բխում էր ժամանակի պահանջներից և կոչված էր շրջադարձային դեր խաղալ հայ երաժշտական արվեստի զարգացման գործում: Ինքը՝ Կոմիտասը, զինված երաժշտական արվեստի խորը պատրաստվածությամբ և բազմակողմանի գիտելիքներով, միակն էր այդ շրջանում, որ կարող էր ըստ ամենայնի ղեկավարել նախագծվող հոգևոր երաժշտանոցը և ծառայեցնել ազգային երաժշտական մրշակույթի զարգացման գործին: Նա պատրաստ էր իր վրա առնել այդ մեծ ծրագրի իրագործման ամբողջ ծանրությունը:

Ինչպես գիտենք, Կոմիտասի ստեղծագործական մղումները և առաջարկներն արձագանք չգտան Էջմիածնի ղեկավարության կողմից: Կոմիտասը, հրավերներ ստանալով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցից՝ ստանձնելու վերատեսչի և երաժշտության դասատուի պարտականությունները, ինչպես և Կոստանդնուպոլսից, ուր խոստանում էին ստեղծել բոլոր հնարավորությունները նրա գործունեության ծավալման համար, հինգամսյա արձակուրդ ձևակերպեց և մեկնեց Կ. Պոլիս:

Կ. Պոլսի մտավորականությունը բացառիկ խանդավառությամբ դիմավորեց Կոմիտասին: Հատկապես հայկական երաժշտանոցի ստեղծման գաղափարն իսկույն արձագանք գտավ: Սակայն հետագա տարիների ընթացքում ևս Կոմիտասի փայփայած երաժշտանոցի գաղափարն այդպես էլ մնաց անկատար: Իհարկե, այստեղ վճռական նշանակություն ունեցավ այն, որ օսմանյան կառավարությունը չէր կարող հանդուրժել այդպիսի մի ազգային երաժշտանոցի ստեղծումը, երբ պետական նման հաստատություն Թուրքիայում գոյություն չուներ: Կոմիտասը հասցրեց կազմակերպել 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը, որի համերգներն արժանացան հայ և օտարազգի ունկնդիրների բացառիկ խանդավառ ընդունելությանը: Առաջին համաշխարհային պատերազմը և Հայոց Մեծ Եղեռնի ողբերգական իրադարձություններն ընդհատեցին Կոմիտասի գործունեությունը:

Կոմիտասի գիտական, համերգային, բանահավաքչական գործունեությունները հիմնականում ունեցել են կրթական նպատակ: Սակայն առանձնահատուկ են այս շարքում Կոմիտասի կատարած բուն ուսումնամանկա-

վարժական աշխատանքները: Այստեղ տեղին է հիշատակել Կոմիտասի կազմած դասագրքերը, դասավանդման ծրագրերը: Այս շարքում նշենք Կոմիտասի «Տարրական երաժշտություն» դասագիրքը. այն կազմված է հայկական ձայնանիշերով: Դասագիրքն առաջին անգամ լույս է տեսել Գ. Գասպարյանի և Մ. Մուշեղյանի աշխատասիրությամբ՝ Կոմիտասի «Ուսումնասիրություններ եւ յօդածներ» մատենաշարի առաջին պրակում, իսկ բնօրինակը ցուցադրվում է Կոմիտասի թանգարան-ինստիտուտում: Դասագրքի նյութի մատուցման ոճը, ստորաբաժանումները, բերված օրինակների առատությունը և դրանց պարզ, մանրամասն բացատրությունը հստակ ներկայացնում է Կոմիտասի՝ այս առարկայի դասավանդման մեթոդաբանությունը (6. էջ 172): Դասագրքում հանդիպում ենք բազմաթիվ տախտակներով ներկայացված ժամանակի նշանների բացատրություն, չափի, ձայնամիջոցի (ինտերվալի) (6. էջ 210), դաշնակի (համահնչյան) (6. էջ 217) և այլ տարրերի և հասկացությունների նկարագիրն ու բացատրությունը: Կարծում եմ դեռ մեծ աշխատանք ունենք կատարելու երաժշտական տերմինների հայերեն թարգմանության և կիրառման գործում, ի դեպ, այս հարցում ևս Կոմիտասը հասել է մեծ հաջողությունների: Պարզ, մատչելի, սակայն հստակ գիտելիքի որոշակի ծավալ պարունակող դասագրքով դասավանդելը առավելազույնս օպտիմալ տարբերակն էր հատկապես XIX դարավերջի և XX դարասկզբի ժամանակաշրջանում, երբ դասավանդման կարգն ու ծրագրերը կազմվում էին հենց դասավանդող ուսուցիչների կողմից՝ անպայմանորեն հաշվի առնելով սաների կրթական մակարդակը: Այս պայմաններում նույնիսկ ներկայացվող դասագիրքըն առանձնանում է դասավանդման նյութի խորն իմացության և մատուցման ձևերով:

Դասագրքերի շարքում հարկ է նշել նաև «Դաշնակություն» (Հարմոնիայի դասագիրքը) (6. էջ 231), «Պատմություն երաժշտութեան» (6. էջ 137) աշխատությունները, որոնք ըստ բովանդակության և նյութի մատուցման կերպի, նույնպես ուսուցողական, ճանաչողական բնույթ են կրում: Այս շարքում կարելի է հիշել նաև Կոմիտասի բազմաթիվ հոդվածները և ուսումնասիրությունները գեղջկական ու հոգևոր երաժշտության շուրջ, որոնք այսօր էլ ուսումնական կարևոր նյութ են հանդիսանում երաժշտական հաստատությունների ուսանողների համար:

Այսպիսի կրթական, դաստիարակչական աշխատանքների շարքում կարևոր ենք համարում նշել Կոմիտասի հեղինակած «Տասը պատվիրանները»: Այդ մասին տեղեկություններ ենք գտնում Մարգարիտ Բարսյանի հոդվածում (7. էջ 222): Պատվիրանները՝ երգչին ուղղված խորհուրդները, Կոմիտասի անունը կրող երաժշտանոցի սաները պետք է անգիր իմանան ինչն ավելի կարևոր է, կիրառեն իրենց կատարողական գործունեության ընթացքում: Այն պետք է ընդգրկվի նաև ակադեմիական և ժողովրդական երգեցողության դասավանդման մեթոդական բոլոր ձեռնարկներում, իսկ կիրառման արդյունքում կստանանք կիրթ, հղկված, գիտակցված երգեցողություն, ինչպես նաև՝ բարձր գե-

ղարվեստական ճաշակ և ազգային երաժշտությանը հոգեհարազատ, կոմիտասյան պատգամներին համահունչ կատարման որակ և վարպետություն:

Երբ Կոմիտասի համար պարզվեց հայկական երաժշտանոցի ստեղծման անհրաժեշտությունը, նա իր երգչախմբից ընտրեց 16 մասնակից, կազմակերպեց երաժշտատեսական առարկաների դասընթացներ և շուրջ երկու տարի պարապելով նրանց հետ, պատրաստեց այնպիսի երաժիշտներ, որոնք ապագայում պետք է շարունակեին իր սկսած գործը: Այդ դասընթացների մասնակիցներից շատերը տարբեր պատճառներով ժամանակի ընթացքում դադարեցին հաճախել պարապմունքներին և ի վերջո մնացին հինգ հոգի, որոնք և արժանացան «Կոմիտասի սաներ» տիտղոսին: Այդ նվիրյալներն էին Բարսեղ Կանաչյանը, Վարդան Սարգսյանը, Միհրան Թումանյանը, Վաղարշակ Սրվանձտյանը և Հայկ Սեմերճյանը:

Նրանք էին, որ, զինադադարից հետո հավաքվելով Կ. Պոլսում, կազմակերպեցին «Կոմիտաս վարդապետի հինգ սաներ» խմբակցությունը (2. էջ 560), ձեռնարկեցին իրենց ուսուցչի ստեղծագործությունների համերգային կատարման գործը, կազմեցին ու հրատարակեցին «Հայ գուսան» նոտագրված երեք երգարանը: Այս ամենից գոյացած գումարի մի մասը նրանք հատկացրեցին իրենց հիվանդ ուսուցչի ապաքինման գործին՝ օգնելով, որ նրան փոխադրեն Փարիզ, իսկ մյուս մասն օգտագործեցին իրենց երաժշտամասնագիտական կրթության պակասը լրացնելու համար՝ 1920-1921 թթ. սովորելով Փարիզի Ռենե Լը Նորմանի դասընթացներում:

Կոմիտասի սաները հետագայում մեծ գործ կատարեցին իրենց մեծ ուսուցչի՝ հանձարեղ Կոմիտասի հիշատակը հավերժացնելու և նրա գործը շարունակելու համար: Բարսեղ Կանաչյանը՝ որպես կոմպոզիտոր և խմբավար, ոչ միայն կոմիտասյան ավանդներին հավատարիմ իր ստեղծագործությամբ, այլև Կոմիտասի ստեղծագործությունների բարձրարվեստ կատարմամբ, Վարդան Սարգսյանը՝ կոմիտասյան երգերի վերականգնման, խմբագրման և հրատարակման պատասխանատու աշխատանքով, Միհրան Թումանյանը՝ երաժիշտ-ազգագրագետ Կոմիտասի հետքերով ընթանալով ու կազմելով «Հայրենի երգ ու բան» բազմահատոր հավաքածուն:

Իսկ հանձարեղ երաժշտի տարիներով փայփայած նվիրական երազանքը՝ հայկական երաժշտանոց հիմնելու գաղափարն իրականացավ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո միայն, երբ Երևանում 1923 թ. հիմնադրվեց պետական կոնսերվատորիան, որն այժմ հպարտությամբ կրում է մեծն Կոմիտասի անունը:

Ծ Ա Ն Թ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Արիստակէս քինյ. Հիարդեան, Պատմութիւն հայ ձայնագրութեան և կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց (1768-1909), Կ. Պոլիս, 1914 թ.: *Aristakejs qhney. Hisarlean, Patmutiwn haey dzaynagrutean ev kensagrutivnq erazhisht azgaynotz* (1768-1909), K.Polis, 1914 th.
2. Մորաղյան Մ., Հայ երաժշտությունը XIX դարում և XX դա-

րասկզբում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970 թ.: *Muradyan M.*, Hay erazhshtutyun' XIX darum ev XX daraskzbum., Yer., HSSH GA hrat., 1970 th.

3. Մուրադյան Մ., Ազգային երաժշտական ուժերի պատրաստման կոմիտասյան ծրագիրը, /Վոմիտասական-1, Եր., 1969 թ., էջ 231: *Muradyan M.*, Azgayin erazhshtakan uzheri patrastman komitasyan tsragir', /Komitasakan-1, Yer., 1969 th.

4. ԳԱԹ, Դեմուրյանի արխիվ: GAT, Demuryan arkhiv

5. Հարությունյան Գ., Վոմիտասի կյանքն ու գործունեությունը նորահայտ վավերագրերի լույսի տակ, //Բանբեր Հայաստանի

արխիվների, N 2 (14), Եր., 1966 թ.: *Haruthyunyan G.*, Komitasi kyanqn u gortsuneuthun' nvorahayt vaverageri luysi tak, //Banber Hayastani arkhivneri, N 2 (14), Yer., 1966 th.

6. *Վոմիտաս Վարդապետ*, /Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Ա, Եր., 2005 թ.: Komitas Vardapet, Usumnasirutyunner ev yoduatsner, girq A, Yer., 2005 th.

7. /Վոմիտասը ժամանակակիցների հուշերում եւ վկայություններում, Եր., 2009 թ.: Komitas' zhamanakakitzneri husherum ev vkayuthyunnerum, Yer., 2009 th.

Բանալի-բառեր. *Կրթություն, Ներսիսյան դպրոց, Գևորգյան հոգևոր ճեմարան, Եկմալյան, Կարա-Մուրզա, Դեմուրյան, Վոմիտաս, Երաժշտական տեսություն, Երգչի տասը պատվիրաններ:*

Ключевые слова: *образование, Семинария Нерсисян, Духовная семинария Геворкян, Екмалян, Кара-Мурза, Демурян, Комитас, теория музыки, Десять заповедей певца.*

Keywords: *Education, Nersisyan School, Gevorgyan Seminary, Yekmalyan, Kara-Murza, Demuryan, Komitas, Music Theory, Ten advices for singer.*

Տեղեկություններ հեղինակի մասին. *ԱԹԱՆԱՍՅԱՆ ՆՈՒՆԵ ՌՈՄԵՈՎՆԱ (1967 թ. թ. Երևան): Ավարտել է 1990 թ. Երևանի Վոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը՝ արդենտ Մարգարիտա Գաբրիելի Հարությունյանի մասնագիտական դասարան: 1993 թ. առ այսօր աշխատում է Երևանի Վոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում, դասախոս՝ վարում է «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Հայ հոգևոր երաժշտություն» և «Նոր հայկական նոտագրություն» դասընթացները նաև 2001-ից առ այսօր Երևանի Վոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտության տեսության ամբիոնի դասախոս՝ վարում է «Հարմոնիա», «Սոլֆեջիո» և «Արևմտաեվրոպական երաժշտատեսական համակարգեր» դասընթացները: 2000-ից Հայաստանի պետական կամերային երգչախմբի երգիչ, գեղարվեստական ղեկավար՝ Ռոբերտ Մլեկյան: 2008-ից «Հայ Ասպետ» հեռուստատեսային երաժշտական փորձագետ և հանձնախմբի անդամ: Հեղինակ է գիտական հոդվածների՝ «Ստեփան Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր» անտիպ ժողովածուն», //Երաժշտական Հայաստան, 1 (24) 2007 թ., «Ստեփան Դեմուրյանի դերը հայ մշակույթի և կրթության զարգացման գործում», //Երաժշտական Հայաստան 4 (31) 2008-1 (32) 2009 թթ. էջ 75-77, Ստեփան Դեմուրյան «Հայ ժողովրդական երգեր», /«Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ԵՊԿ, մատենաշար, սրակ 9, 2013 թ., Սահակ Ամատունի «Ժողովրդական երգերի ձայնագրյալ ժողովածու», /«Հայ ժողովրդական երգեր և նվագներ», ԵՊԿ, մատենաշար, սրակ 11, 2014 թ.:*

Сведения об авторе: *АТАНАСЯН НУНЕ РОМЕОВНА (род.1967, Ереван). В 1990г. окончила музыковедческое отделение ЕГК им.Комитаса (класс проф. М. Г. Арутюнян). С 1993 по сей день работает на кафедре Армянской музыкальной фольклористики ЕГК преподавателем дисциплин: "Армянское народное музыкальное творчество", "Армянская духовная музыка", "Новое армянское нотирование". Одновременно с 2000 г. по сей день преподает дисциплины: гармония, сольфеджио, западноевропейские музыкально-теоретические системы на кафедре теории музыки ЕГК. С 2000 г. - артистка Государственного камерного хора (худ. рук. Р. Млкеян). С 2008 г. эксперт и член жюри музыкальной телевизионной игры "Ай аспет". Автор научных статей: "Неизданный сборник Степана Демуряна "Народные армянские песни" (//Музыкальная Армения, # 1(24)2007), "Роль Степана Демуряна в армянской культуре и развитии образования" (//Музыкальная Армения, # 4(31)2008)1(32)2009, С. 75-77), "Степан Демурян" /"Народные армянские песни и наигрыши"(ЕГК, серия изданий, вып.9, 2013), "Саак Аматауни. Сборник нотированных народных песен", /"Народные армянские песни и наигрыши"(ЕГК, серия изданий, вып. 11, 2014).*

Information about an author: *ATANASYAN NUNE ROMEO (born in 1967, Yerevan). In 1990 she graduated from YSC Department of Musicology professional class of Professor Margarita Gabriel Harutyunyan From 1993 till today works in YSC in the department of Armenian musical folklore studies. Lecturer teaches Armenian folk music and Armenian spiritual music courses and also from 2001 till today she is a lecturer of YSC's department of music theory she teaches courses of "Harmony", "Solfejio" and "Western musical theoretical systems". From 2000 she is an Armenia Chamber Choir Singer, artistic director Robert Mlkeyan. From 2008 she is a music expert and the member of commission of television game "Armenian knight" (Hay Aspet). She is an author of scientific articles "Stepan Demouryan's "Armenian folk songs" unpublished collection" //Musical Armenia 1 (24) 2007, "Stepan Demouryan's role in the development of Armenian culture and education", //Musical Armenia 4 (31), 2008-1 (32) 2009. p. 75-77, Stepan Demuryan "Armenian folk songs", "Armenian folk songs and plays", YSC series 9, 2013, "Sahak Amatuni's "Folk songs recorded collection"" /"Armenian folk songs and plays", YSC, series, 11, 2014.*

Րեզյումե

Музыковед, преподаватель ЕГР *Нуне Ромеовна Атанасян.* – *“Роль Комитаса в развитии армянского музыкального образования конца XIX - начала XX веков”.*

В статье представлена роль Комитаса в развитии музыкального образования. Продолжая опыт Екмаляна, Кара-Мурзы и других деятелей армянской музыкальной культуры в конце XIX - начале XX веков, Комитас предлагает свое системное видение армянского национального музыкального образования, отраженное в его статьях, учебниках по теории музыки и гармонии, в его десяти заповедях певцу. Они играют важную роль также в современной сфере музыкального образования, в частности, в методах преподавания различных дисциплин в Ереванской государственной консерватории им. Комитаса.

Summary

Musicologist, pedagogue of YSC Nune Romeo Atanasyan. – *“The role of Komitas in the 19th and at the beginning of the 20th century in the development of Armenian musical education”.*

The article presents the role of Komitas in the development of music education. Continuing the experience of Ekmalyan, Kara-Murza and other figures of Armenian musical culture in the late 19th and early 20th centuries, Komitas offers his systematic vision of Armenian national music education, reflected in his articles, textbooks on the theory of music and harmony, in his ten advices to the singer. They also play an important role in the modern teaching method used in various disciplines of YSC.

**ՋԱՐՈՒՏԻ ԴԱՎԻԹԻ
ՂԱԶԱՐՅԱՆ**

**Դաշնակահար,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ**
E-mail.ghazaryan-zaruhi@mail.ru

**ԿՈՄԻՏԱՍԻ ԳԱՇԵՆԱՄՈՒՐԱՅԻՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆԻ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ**

Հայ երաժշտարվեստի պատմության մեջ Կոմիտասը երևույթ էր: Կոմպոզիտոր և ազգագրագետ, խմբավար և գիտնական, երգիչ և մանկավարժ Կոմիտասը հսկայական դեր խաղաց հայ ժողովրդի երաժշտական մշակույթի զարգացման գործում:

Լինելով բացառիկ անհատականություն նրա երաժշտությունը ընդգրկում է հայ ժողովրդի կյանքի պատմական որոշակի ժամանակաշրջանում:

XX դարասկզբին, երբ հանդես եկավ Կոմիտասը, հայ պրոֆեսիոնալ երաժշտության կայացման շրջանն արդեն ավարտված էր: Անհրաժեշտ էր նոր աստիճանի բարձրացնել ինչպես ժողովրդական երաժշտության, այնպես էլ պրոֆեսիոնալ երաժշտական ստեղծագործության զարգացման աշխատանքը:

Կոմիտասն իր ամբողջ տաղանդն ի սպաս դրեց այս խնդիրների կենսագործման համար: Նա հայ գեղջուկի ստեղծագործությունը բնորոշեց որպես ազգային մշակույթի ամենատիպիկ և ամենակարևոր մասը: Նրա արվեստի հիմքը ժողովրդական (գեղջկական) և հոգևոր (եկեղեցական) երաժշտությունն է, որը ստանում է նոր բովանդակություն ապշեցնելով իր ներգործության արտասովոր ուժով:

Կոմիտասը քաջատեղյակ լինելով և խորն ուսումնասիրելով հայ ժողովրդական երգերն ու պարեղանակները, դրանք դիտարկելով որպես մոնոդիկ երաժշտական նմուշներ, արձանագրում է, որ անցնելով դարերի բովով, XIX դար են հասել ժանրային և մեղեդային բազմազանությամբ: Նա առաջինն էր, որ հենվելով հայ երաժշտության խորն ու բազմակողմանի ուսումնասիրության վրա, առաջ քաշեց հայ երաժշտության ինքնուրույնության կարևոր թեզը և կանխորոշեց ազգային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման ուղիները:

Փարիզի «Անահիտ» հանդեսում տպագրված հոդվածում Կոմիտասը գրում է. «Բազմաձայն երաժշտությունը ոչ թե զանազան ձայների ծեփ է, այլ՝ ստեղծագործություն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել բազմաձայնություն՝ հային հատուկ ոճ ու ոգի, ապա

հետո ընդհանրացման մասին մտածել, որովհետև երաժշտությունն էլ լեզվի պես ունի իր քերականական օրենքները, որոնք զանազան են տարբեր ազգերի համար» (1.):

Կոմիտասի ստեղծագործական ժառանգության փոքրածավալ, բայց շատ ինքնատիպ մասն են կազմում դաշնամուրային երկերը: Բազմաթիվ անգամ անդրադառնալով դաշնամուրի համար գրված իր պիեսներին, կոմպոզիտորը շատ հաճախ անդրադարձել է նույն ստեղծագործությանը՝ անձանաչելի վերամշակելով այն առանձնահատուկ վարպետությամբ և իրեն հատուկ ձեռագրով հնչեցնելով դաշնամուր գործիքը:

Հայ երաժշտության մեջ կարևոր ավանդ են և կարևոր անդրադարձ՝ ազգային պարային մեղեդիների հիման վրա ստեղծված նրա դաշնամուրային «Պարեր» շարքը և «Մանկական նվագներ» փոքրիկ պիեսները:

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի և կոնցերտմայստերական ամբիոնի ընդունվել է տպագրության՝ 21.11.2019 թ. ներկայացրել է հեղինակը՝ 23.11.2019 թ.

Առաջին անգամ Կոմիտասի «Պարեր»-ը հրատարակվել է 1925 թ. Փարիզում. այն իրականացվել է «Կոմիտաս վարդապետի բարեկամների հանձնախմբ»-ի ջանքերով և անվանվել «Հայ ժողովրդական երաժշտություն. Նոր շարք. Տեսար Ա. Պարեր. Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետը»:

Ավելի ուշ Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործությունները հրատարակվել են նրա երկերի լիակատար ժողովածուի 6-րդ հատորում («Սովետական գրող», 1982 թ., Երևան): Տարիներ անց Մեծն Կոմիտասի ծննդյան 135-ամյակի առիթով առաջին անգամ առանձին պրակով դրանք հրատարակվեցին Հայաստանի երաժշտական ընկերության նախաձեռնությամբ և երաշխավորությամբ (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2004 թ.):

Կոմիտասն անփոփոխ պահելով ժողովրդական մեղեդիները, պարզ դաշնավորման միջոցով դրանց տալիս է նոր տրամադրություն, այդ պիեսներին հաղորդում մի այլ բովանդակություն, այդ թեմաները հայտնի են նրա խմբերգային, երբեմն էլ մեներգային ստեղծագործություններից, որոնք ավելի վաղ են գրված եղել:

Կոմիտասի «Պարեր»-ի շարքը կատարողից պահանջում է դաշնամուրը յուրատեսակ հնչեցնելու մի առանձնահատուկ վարպետություն: Առանձին պարեր ոչ միայն վերակենդանացնում են ժողովրդապարային տեսարանների բանաստեղծականությունը, այլև ընկալվում որպես նրբին զգացմունքներ դրսևորող պատումներ: «Պարեր»-ի հիմքում կարծես դրված են ազգային նվագարանների՝ սրինգի, թառի, բլուլի, զուռնայի, դուդուկի, դալիի, մեծ թմբուկի կատարումներից գրառված եղանակներ: Դրանք հենց այդ նվագարանների կամ դրանց տարբեր զուգադրումների ոճով ստեղծած պիեսներ են:



Պարերի շարքը բաղկացած է վեց պիեսից: Դրանց մեջ կան կանացի հեզամազ և տղամարդկանց առնական պարեր:

Կոմպոզիտորը դաշնամուրի համար գրված իր պիեսներով երկու նպատակ է հետապնդել. վերարտադրել հայ ժողովրդական պարերի անկրկնելի քնքշությունը, դրանց կերպարային բովանդակությունը և պահպանել պարեղանակների նախաստեղծ յուրահատկությունը:

Կոմիտասը պարզ և անպաճույճ միջոցների օգտագործմամբ հասել է իր նպատակների իրագործմանը,

ստեղծել է դաշնամուրային պարեր, որոնք աչքի են ընկնում ոճական անադարտությամբ, հենքի պարզությամբ և վառ կերպարայնությամբ:

Կոմիտասի «Մանկական նվագներ» ժողովածուի փոքրիկ պիեսները հեղինակը գրել է Կ. Պոլսում ապրած տարիներին (1910-1912 թթ.): Կոմիտասը Կ. Պոլսում երաժշտության տեսություն և դաշնամուրի մասնավոր դասեր էր տալիս: Ահա այս դասերի համար էլ նա ստեղծում է «Մանկական նվագները»՝ նրանցում ներառելով ժողովրդական պարերի և գեղջկական երգերի երաժշտական նյութը:

Ինչպես նշում է երաժշտագետ Ռ. Ա. Աթայանը, «Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործությունները նրա երաժշտական ժառանգության համեմատաբար փոքրածավալ, բայց խիստ ինքնատիպ մի բաժինն է: Այդ ինքնատիպությունը դրսևորված է արդեն իսկ նրանով, որ Կոմիտասը դաշնամուրի արտահայտչական հնարավորությունները հիանալի օգտագործել է՝ մասնավորապես ժողովրդաերաժշտական գաղափարները յուրօրինակ կերպով մարմնավորելու համար» (2. էջ 8-9):

Հետաքրքրական է այն փաստը, որ գրեթե նույն ժամանակահատվածում հունգարացի կոմպոզիտոր Բելա Բարտոկը, Կոմիտասի նման նպատակ է հետապնդել իր դաշնամուրային մանկական պիեսներում ներմուծել ազգային և ժանրային տարրեր:

Ինչպես Կոմիտասը, այնպես էլ Բ. Բարտոկը նույն մեկնաբանությունն է տալիս իր մանրանվագներին, ասելով՝ «Թող սովորողներն ուսման առաջին տարիներին ունենան դաշնամուրային պիեսներ, որոնցում ժողովրդական անպաճույճ պարզությունը զուգորդված լինի նրանց մեղեդիական և ռիթմական հատկանիշներով» (3.):

Կարելի է զուգահեռներ անցկացնել ինչպես Կոմիտասի «Մանրանվագների» և Բարտոկի «Մանուկներին» կոչվող ժողովածուների, այնպես էլ Կոմիտասի «Երեք փոքրիկ պոլիֆոն շարանվագների» և Բարտոկի «Միկրոկոմոս» տետրերում զետեղված պիեսների միջև:

Կոմիտասն այս պարզագույն երկձայն կանոնների օգնությամբ փորձել է զարգացնել երեխաների պոլիֆոնիկ ընկալունակությունը: Ի տարբերություն Բ. Բարտոկի, Կոմիտասի մանրանվագները համեստ ստեղծագործություններն են, պարզ ու մատչելի՝ երեխայի կողմից ընկալվելու համար:

Կոմիտասի դաշնամուրային մանրանվագները, որոնք անմիջապես հաջորդում են նրա «Պարեր»-ին, առանձնահատուկ են հատկապես նրանով, որ կատարմանը տալիս են կերպարային բնութագրում: Հեղինակն օգնում է մանկավարժին, իհարկե նաև կատարողին, իր ցուցումներով, օրինակ՝ նա գրում է ոչ միայն լատիներեն, այլ նաև հայերեն՝ թելադրելով առավել ճշգրիտ արտահայտելու իր մտահղացումը. օրինակ՝ «Քիչ ավելի արագ, հեռվից», «Նույն տեմպով, համարձակ» կամ «Հպարտորեն, ցնծությամբ»՝ կարծես կատարողին թելադրում կամ հուշում է կատարման ճշգրիտ տեմպն ու բնույթը:

Դ ա շ ն ամ ուր ա յ ի ն ս տ ե ղ ծ ա գ ո ը ծ ու թ յ ա ն ք ն ո թ ա գ ի ը



Գեղջկական երաժշտության վրա հիմնված իր երկերը Կոմիտասը Կ. Պոլսում ցուցադրեց իր կողմից կազմակերպած համերգներում՝ նպատակ ունենալով հայեցի պահել Կ. Պոլսի երաժշտական կյանքը, թե՛ իր պրոֆեսիոնալ, և թե՛ ժողովրդական հատվածներով, քանի որ միջավայրի եռանդուն երաժշտական կյանքում թույլ էր դրսևորված մի կարևոր հատկանիշ՝ «գտարյուն» ազգային ոճի զգացողությունը:

Հայ գեղջկական պարերին նվիրված իր աշխատություններում Կոմիտասն այդ պարերի շարժման բնույթը նշում է՝ «նուրբ և քնքուշ», «լուրջ և վայելույշ», «արխայիկ», «հինավուրց», «ավանդական» դիպուկ բնորոշումներով: Գիտական ուսումնասիրություններում պարը դիտելով որպես բաղադրական արվեստի արգասիք, Կոմիտասն իր ստեղծագործական ձեռնարկներում հաստատեց այն իրողությունը, որ պարերգերն ու պարեղանակներն ունեն նաև բուն պարից անկախ, ինքնուրույն արժեք:

Երաժշտագետ Ռ. Ա. Աթայանի բնորոշմամբ՝ դաշնամուրային մանկական մանրանվագները՝ ինչպես վերնագրել է հեղինակը «Տասներկու պիես ժողովրդական թեմաներով», կարող են հնչել իբրև մի ամբողջական շարք կամ կատարվել յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Ինչպես վերևում նշվեց, Կոմիտասի ավելի վաղ գրված խմբերգերի կամ մեներգերի թեմաները և դաշնամուրային մանրանվագների մայր մեղեդիները հեղինակը պահպանում է անփոփոխ:



Այս դեպքում նրանք ստացել են նոր դաշնակում, երբեմն նաև նոր տրամադրություն և մեկնաբանություն: Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործություն-

ներն անկասկած ունեն ուսուցողական նպատակ: Այդ իսկ պատճառով Կոմիտասն իր մշակած ժողովրդական եղանակները ներդաշնակել է հնարավորինս պարզ, որպեսզի դրանք հատկապես սկսնակ դաշնակահարների համար մատչելի լինեն: Մյուս կողմից, եթե պիեսներին մոտենանք մեթոդական խնդիրների տեսանկյունից, կատարող-դաշնակահարին առաջարկվում է նաև դաշնամուրային նվագի տեխնիկական միջոցների մի բազմազանություն, որն իր հերթին սկսնակ դաշնակահարների համար շահեկան է:

Անշուշտ էական է և այն, որ պիեսներն ունեն տարբեր աստիճանի բարդություն, հետապնդում են տեխնիկական որոշակի խնդիրներ և այս բոլորն առավել բարձրացնում է մանրանվագների գործնական արժեքը: Պիեսներում իրար զուգորդում են սահուն կանտիլենան ու կտրուկ ստակկատոն, հոմոֆոն և պոլիֆոնիկ բազմաձայնության տարրերը, «մանրանախշ» և ակորդային տեխնիկան, օգտագործում է ձեռքերի խաչաձևում և յուրահատուկ պեդալիզացիա:

Կոմիտասի այս պիեսներն ունեն խիստ արտահայտված ազգային երանգ, և իհարկե որոշակի գեղարվեստական արժեք: Եվ շատ կարևոր է, ոչ միայն դաշնակահար ուսանողների, այլև երաժշտական դպրոցների սկսնակ դաշնակահարների մեջ սերմանել ազգային մտածողությունը և ճանաչողականությունը, քանի որ երաժշտությունը մատաղ սերնդին ներշնչում է գեղեցիկի զգացողություն և ուղղորդում նրա միտքը դեպի հոգևոր արժեքներ: Ուրեմն երաժշտության միջոցով կարելի է դաստիարակել հայրենասիրություն, կամք, կենսասիրություն:

Կոմիտասի ստեղծագործություններն ունենալով խիստ ազգային մտածողություն, իրենց ուրույն տեղն ունեն համաշխարհային պրոֆեսիոնալ երաժշտության գոհարների շարքում:

Կոմիտաս ազգագրագետ, գիտնական, մանկավարժի մեծագույն ծառայությունը հայ երաժշտության անդաստանում ազգային պոլիֆոնիկ սկզբունքների հիմնավորումն էր: Դա էր պատճառը, որ տաղանդավոր կոմպոզիտորը հայ ժողովրդական երգի ներդաշնակմանը մոտենում էր բացառիկ լրջությամբ:

Ապացույցը՝ Մեծն Կոմիտասի ստեղծագործական ամբողջ ժառանգությունը:

Ծ Ա Ն Ո Ց Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. /Անահիտ հանդես, Փարիզ, 1907 թ., N 1-2: /Anahit handes, Pariz, 1907 th, N 1-2.
2. Կոմիտաս, Երկերի ժողովածու, 6-րդ հատոր, (Առաջաբան՝ Ռ. Աթայան), Եր., Սովետական գրող, 1982 թ.: Komitas, Yerkeri jvoghvovatsu, 6-rd hator, (Ar'ajaban` R. Atayan, Yer., Svovetakan grvogh, 1982 th.
3. Ույֆալուշ Յ., Բելա Բարտոկ, Բուդապեշտ, 1971 թ.: Uyfalush Y, Bela Bartok, Budapesht, 1971 th.

Բանախի-բառեր. երաժշտական կրթություն, դաշնամուրային պարեր, պիես, Կ. Պոլիս, մանրանվագներ, Փարիզի «Անահիտ» հանդես, կոմիտասյան տերմինաբանություն:

Ключевые слова: музыкальное образование, фортепианные танцы, пьеса, Константинополь, миниатюры, французский журнал "Анаhit", комитасовская терминология.

Keywords: musical education, piano dances, play, Constantinople, miniatures, Paris journal "Anahit", Komitas terminology.

Տեղեկություններ հեղինակի մասին. ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ ԴԱՎԻԹ (ծ. 1972թ. ք. Երևան) ավարտել է 1990-ին Պ. Ի. Չայկովսկու անվան ՄՄԵԿ (Ի. Գրիգորյանի դասարան), 1995-ին Կոմիտասի անվ. ԵՊԿ-ի դաշնամուրային ֆակուլտետը (Բ. Ծատուրյանի, այս պրոֆ. Վ. Ահարոնյանի դասարան) և 1997-ին ասիական տրամաբան (պրոֆ. Ա. Բոգդանյան): Դասավանդում է 1996-ից ԵՊԿ-ում Մասնագիտական դաշնամուրի և երգեհոնի թիվ 2-րդ ամբիոնում պրոֆ. Ա. Բաբախանյանի դասարանում ասիստենտ, 1999-ից՝ նույն ամբիոնում դասախոս, 2002-ից նաև Կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնի դասախոս, որցենտ (2008 թ.): 2005-ից հանդիսանում է նաև Կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնի քարտուղար: Հեղինակ է հոդվածների. «Հայ դաշնամուրային երաժշտության պատմության էջերից», //Երաժշտական Հայաստան, 3-4 (10-11) 2003 թ. էջ 47-49, «Հայկական դաշնամուրային ստեղծագործության պատմության էջերից», //Երաժշտական Հայաստան, 3 (22) 2006 թ. էջ 80-82), 2008 թ. մայիսին մասնակցել է Գյումրիում կայացած «Մշակույթների երկխոսություն» հայ-ռուսական մշակութային կապեր. միջազգային գիտատղովին «Պատասխաններ հայ և ռուս մշակույթների անդաստանից», գիտատղովին նյութերի ժողովածու, «Ռուսաստանի անցած ճանապարհը և դաշնամուրային նվագակցության դերը հայ կոմպոզիտորների երկերում», //Երաժշտական Հայաստան, 2 (51) 2016 թ., էջ 17-19: Նա նույնպես ժողովածուների և ուսումնամեթոդական ձեռնարկների կազմող և խմբագիր է՝ «Կոմիտասի դաշնամուրային մանկական մանրանվագների գեղարվեստական և մանկավարժական որոշ առանձնահատկությունների մասին» ուսումնամեթոդական ձեռնարկ (թ.), «Արամ Խաչատրյան. Համերգային երեք արիա» ժողովածու, Եր., Աստղիկ գրատուն հրատ., 2003 թ., «Կոմիտաս. Դաշնամուրային պարեր» Պրակ 1 ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2004 թ., «Կոմիտաս. Դաշնամուրային մանկական մանրանվագներ», Պրակ II ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2004 թ., «Կոմիտաս. Մեներգերի ընտրանի» ժողովածու, Եր., 2005 թ., «Կոմիտաս. Հոգևոր սաղեր, երգեր, մեներգեր» ժողովածու, Եր., ԵՊԿ հրատարակչություն, 2006 թ., «Կոմիտասի դաշնամուրային մանկական մանրանվագների գեղարվեստական և մանկավարժական որոշ առանձնահատկությունների մասին» (ուսումնամեթոդական ձեռնարկ), Եր., Կոմիտաս, 2008 թ., «Դաշնամուրային նվագակցության դերը հայ կոմպոզիտորների ռոմանսներում», ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., Վան Արյան, 2011 թ., «Արամ Խաչատրյան. Վերջին ստեղծագործություններ» ժողովածու, Եր., Աստղիկ, 2013 թ., «Նվերգային Պարտիտուրի ընթերցում դաշնակահար-կոնցերտմայստերների համար» (ուսումնամեթոդական ձեռնարկ), Եր., Ամրոզ Գրուպ, 2015 թ.:

Сведения об авторе: КАЗАРЯН ЗАРУИ ДАВИДОВНА (род. в 1972 г., Ереван). В 1990 году поступила в среднюю музыкальную школу имени Чайковского (класс И. Григорян). В 1995 году поступила в ЕГК имени Комитаса на фортепианное отделение (класс И. Цатурян, далее - проф. В. Агароняна). В 1997 году поступила в аспирантуру ЕГК и окончила в 1997 году (класс проф. А. Богданян). С 1996 году поступила на кафедру спец фортепиано в класс А. Бабаханяна как ассистент, с 1999 — как преподаватель на той же кафедре. С 2002 года преподает также на кафедре концертмейстерской подготовки. В настоящее время доцент кафедры концертмейстерской подготовки. С 2005 года также является секретарем на той же кафедре. Многие ее выпускники сегодня работают во многих музыкальных школах и колледжах как в Армении, так и во многих городах России и за рубежом Является автором учебно-методических пособий и статей: Страницы истории армянской фортепианной музыки., //Музыкальная Армения 3-4 (10-11) 2003 С. 47-49; Страницы истории армянских фортепианных произведений., //Музыкальная Армения 3-4 (22) 2006 С. 80-82; В мае 2008 года участвовала в международной конференции "Диалог культур: отрывки из армяно-русского культурного наследия", сборник статей конференции; "Роль аккомпанемента и провиденный путь романса в сочинениях армянских композиторов", //Музыкальная Армения 2 (51) 2016 С. 17-19. Составитель и редактор нотных сборников и учебно-методических работ: "Некоторые художественно-педагогические особенности фортепианных миниатюр для детей Комитаса", 2 вып., Ер.: Найка Издательство АН РА, 2004; Комитас. Избранные сольные песни, / Ер., 2005; Комитас Духовные таги, песни, сольные песни, Ер.: Издательство ЕГК, 2006; «О некоторых художественно-педагогических особенностях фортепианных миниатюр для детей (Методическое пособие), Ер.: Комитас, 2008; Роль аккомпанемента в романсах армянских композиторов, учебно-методическое пособие, Ер.: Ван Арьян, 2011; Арам Хачатурян. Сборник вокальных произведений, Ер.: Астхик, 2013; Чтение хоровых партитур (для пианистов-концертмейстеров)., Ер.: Амроц груп, 2015.

Information about an author: GHAZARYAN ZARUHI DAVID (born in 1972. in Yerevan). In 1990 she entered Secondary Music School after P. I. Tchaikovsky (class I. Grigoryan). In 1995 she entered YSC the piano department (class I. Tsaturyan, then prof. V. Aharonyan). In 1997 she started graduate studies at YSC and graduated in 1997 (class prof. A. Bogdanyan). In 1996 she joined the Department of Piano Specialists in the class of A. Babakhanyan as an assistant, since 1999 she is a pedagogue in the same department. Since 2002 she has also taught in the department of concert training. She is currently a docent in the department of concert training. Since 2005 she has also been secretary in the same department. Many of its graduates today work in many music schools and colleges both in Armenia and in many cities of Russia and abroad. She is the author of teaching aids and articles: Pages of the history of Armenian piano music., //Musical Armenia 3-4 (10-11) 2003 pp. 47-49; Pages of History of Armenian Piano Works., //Musical Armenia 3-4 (22) 2006 P.. 80-82. In May 2008 she participated in the international conference "Dialogue of Cultures: excerpts from Armenian-Russian cultural heritage," a collection of articles of the conference; "The role of Accompaniment and the path of romance in the works of Armenian composers", //Musical Armenia 2 (51) 2016 P. 17-19. Author and editor of note collections and educational - methodological works: "Some artistic and pedagogical features of piano miniatures for children of Komitas," 2 issues, Yer.: Science of Publishing RA AS, 2004; Komitas. Author and editor of note collections and educational - methodological works: "Some artistic and pedagogical features of piano miniatures for children of Komitas," 2 issues, Yer.: Science of Publishing RA AS, 2004; Komitas. selected solo songs, /Er., 2005; Komitas Spiritual Tags, Songs, Solo Songs, Yer.: YSC Publishing House, 2006; "On Some Artistic and Pedagogical Features of Piano Miniatures for Children (Methodical Manual), Yer.: Komitas, 2008; The Role of Accompaniment in the Romances of Armenian Composers, Educational and Methodical Manual, Yer.: Van Aryan, 2011; Aram Khachaturian. Collection of vocal works, Yer.: Astghik, 2013; Reading of choral scores (for pianists and concertmaster)., Yer.: Amrodz Group, 2015.

Րեզյումե

Պիանետկա, концертмейстер, доцент ЕГК Заруи Давидовна Казарян. - «Некоторые аспекты национальных особенностей в фортепианных сочинениях Комитаса».

В статье автор рассматривает роль и значение Комитаса как композитора и конкретно анализирует его фортепианные сочинения, основываясь на изданиях "Танцев" Комитаса в 1925 году в Париже, далее - в 6-м томе Полного собрания сочинений, изданного в 1982-м году в Ереване. Кроме "Танцев" автор анализирует "Детские наигрыши", сочиненные в Константинополе в 1912-1913 гг. Дается также и сравнительный анализ с творческим подходом к написанию произведений для детей Б. Бартока ("3 маленьких полифонических цикла" с некоторыми пьесами из цикла "Микрокосмос", "Детские наигрыши" - с циклом "Детям").

Summary

Pianist, concertmaster, pedagogue of YSC Zaruhi David Ghazaryan. - "Some manifestations of national features in piano works of Komitas".

In the article the author considers the role and importance of Komitas as a composer and specifically analyzes his piano works, based on the editions of Komitas's "Dances" in 1925 in Paris, further - in the 6th volume of the Complete Collection of Works published in 1982 in Yerevan. In addition to "Dances" the author analyzes "Children's Play" composed in Constantinople in 1912-1913. A comparative analysis is also given with the creative approach to writing works for children by B. Bartok ("3 small polyphonic cycles" with some plays from the cycle "Microcosmos", "Children's Play" - with the cycle "Children").

АРШАК РУБЕНОВИЧ ГАДЗИЯН

Хормейстер, артист хора, композитор

МОСКОВСКИЙ АРМЯНСКИЙ КАМЕРНЫЙ ХОР: ПАТАРАГ КОМИТАСА

Автор написал статью, опубликованную в программке, по поводу исполнения Московским армянским камерным хором Патарага Комитаса в юбилейном концерте к 10-летию коллектива.

Среди вершин армянской культуры – псалмов Маштоца и Сюнеци, шараканов Шнорали, "Книги скорбных песнопений" Григора Нарекаци, "Айренов" Кучака и песен Саят-Новы Патараг Комитаса является одним из высочайших проявлений Божественного начала на Земле. И как это не парадоксально, одновременно с этим он относится к такого рода произведениям, которые для многих остаются незамеченными. Для остальных – существою, воспринимаемой в течение всей жизни поэтапно, можно сказать поэтично, формирующей на самом глубоком уровне душу и плоть человека.

При всей ясности музыкальной ткани, читаемости ее структуры глубинное содержание Патарага не является непосредственно воспринимаемым. Он почти лишен очевидных, видимых ориентиров, помогающих проникнуть в его суть. "Доступ" имеют только те, кто обладает реальным духовным опытом и знанием. В ином случае остается только его красота и гармоничность.

Как музыкальное произведение Патараг исполняется крайне редко. В церковном богослужении он также почти не применяется. Иногда используются отдельные части, реже целые отрывки.

Обращают на себя внимание устойчивые попытки исполнения Патарага при помощи переложений на иные составы, естественно, не предусмотренные автором. Это является свидетельством непонимания даже в среде музыкантов недопустимости искажения высокого и, естественно, хрупкого мира акустической культуры этого произведения. Отсутствие, либо искажение его в данном случае означает невозможность полного построения духовного здания Патарага (иначе вы получите совершенно иное произведение), не говоря уже о том, что исполнение в том составе, который был замыслен автором – мужской многоголосный состав *a cappella* является крайне сложной с про-

фессиональной точки зрения задачей.

На это указывал Роберт Аршакович Атаян – выдающийся ученый, по праву считающийся в современном армянском музыковедении ведущим исследователем творчества Комитаса.

Исключением нужно признать работу Заре Саакянца (переложение для камерного струнного оркестра) и то только–лишь как благородную миссию спасения этого произведения от полного забвения, за что мы будем всегда благодарны этому замечательному музыканту.

Комитас более всего известен как собиратель народного творчества, Обработки народных песен поставили его в ряд классиков мирового значения. В этом, на первый взгляд неприязательном жанре, ему удалось стать создателем, так называемого, "комитасовского" стиля, открывателем нового мышления, оказавшего огромное – фундаментальное воздействие на формирование современной армянской музыки и способствовавшего возникновению многих явлений музыкальной культуры XX века.

Комитас "увидел" в первоисточнике народного мелоса изначально заложенные духовные категории, которые он сумел выявить и воплотить казалось бы неожиданным образом. Комитас не создавал для обрабатываемого материала интонационной или гармонической или какой–либо иной симметрии. Напротив. Он помещает музыкальную ткань в асимметричную (по отношению к исходному материалу) звуковую среду, проецируя одновременно различные измерения.

Каждое произведение, созданное Комитасом в этой области, имеет совершенно самостоятельную "траекторию" раскрытия и, если так можно выразиться, бесконечного движения в духовных сферах (в этом смысле крайне интересен феномен зримого, активно–го изменения "материи" восприятия музыки Комитаса во времени). Главным итогом является возникновение многомерного, незамкнутого смыслового прос-

«Երաժշտական Հարատան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Սվետլանա Կորյունի Սարգսյանի ներկայացրել և ընդունվել է տպագրության՝ 17.06.2019 թ.

транства. И как будто бы простое, земное начало получает невероятную, космическую глубину и бесконечность. Этот опыт Комитаса является без какого-либо преувеличения совершенно уникальным для всей нашей цивилизации. Основываясь на нем, мы убедились не только в существовании духовного пространства, но и получили возможности изучения его.

За таким феноменом многим не удалось обратиться должного внимания на главное и, безусловно, высшее достижение творчества Комитаса – его Патараг, в котором он делает следующий гениальный шаг.

В Патараге Комитас суммирует весь духовный опыт армянской христианской культуры, имеющей равный самому христианству срок жизни. В нем одновременно воплощены совершенно разные, самостоятельные по отношению друг к другу смысловые пласты тех сущностей, которыми на протяжении семнадцати веков жил и живет ныне армянский народ. Здесь сосредоточилась вся боль и кровь армянского народа, которой он "оплачивал" в течение всего этого времени принятие света Спасителя, Все, что создавалось великими предшественниками Комитаса, стало "телом" Патарага: ничто не оказалось вне его, так как Комитас основывал Патараг на сути их духовных достижений, благодаря чему это произведение отличается в высшей степени благородный и цельный музыкаль-

ный стиль. Здесь же незримо присутствует видение Комитаса неминуемой Голгофы, к которой был приведен армянский народ.

Патараг Комитаса – это один из главных итогов духовной работы армянского народа за всю его многотысячелетнюю историю, включая и дохристианский его опыт.

Есть и еще одна "особенность" произведения – его главная суть. В нем зримо присутствие Божественного начала, его духовное действие по отношению к нам – людям. Наличествует не только наше – человеческое отношение к Богу, а также и отношение Бога к нам. Это главное отличие Патарага Комитаса от множества Литургий различных авторов, включая и самых великих. Я убежден, то, что сделал Комитас ни до него, ни после не смог сделать, и не сделал никто. Комитас сделал для нас мир Божьего космоса абсолютной и неоспоримой реальностью, воспринимаемой не рациональным способом или эмоционально, а духовно.

Это произведение является высшим даром армянского народа миру. Да послужит он во спасение всех почивших и ныне живущих!

Материалы предоставлены профессором ЕГК С. К. Саркисян

Բանալի-բաներ. Շունիտաս, Պատարագ, Ռոբերտ Աթայան, Խոզևոր վորճառություն, քրիստոնեական մշակույթ, աստվածային սկիզբ:

Ключевые слова: *Комитас, Патараг, Роберт Атаян, духовный опыт, христианская культура, Божественное начало.*

Keywords: *Komitas, Liturgy, Robert Atayan, Spiritual Option, Christian Culture, Divine Principle.*

Տեղեկություններ հեղինակի մասին. ՀԱՉԻՅԱՆ ԱՐՇԱԿ ՌՈՒԲԵՆԻ (ծ. 8.9.1958 թ.): Ավարտել է՝ 1981-ին ԵՊԿ կոմպոզիտորական բաժինը (սրբ. Է. Մ. Միրզոյանի դասարանը): Մոսկվայի հայկական կամերային երգչախմբում կատարում է երկրորդ տենորի երգաբաժինը: Երգչախմբի համար նա կատարել է մի շարք հայկական հոգևոր և ժողովրդական երգերի մի շարք մշակումներ՝ Գրիգոր Նարեկացու (10-րդ դար) «Հատուն-հատուն» մեներգիչի (սուրանո) և խառը երգչախմբի համար *a cappella* և «Հախկը» մեներգը (սուրանոյի) և խառը երգչախմբի համար *a cappella*, Ներսես Շնորհաբար (XII դ.) «Առավոտ Լուսո» սուրանո մեներգիչի և խառը երգչախմբի համար *a cappella*, միջնադարի Անիայտ հեղինակի «Համօրէն մնջեցեղոց» մեներգիչի (տենորի) և տղամարդկանց երգչախմբի համար *a cappella*, Ներսես Շնորհաբար 5 շարականի մշակումները *a cappella* երգչախմբի համար, «Տիրամիրն» մեներգիչի (սուրանո) և խառը երգչախմբի համար *a cappella*, հայկական ժողովրդական երգերի՝ «Անտունի», «Առաքել Մուշեղ», «Դէն յաման», «Երագ», «Չարքերի», «Լատ», «Կոունկ», «Ծիծեռնակ»: Նա հեղինակ է նաև 3 սիմֆոնիայի, սիմֆոնիկ նվագախմբի համար մի շարք երկերի, ստեղծագործում է կամերային-գործիքային ժանրերում, վոկալ երաժշտության: Ունի Սայաթ-Նովայի 4 երգի մշակումներ տենորի մեներգիչի և *a cappella* երգչախմբի համար, «Աղոթք» բարձր սուրանոյի և *a cappella* երգչախմբի համար: Կոմպոզիտորների միության անդամ է (1986):

Сведения об авторе: ГАДЗИЯН АРШАК РУБЕНОВИЧ (род. 8 сентября 1958). В 1981 году окончил композиторское отделение (класс проф. Э. М. Мирзояна) ереванской государственной консерватории имени Комитаса. В московском армянском камерном хоре исполняет партию второго тенора. Для хора им сделан ряд обработок армянских духовных песнопений и народных песен: Григор Нарекаци (X век) "Авун-авун" для сопрано соло и смешанного хора *a cappella*; Григор Нарекаци "Авик" для сопрано соло и смешанного хора *a cappella*; Нерсес Шнорали (XII век) "Аравот лусо" для сопрано соло и смешанного хора *a cappella*; Неизвестный средневековый автор "hАморен ннджецеолоц" ("Поминование усопшим") тенора соло и мужского хора *a cappella*; Пять шараканов Нерсеса Шнорали в обработке для хора *a cappella*; "Тирамайрн" ("Плачь Богородицы") для сопрано соло и смешанного хора *a cappella*. Обработки армянских народных песен: Антуни, Аракел Мушег, Дле яман, Ераз (Сон), Зартнир, Лао (Проснись, сынок), Крунк (Журавль), Цицернак (Ласточка). Сочинения: Три симфонии, ряд произведений для симфонического оркестра, камерно-инструментальных жанров, вокальной музыки, Четыре песни Саят-Новы в обработке для тенора соло и хора *a cappella*; "Ahotk" ("Молитва") для высокого сопрано и хора *a cappella*. Член Союза композиторов (1986).

Information about an author: GADZIYA ARSHAK RUBEN (born 8 September 1958). In 1981 he graduated from the composer department (class of prof. E. M. Mirzoyan) YSC. In the Moscow's Armenian chamber choir performs the party of the second tenor. For chorus he made a number of processings of the Armenian spiritual chants and national songs: Grigor Narekatsi (X century) "Havun-havun" for a soprano solo and the mixed chorus a cappella; Grigor Narekatsi "Avik" for soprano solo and mixed choir a cappella; Nerses Shnorhali (12th century) "Aravot luso" for soprano solo and mixed choir a cappella; Unknown medieval author "Hamoren njetcelotc" ("Remembrance of the Dead") tenor solo and male choir a cappella; Nerses Schnorali's five characans in processing for the a cappella choir; "Tiramayrn" ("Lament of Virgin") for soprano solo and mixed choir a cappella. Treatments of Armenian folk songs: Antuni, Ara-ke, Musheg, Dle yaman, Eraz (Dream), Zartnir, Lao (Wake up, son), Krunk (Crane), Tsitsernak (Swallow). Writings: Three symphonies, a number of works for symphony orchestra, chamber-instrumental genres, vocal music, four songs of Sayat Nova in processing for tenor solo and choir a cappella; "Ahotk" ("Prayer") for the high soprano and choir a cappella. Member of the Union of Composers (1986).

Ամփոփում

Խմբավար, երգչախմբի արտիստ, կոմպոզիտոր Արշակ Ռուբենի Հաջիյան. - «Մոսկովյան կամերային երգչախումբ. Կոմիտաս՝ Պատարագ»:

Բանաստեղծի պատկերմամբ պոեզիան ծառի ճյուղերում ապրող թռչուն է, դեմքի վրայով սահող ստվերը, ամպը երկնքում, այն ոչ թե արտաբերված բառն է, այլ բառերի միջև եղած լռությունը, փողոցով անցնող երկու պատահական անձանքների միջև եղած կապը, որոնք գուցե իրար այլևս չեն տեսնի: Պոեզիա է այն ամենը, ինչ շարժման մեջ է և շարժումն է, որ ծնում է պոեզիա, որը «կյանքի արտահայտությունն է, կամ, ավելի լավ է ասել՝ հենց կյանքն է: Ավելի՛ն՝ պոեզիայի մեջ կյանքն ավելի է կյանք, քան բուն իրականության մեջ» (2. էջ 20):

Հ. Էդոյանի պոեզիայում տիրում է բանաստեղծական տողի անակնկալ և ինքնատիպ շրջադարձը, ինտոնացիայի բացարձակ եզակիությունը, բառի անձեռակերտ թափանցելիությունը: Ինտոնացիայի վերածված բառը կյանքում այն շարժումն է, որով պայմանավորված է կեցության հավիտենականությունը:

Կան բառեր, որոնք բանաստեղծության մեջ չեն գործածվում, սակայն առաջացնում են մտապատկերներ, ենթադրում իմաստներ.

Թեև մենք չենք տեսնում աստղերը ցերեկով,
բայց չէ՞ որ նրանք կան նաև ցերեկվա մեջ:

(«Վերևն ու ներքևը») (3. էջ 762)

Հ. Էդոյանը բառն ազատում է նյութից և թողնում նրան նախաստեղծ վիճակում, կարևորելով նրա զգացմունքահոգեբանական նրբերանգը, գաղափարական նշանակությունն ու փիլիսոփայական ընդհանրացումները: Նրա պոեզիային բնորոշ են նաև խորհրդանշանականացումն ու շարժունությունը: Կարևոր է ոչ թե պատկերի իրեղեն, առարկայական կողմը, այլ նրա մետաֆիզիկական վիճակը, բացարձակ զգայունությունը, պարադոքսալությունը, «մտատեսությամբ եղելության սկիզբը դիտելը» (ընդգծումը տողերիս հեղինակի. - Հ.Ձ.) (7. էջ 56), շարժունությունը, որը հանգեցնում է կատարելության: Սա հոգևոր լույսի շողարձակումն է, բանաստեղծական տեքստի պոտենցիալ վիճակը, մետալեզուն է երևույթների մակարդակում, որը վերածվում է բառերի ուղղակի զգացմունքայնության՝ թաքնված ենթագիտակցականի խորքերում: Մետալեզուն հանդես է գալիս որպես պայման, որն ապահովում է ամբողջական մտքի արտահայտումը՝ ասված խոսքերի սահմաններում: Էդոյանական խոսքը համատեքստային է, որն իր մեջ կրում է հավերժականության ու անսահմանության խորհուրդը: Այն կառուցված է հիերարխիկ սկզբունքով. սպանյութականացված է և վերածված բառ-ինտոնացիայի չարտահայտվածի սահմանագծին, կապված բառային պատենչի հակառակ կողմում գտնվող համատեքստին՝ ազատ տարածությանը: Էդոյանի համար կարևոր է ոչ թե պատկերավորությունը, այլ զգայական-զգացմունքային ապրումների շուրջ ծավալվող խոհը, մտքի ներթափանցումները: Այս յու-

րահատկությունն է նրա լիրիկային հաղորդում հոգեբանափիլիսոփայական բնույթ և նրա մտածողությունն օժտում առանձնահատուկ ոճական ելևէջներով:

«Պոետի լեզվական կառուցվածքը նրա աշխարհի մոդելն է, ազատագրված պատահականություններից և բուրր ավելորդ կողմերից» (4. էջ 272): Էդոյանի ինքնատիպությունը նրանում է, որ կարողանում է ընթերցողին տանել լռության աշխարհը և մասնակիցը դարձնել նրանց խորքերում թաքնված տարերքի արարմանը, որտեղ հնչյունի, խոսքի և իմաստի երրորդության բանաձևում ծնվում է բանաստեղծությունը.

Ճանապարհը հին էր, պայուսակը մաշված,
շենքը հեռու և գորշ,
նստարանի վրա սպիտակ թղթեր էին,
մաքուր, երկար մատներ,
մազերի առատություն,
խոստովանություն,
վերջալույսի մեջ,
շարժում՝ հանուն շարժման:

(«Մակություն») (3. էջ 60)

Հենրիկ Էդոյանի քնարերգական ստեղծագործությունը ավանդույթի, համընդհանրության յուրովի ընկալում է, սրբագործված անմահություն և տիեզերածավալ խորություն, դեպի «Աղօթք հուսատացելոց» ավանդություն, միֆական հնություն և նորօրյա թարմություն: Նրա քնարերգության մեջ լավում է համընդհանուրի ձայնը, զգացվում նախամարդու խոսքի թրթռացող արարչական դողը: Նրա քնարերգական արվեստի հոգեբանական կառուցվածքն էկզոթրիկական տիեզերաբանությունն է, իսկ ուղղորդվելը՝ հնչյունային սկզբնապատճառներից ծնված մտքի հիմքը, հայացք բարձրացնող մեղեդին է և հավատ ներշնչող ճշմարտությունը: Հ. Էդոյանի ցանկացած բանաստեղծություն ինքնադիտարկման, ինքնաճանաչման և սեփական արմատներին անդրադարձնալու փորձ է:

Բանաստեղծի հնչյունային արմատները սերում են տիեզերածավալ լուսակիր այն աղբյուրից, որոնք վերածվելով այլքի կամ մասնիկի, հնչյունային ընկալման միջոցով վերափոխվում են նախամտքի և զգացմունքային նյութի, նրանց էներգետիկական խոստացումները վերածելով ռիթմային-բառային մտքի: Նախաիմաստը նյութականացնելով արարվել են բառեր, որոնք չեն անցել ժամանակի պրիզմայի միջով, չեն պարզեցվել, միանշանակ չեն կապվել փոխաբերության հետ, դրանով իսկ բացառելով ստեղծարար ինտելեկտուալ էներգիայի միջոցով գործադրված ազդեցությունն ու սկզբունքային բացատրելիությունը, թողնելով բառը բաց՝ գոյության նախազգացողությունը գիտակցելու և գերհոգու աղբյուրի հետ հաղորդակցվելու համար: Բառերում Էդոյանը առաջնորդվում է բառարմատով, նա հետևողականորեն վերականգնում է բառերի ներքին ձևը:

Բանաստեղծն է «բնության գաղտնիքների հավատարմատարը, որը տեսնում է երկնի և երկրի, բնության և մարդկային ոգու՝ միմիայն իր համար բացված գաղտնիքները: Բայց երբ նա գտնվում է երկրային սովորական վիճակում՝ նա մարդ է, սովորական մարդ <...>, որը միշտ պատրաստ է արձագանքելու իր հայրենիքից՝

երկնքից իրեն կոչող ձայնին» (2. էջ 29):

Որքան սկիզբն է սուրբ, նույնքան սուրբ է վերջը, որքան Աստծո Խոսքի առաջին բառն է սուրբ, այնքան սուրբ է նաև նրա վերջին բառը:

Դա ուժ է և ոչ նախադասություն:

Ո՞վ է հուշում քեզ քո խոսքն ու լուրջությունը:

Դեմքդ ներքև թեքիր. թե ոչինչ չտեսնես, հենց դա է՝ անհունը:

(«Եվ վերջը, և սկիզբը») (6. էջ 38)

Որքան էլ արտասովոր թվա, միևնույն է, աննկատաբար լիությունը, թաքնախորհուրդ մտքերը, ինչպես և բացարձակամետությունը Հ. Էդոյանի համար դառնում են ստեղծագործելու սկզբունք: Նա գիտակցաբար ձրգտում է վերացականացմանը և բացարձակականացմանը, գիտենալով, որ երևակայությունն անտեսանելիի գոյության արտահայտումն է, ներքին հրաշագործության արդյունքը:

Հենրիկ Էդոյանը չի մշակում բառերը. կարևորելով բառի ինտոնացիան, նրա հուզադաշտը, բանաստեղծական պատկերը հասկանալու համար նրանից ոչ թե ինտելեկտուալ ջանքեր են պահանջվում, այլ սուրբեկտիվ պատկերացումների միջոցով, սեփական «ես»-ի զգացողություններով ընկալելու հնարավորություն: Այստեղից էլ բխում է աննկարագրելիության, կրկնակի շղարշավորման և բառը նյութի կապակցներից ձերբազատելու խնդիրն ու նրա անցումը ինքնահակասությունների սահմաններից այն կողմ, դեպի գիտակցության փակուղիների հաղթահարումը, որտեղ խոսքը վերածում է անցումային խոսքի, քանզի իրականության, հոգևորի՝ ներքին իրականության համար գոյություն չունի խոսքային համարժեքություն: Էդոյանական բանաստեղծական խոսքն անպաճույճ է, անտրոհելի, անշոշափելի ու իրեն չեղ, նաև այստեղ է թաքնված էդոյանական խոսքի ազդեցության գաղտնիքը: Հնչելիս այն վերադառնում է իր սկզբին, նախապատմությանը, նախազաղափարներին և միաձուլվում տիեզերքի հնչյունային էներգիային: Հնչելիս բանաստեղծական խոսքն իրեն դուրս է բերում ինքնամոխիվածության շրջանից, առաջադրում ինքն իրեն, հասնելով ինքնադիմակայման և ճառագման, լույս աշխարհի հանելով մտքի անսպառությունը, թույլ տալով ընթերցողին խորասուզվել դեպի ներս՝ դեպի սեփական ներաշխարհի անվերջությունը, լուսավորելով երևակայության հորիզոնները:

Բառը խոսքի էությունն է, հնչյունը՝ երևույթի: Բանաստեղծության մեջ բանաստեղծի կողմից ներմուծված բառերի ինքնատիպ ներքին իմաստը, խոսքն ու հնչյունները շարունակ փոխներգործում են իրար, արարում նոր իմաստներ: Այսպես ծնվում են բանաստեղծություններ, որոնք միակցում են բանաստեղծի հոգու ներքին աշխարհը արտաքին՝ նյութական աշխարհի հետ և ի ցույց հանում նրա ողջ կյանքն ու բնությունն իրենց մեջ տիրող տրամադրությունների դիտանկյունից: Ստեղծագործական կյանքի վաղ շրջանում Հ. Էդոյանն արդեն մտորում էր բանաստեղծության տիեզերական տարերքի, խոսքի կառուցման ոչ ավանդական սկզբունքի, բանաստեղծական տողի հեռարձակող էներգիայի, բառի լուսարձակության մասին, հայ գրականության պատ-

մական զարգացման շղթայում ազդարարելով նախադեպը չունեցող նոր պոեզիայի ծնունդը.

Կյանքն աղմկում է փողոցում, սակայն խոսքն է խոսք ծնում: Ամեն տեքստ ունի իր նախաստեքստը, և արվեստից է արվեստն առաջանում: Նա ինքն իր ծնունդն է, ինչպես երկնքում մի աստղ է պայթում հանկարծ և մոխիրներից էլնում է մի նոր աստղ, թարմ ու երիտասարդ:

(«Կյանքն աղմկում է») (3. էջ 745)

«Որքան ավելի բարձր է պոետը, այնքան ավելի է նա պատկանում այն հասարակությանը, որի մեջ նա ծնվել է, այնքան նրա զարգացումը, ուղղությունը և նույնիսկ նրա տաղանդի բնույթն ավելի են կապված հասարակության պատմական զարգացման հետ» (2. էջ 39):

Բանաստեղծության մեջ միավորելով հնչյունի, խոսքի և իմաստի երրորդության տարերքը՝ հեղինակը, կարելի է ասել, մերժում է պարտադրված օրենքներն ու ավանդույթները և ամրագրում ժամանակի պարտադրանքով ծնված իր ասելիքը իր ձևով արտահայտելու անհրաժեշտությունը.

Գնալով ավելի դժվար է դառնում պոեզիա գրել կամ ապրել՝ հայացքդ աշման նուրբ շողին կամ ավետարանի բացված էջերին...

(«Գնալով ավելի դժվար է դառնում») (3. էջ 498)

Ստեղծագործական վաղ շրջանից բանաստեղծի առաջնահերթ խնդիրն է դառնում հաղթահարել ժամանակի և տարածության սահմանափակությունը: Նա գիտակցում է, որ խոսքի համար ժամանակի և տարածության միավորներ գոյություն չունեն, և խոսքը՝ տարերքների տարերքը, ազգային պատկանելիություն չի ճանաչում և վերացնում է ամեն տեսակ ազգային սահման, որովհետև.

Սկիզբը բառն էր գործն էր զգացմունքն էր սկիզբը գործն էր բառն էր զգացմունքը սկիզբը զգացմունքն էր բառը գործը սկիզբը անունն էր որ սկիզբ չունեիր սկիզբն ու անունը միասին էին ինչպես աչքերը մարդու-նախքան փակվելը... (5. էջ 122)

Հավատարիմ մնալով իր սկզբունքներին՝ տիեզերական անսահմանության ընկալմանը, արվեստի վերածնող ու լուսավորող ուժին, լեզվազգացողությանը, անձի անհատականությանն ու եզակիությանը, չտրվելով այս կամ այն գրական հոսանքներին, ընդունելով ամեն տեսակի մարտահրավերներ, Հենրիկ Էդոյանը չփնտրեց, այլ գտավ իր ուղին (« «Ես չեմ փնտրում, ես գտնում եմ»-ասել է ոչ այլ ոք, քան Պիկասոն») (8. էջ 237).

Ես գնում եմ Ժամանակի և Բախտի առջևից, նրանք սնվում են իմ թողած հասկերով, իմ արյան կաթիլներով, որոնք ընկնում են ինչպես հանգած աստղեր,

ես ավելի վերև եմ բարձրացող և ընկնող աստղերից...

(«Երկու շարժում, Երեկո») (3. էջ 188)

Բառն ինքնին նյութական չէ, բառի մեջ կատարյալ մարմնավորելով և գիտակցելով «մեծությունը խոսքի» (3. էջ 30), պոետը տեսողական և լսողական նախահիշողության միջոցով բացահայտում է երևույթի նախմաստը՝ նրա սկզբնական, նախաստեղծ էությունը: Հ. Էդոյանն ասված խոսքի սահմաններում բառին ազատություն է տալիս դարձնելով այն ինքնաբերական իրականություն, որոնք բառերի աստղաբույլի մեջ հարստանում են առանձնահատուկ իմաստներով: Նախընտրելի կետադրական նշանների կամ նրանց բացակայության էդոյանական խաղը, ինտոնացիայի և բառային կարող շրջադարձերը, անակնկալ տողադարձերը ընթերցողին տանում են բառի, խոսքի, հնչյունի, մտքի բանաստեղծական իշխանություն.

Դու հենման կետ ես փնտրում,
բայց նավի վրա ես դու,
իսկ նավը՝ ջրի վրա,
իսկ ջուրը՝ երկրի,
որը սլանում է մոլեգին վազքով
տիեզերքի սուկալի
ամայության մեջ:

(«Հենման կետ») (3. էջ 709)

Հ. Էդոյանի պոեզիայում բառն իր ինքնաբերական հարմոնիկ ձայնային արտահայտությամբ ունի կարևոր նշանակություն: Նրա պոեզիայում բառերը կապակցվում են մտքի ձայնի շարադրանքով, իրենց մեղեդային հանգույցով և այդ հանգույցը, մտքի տոնայնությունը, հնչյունի ինտոնացիան, գույնն ու երանգը մշտապես ներդաշնակված են: Պոետը բանաստեղծական ասելիքը կարող է մատուցել ցանկացած ռիթմով և տոնայնությամբ, որոնց ձևն ու բովանդակությունը մշտապես համահունչ են:

Էդոյանական բառն ինքն է ստեղծում իր իրականությունը: Յուրաքանչյուր բառ, ունենալով սեփական հրնչյունական համակարգ, իր ներքին բովանդակությամբ նախադասության մեջ համադրվում է այլ բառերի հետ հնչյունային ներդաշնակության և փոխանցվող մտքի կապի միջոցով, որոնց շնորհիվ դրանք կերպարանք են ստանում ճիշտ այնպես, ինչպես երաժշտական միտքն է կերպարանավորվում հնչյունների շնորհիվ: Հ. Էդոյանի թաքնախորհուրդ բանաստեղծական աշխարհում մեծ է ճիշտ և ներդաշնակ կառուցված խոսքի անտեսանելի ազդեցությունը: Բանաստեղծության ներքին բովանդակությունը մշտապես համահունչ է ներքին ձևին: Ռիթմի պահպանման անհրաժեշտության պատճառով էդոյանական խոսքերը կարող են լինել կարճ ու ընդհատված, սակայն այստեղ ազդեցության ուժն արտաքին տեսքի մեջ չէ, այլ խոսքի և ռիթմի ներամիտի էության մեջ:

Աշխարհագրորդության տիեզերականությանը օժտված բանաստեղծի պոեզիան ընթերցելիս «օրվա մետաղների աղմուկների միջոց», «իմպես հիշողություն» (3. էջ 17) հնչում է երգեհոնի աստվածային հոգեպարար մեղեդին և ակամա տեղափոխվում ես վերերկրային այն ոլորտը, որտեղ բնակվում են զուլայ հոգիները, որտեղ պոեզիան ու երաժշտությունը միաձուլվում են իրար և կազմում մեկ ամբողջություն, այն է՝ ներդաշնակություն: Այստեղ, այս ոլորտում են բնակվում ընտրյալների հոգիները, որոնք խոսում են մեկ՝

համընդհանուր լեզվով: Այս տեսակետից թվում է, թե Հենրիկ Էդոյան բանաստեղծի և հանճարեղ կոմպոզիտոր Յոհան Սերաստիան Բախի երկնային մտքերը բնակվել են նույն տարածության ու ժամանակի մեջ, սնվել տիեզերքի միևնույն աղբյուրից և խորհել միևնույն մտքի շուրջ: Երևի հենց այդ է պատճառը, որ Հենրիկ Էդոյանն ու Բախը գտնվում են միևնույն լսողական ուղու վրա: Այդ երբեմնի մտային կապի երկրային հաստատումը մենք զգում ենք ոչ միայն պոետի պոեզիայի մեղեդու հետ առնչվելիս, այլ նաև հենց նրան՝ Բախ հանճարին նվիրված բանաստեղծություններն ընթերցելիս՝ «Յ. Ս. Բախ» (3. էջ 70), «Սիրո շարժումը» (3. էջ 328):

Մեղեդին թելադրում է պատկերը, իսկ ինտոնացիան մարմնավորում է այն և ծնվում է բանաստեղծությունը, որի իմաստը կյանքի հավերժական ընթացքն է: Հնչյունի և բառի միասնության մեջ արտահայտված ինտոնացիան առավել ընկալելի է դարձնում բանաստեղծության համամարդկային բովանդակությունը, ունկնդիրը դարձնում բանաստեղծի համամարդկային լեզվին: Բանաստեղծական խոսքի մեջ ամփոփված ինտոնացիան, ներդաշնակվելով բառին, արարում են իմաստներ, որոնք մարմնավորում են բանաստեղծությունը: Սա է ձայնի, բառի, իմաստի երրորդության այն բարձրակետը, որտեղից հնչում է բանաստեղծի ձայնը՝ որպես նորօրյա աղոթք: Սա է էդոյանական հեղինակային ասելիքի ամբողջ զաղանիքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս. Ս., Հենրիկ Էդոյան, «Խոսքն իմ հենարանն է» և «Այդ անշարժ վայրկյանն եմ ես», //Գրականագիտական հանդես ԺԷ, Եր., Արմավ, 2017 թ. Abrahamyan S. S., Henrik Edoyan, “Khosqn im henarann e ev” Ayd ansharj vayrkyann em es”, //Grakanagitakan handes ZhE, Yer., Arnav, 2017 th.
2. Բելինսկի Վ. Գ., Չերնիշևսկի Ն. Գ., Դոբրոլյուբով Ն. Ա., Բնտիր էջեր, Եր., Սովետական գրող, 1980 թ. Belinski V. G., Chernyshevsky N. G., Dobrolyubov N. A., Yntir ejer, Yer., Sovetakan grough, 1980 th.
3. Էդոյան Հ. Ա., Բնտրանի, Եր., Հայագիտակ Գիր, 2016 թ.: Edoyan H. A., Yntrani, Yer., Hayagitak Gir, 2016 th.
4. Էդոյան Հ. Ա., Ծարժում դեպի հավասարակշռություն, Եր., Ս. Խաչենց, 2009 թ.: Edoyan H. A., Sharzhum depi havasarakshruthyun, Yer., S. Khachentz, 2009 th.
5. Էդոյան Հ. Ա., Պատկեր և կետ, Եր., 1980 թ.: Edoyan H. A., Patker ev kesor, Yer., 1980 th.
6. Էդոյան Հ. Ա., Լույսը ձախ կողմից, Եր., Ջանգակ, 2018 թ.: Edoyan H. A., Luys'y dzakh koghmizt, Yer., Zangak, 2018 th.
7. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, ԲԱՆ ԺԱ, Եր., Ջանգակ 2013 թ.: Grigor Narekatzi, Matyan voghberguthyan, Tagher, BAN ZhA, Yer., Zangak, 2013 th.
8. Սևակ Պ. Ռ., Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր երրորդ, Եր., Սովետական գրող, 1983 թ.: Sevak P. R., Yerkeri zhoghovatzu 3 hator, hator 3-rd, Yer., Sovetakan grough, 1983 th.
9. Martun Israelyan, Book of sonnets for soprano and chamber orchestra (1980) //https://www.youtube.com/watch?v= uWY94 FITIFU&fbclid=IwAR3C-e8OJ5V2k21qoAVAm1vRPwdA_9uimh_fllWnT1xJEFqWeydFyk10aA
10. Рухляк М. А., Внутренний голос народа. О молодых ком-

позиторах, вступающих в жизнь R'uxhyan M. A.,
Vnutrenniy golos naroda. O molodix kompozitorax,
vstupayush'ix v zh'izn'./
http://www.golosarmenii.am/article/55728/vnutrennij-golos nar-

oda? fbclid=IwAR1Fg FrBm
88X5DRw46H8NLHmUWladPEB55PczzRnjJSRT2tLfaoad
KPWFw

Բանալի-բաներ. հնչյուն, խոսք, ձայն, պոեզիա, լուրջություն, մեղեդի, ռիթմ, իմաստ, ինտոնացիա, Հենրիկ Էդոյան, Հռիփսիմե Չաքարյան:

Ключевые слова: звук, речь, голос, поэзия, тишина, мелодия, ритм, смысл, интонация, Генрих Эдоян, Рипсиме Закарян.

Keywords: Sound, word, voice, poetry, silence, melody, rhythm, meaning, intonation, Henrik Edoyan, Hripsime Zakaryan.

Տեղեկություններ հեղինակի մասին. ՉԱԲԱՐՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ ԱՐԱՅԻ (ծ. 12. 06. 1986թ. Սյունիքի մարզ քաղաք Գորիս): Ավարտել է Գորիսի պետական համալսարանի մանկավարժական հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը՝ ստանալով մանկավարժության բակալավրի աստիճան՝ հայոց լեզու և գրականություն մասնագիտացմամբ (2008 թ.): Ավարտական աշխատանքի թեման է՝ «Հայոց լեզու» առարկայից «Կրավորական սեռը հայերենում» (ղեկավար՝ Վ. Մնացականյան): Կրթությունը շարունակել է՝ նույն մասնագիտությամբ, ստանալով մագիստրոսի աստիճան (2012 թ.), մագիստրոսական թեզ՝ «Գրականություն» ճյուղից «Շարլ Ազնավուրը բանաստեղծ» թեմայով (ղեկավար ք. գ. թ., դոցենտ Թ. Մարտյան): 2018-ից Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության ամբիոնի հայցողող է, աստենայտության թեման է՝ «Ավանդույթի և նորարարության խնդիրները Հենրիկ Էդոյանի պոեզիայում» (գիտական ղեկավար՝ ք. գ. դ., պրոֆեսոր Կիմ Աղաբեկյան): 2013-ից առ այսօր աշխատում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում (Գորիսի մասնաճյուղ)՝ որպես դասախոս: Մենագրության հեղինակ է (Հ. Ա. Չաքարյան, Շարլ Ազնավուր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գի-տություն», 2016 թ.):

Сведения об авторе: ЗАКАРЯН РИПСИМЕ АРАЕВНА (род. 12. 06. 1986, г. Горис, Сюникская область) Окончила отдел армянского языка и литературы педагогического факультета гуманитарных специальностей Горийского государственного университета, получив степень бакалавра педагогики армянского языка и литературы (2008). Дипломная работа по предмету “Армянский язык” на тему “Пассивный залог в армянском языке” (с отличием, руководитель В. Мнацаканян). Продолжила учебу на том же факультете, получив степень магистра (2012). Магистерская диссертация по предмету “Литература” на тему “Шарль Азнавур - поэт” (с отличием, руководитель к.ф.н., доцент Т. Марутян). С 2018 года является соискателем факультета армянской филологии кафедры новейшей армянской литературы Ереванского государственного университета, тема диссертации “Проблемы традиции и новаторства в поэзии Генриха Эдояна” (научный руководитель доктор филологических наук профессор Ким Агабекян). С 2013 года до сих пор работает преподавателем Ереванского государственного института театра и кино (Горисский филиал). Является автором монографии “Шарль Азнавур”, Ер.: Гитутюн., 2016.

Information about the author: ZAKARYAN HRIPSIME ARA (born on 12. 06. 1986 in Syunik region c. Goris)She graduated from the Department of Armenian Language and Literature at the Faculty of Pedagogical Humanities in Goris State University, got a Bachelor's degree in Pedagogy Armenian Language and Literature (2008 th.). Author of final paper from “Armenian language” subject on “Passive voice in Armenian” and passed oral defense with 5/100 score /excellent (Supervisor V. Mnacakanyan). She continued her education at the same faculty, and got a master's degree same profession (2012 th.). Author of master thesis from “Literature” subject on “Charles Aznavour as a poet” and passed oral defense with 5/95 score (excellent) (under the supervision of Candidate of Philology, Associate Professor T. Marutyan). From 2018 she is a Candidate of the Department of Armenian Literature at the Faculty of Armenian Philology at Yerevan State University, the topic of the thesis is “Issues of tradition and innovation in Henrik Edoyan’s poetry” (Scholar Supervisor Candidate of Philology, Professor Kim Aghabekyan). Since 2013 up to present she is a lecturer at Yerevan State Institute of Theater and Cinematography (The Institute in Goris). She is an author of a monograph (H., A., Zakaryan, Charlez Aznavour, Yer., NAN RA «Gitutyun» pub., 2016 th.).

Րեզյումե

Соискатель факультета Армянской филологии кафедры Новейшей армянской литературы Ереванского государственного университета Рипсиме Араевна Закарян. – “Мелодия речи в стихотворном мире Генриха Эдояна”.

Цель данной статьи – показать, как можно постичь мир и человека посредством проникновения в поэтическое наследие Генриха Эдояна – в поэтическую формулу троичности произнесенного звука, речи и смысла. Вслушиваясь в интонационно-смысловые свойства слова, Генрих Эдоян раскрыл и выявил исключительные возможности и применяя их в своих поэтических рядах и поэтической энергии, подтвердил наличие стихов в них.

Summary

Candidate of the Department of Armenian Literature at the Faculty of Armenian Philology at Yerevan State University Hripsime Ara Zakaryan. - “Word music in the poetic world of Henrik Edoyan”.

The aim of this article is to show how to discover the world and the person through the penetration into Henrik Edoyan's poetic heritage expressed in the poetic formula of the sound, word and meaning trinity. Listener of the intonational-semantic nature of speech-Henrik Edoyan revealed exclusive opportunities in them and applying them confirmed their elements in his poetic series and poetic energy.

**ԼԻԼԻԹ ԿԱՌԼԵՆԻ
ԵՓՐԵՄՅԱՆ**

**Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու,
Երևանի Կոմիտասի անվ.
կոնսերվատորիայի դոցենտ**
E-mail: mikaelterlemez@gmail.com

ԱՐՎԵՍՏԻ ՄՇԱԿ. ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍՅԱՆ

**Նվիրվում է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի
ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչ, ԵՊԿ պրոֆեսոր՝ Սարգիս Թորոսյանի հիշատակին**

Երգիչ Սարգիս Թորոսյանը ծնվել է 1956 թ. Երևանում: Սովորել է Գեղագիտական դաստիարակության կենտրոնի վոկալ բաժնում (1966-1968, դաս.՝ ՀՀ Վաստակավոր արտիստ Ռ. Բարություն), Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի վոկալ բաժնում (1977-1981 թթ., դաս.՝ ՀՀ Վաստակավոր ուսուցիչ Էլենոնրա Տեր-Մարտիրոսյան): 1980 թվականից աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երգչախմբում որպես մեներգիչ: 1982-1987 թթ.՝ սովորել է ԵՊԿ մեներգեցողության բաժնում, ՀՀ Վաստակավոր արտիստուհի, պրոֆեսոր Մագդալինա Ալեքսեյի Գալուստովա-Սիմոնյանի մասնագիտական դասարանում: 1987-ից աշխատել է ԵՊԿ-ում որպես դասախոս, 2001-ից՝ դոցենտ: Դասավանդել է նաև Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում: 1994 թվականից մինչև կյանքի վերջն եղել է Ա. Սպենդիարյանի օպերայի և բալետի թատրոնի մեներգիչ:

1986 թվականին արժանացել է Տ. Չուխաջյանի անվան հանրապետական մրցույթի դափնեկրի կոչմանը: 1996-ին Հայ-Ավստրո-Գերմանական երաժշտության մեներգիչների առաջին մրցույթում ստացել է 1-ին և հատուկ՝ «Օրատորիալ արիայի լավագույն կատարման համար» մրցանակները: 1990-1991 թվականներին Էջմիածնի Ս. Գայանեի արական երգչախմբի հետ Ֆրանսիայի 14 քաղաքներում հնչեցրած Կոմիտասի և Եկմալյանի Պատարագներում հանդես է եկել որպես մեներգիչ:

Հայաստանի Ազգային Ռադիոյի ֆոնդում պահպանվել է Կոմիտասի Պատարագի ձայնագրությունը՝ Սարկավագի և Դպիրի երգարաժիհների կատարումներով: Ունի լազերային ձայնասկավառակներ և ձայներիզներ Մ. Մաշտոցի, Ն. Շնորհալյու և Գ. Նարեկացու շարականների ձայնագրություններով: Հյուրախաղերով հանդես է եկել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Արարական Միացյալ Էմիրություններում, Իրանում, Չեխիայում և ԱՊՀ երկրներում:

Մահացել է 2016 թվականին Երևանում:

Յուրաքանչյուր մարդ անկրկնելի է, նա բնության ու Աստծո անիմանայի ու անմեկնելի ստեղծագործությունն է, որի եզակիության ամենարևութագրական դրսևորումներից է իրեն շնորհված ձայնը, ինտոնացիան: Գեղեցիկ ձայնը հնագույն ժամանակներից համարվել է աստվածային պարզև, իսկ երգելու շնորհը՝ հազարավոր մարդկանցից շահեկան ձևով տարբերվելու ի վերուստ տրված հատուկ մի նշան՝ դրոշմ: Ձայնի, ինտոնացիայի գույնի և որակի մեջ խտացված է մարդու ամբողջ էությունը, նրա խառնվածքը, զգացմունքայնությունը, խորությունը, կամքն ու նրբազգացությունը...

Սարգիս Թորոսյանը տարբեր էր կյանքում և արվեստում: Անօրյայում զուսպ ու համեստ, ընկերական և մասնագիտական միջավայրում իրեն ուրիշներից չզերադատող, կյանքում և բեմում՝ դիմացինին հարգելու և բարձրացնելու, զիջելու անկեղծ մղումով ու պատրաստակամությամբ:

Սարգիսի ձայնը սակայն նրա հոգու այլ երանգներն էր բացահայտում: Հախուռն էր ձայնը ու զորեղ, զրնգուն, անվախ ճախրել ու իրենով լցնել գիտեր վանքերի ու դասիլիճների բարձր առաստաղները ու հեռավոր անկյունները: Չուլալ ու պարզ գետի նման ազատ հոսող իր երգը գրավում էր մարդկանց հոգիները: Նրա մտքի և ոգու վեհությունն ու իմաստությունը, աներկյուղ հաստատակամությունը դեպի իրեն էին ձգում ունկնդրի ուշադրությունը, ով կլանված հետևում էր Թորոսյան-մեկնաբանի կերտած յուրահատուկ կերպարներին:

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Դավիթ Գարսևանի Ղազարյանի ընդունվել է տպագրության՝ 04.06.2019 թ. ներկայացրել է հեղինակը՝ 20.05.2019 թ.

Ուներ «գեղեցիկ և ջերմ տեմբր» Տ. Լևոնյան, «գեղեցիկ, յուրահաստուկ տեմբրով, առողջ միջուկով ձայն» Զ. Վարդանյան, «յուրահաստուկ և անկրկնելի ձայն» Ի. Զաքյան, «մաքուր, պայծառ, զույլ հնչերանգ» Ա. Ազիզյան, «ձայնի նուրբ տեմբր», կոլորիտ, մեծ դիսպոզիցիոն, հնչել ձայն Ռ. Ասատրյան, «սպեցիֆիկ ձայնատարություն, արտաբերման ձև, տեմբր» Գ. Գեղամյան, երգչական շատ գեղեցիկ ձայն Դ. Ղազարյան... Այսպես են բնորոշում երաժիշտները դրամատիկ տենոր Սարգիս Թորոսյանի արվեստը: Երբեմն նշվում է նաև նրա ձայնին բնորոշ փոքր-ինչ ռեզային երանգը, որն ըստ իս առավել ազգային գույն է հաղորդում երգչին, ով նախ և առաջ միջնադարյան հոգևոր երգի կամ մինչ օրս փնտրվող ազգային երգելաոճի արարողը և կրողն էր:

Հայաստանում և արտասահմանում Սարգիսի ելույթները մշտապես եղել են երաժշտական քննադատների ուշադրության կենտրոնում: Երգչի արխիվում պահպանվել են իր իսկ ձեռքով խնամքով հավաքված ու կոչիկ դասավորված բազմաթիվ հայտագրեր, համերգային և օպերային ծրագրեր, ինչպես նաև գրախոսականներ հայաստանյան և արտասահմանյան մամուլից: Ստորև մեջբերեն դրանցից մի քանիսը. «Ինչ վերաբերում է օրվա հերոս-երգչին՝ «ավետարանիչ» Սարգիս Թորոսյանին, ապա մեջբերում եմ պրոֆ. Արմեն Բուդաղյանի խոսքը. «Այսուհետ Սարգիս կարելի է վստահորեն անվանել Հովհաննես...» Դանիել Երաժիշտ (1.): «Արաքս Դավթյանի հետ հանդես եկող մեներգիչներից ավելի «տեսադաշտում» էր Սարգիս Թորոսյանը: Նա անսամբլում ավելի փորձառու էր և հանդես բերեց ընթացքում հնչողության մակարդակը հավասարակշռելու կարողություն: Մնացած երգիչներն այս առումով գովելի չէին: Դե, իհարկե, դժվար է կարիերայի հենց սկզբում մրցել Դավթյանի նման բարձրակարգ երգչուհու հետ»։ Սվետլանա Սարգսյան (2.): «Партию Манрико (в опере Верди “Трубадур”) исполнил ведущий тенор театра Саркис Торосян. Его Манрико молод, горяч. Интересно проводит он сцену в темнице, очень сложную в вокальном отношении, построенную на резкой смене чувств: радость встречи с Леонорой, проклятие за мнимую измену и нежность примирения.» - *Наталья Асмарян (3.)*.

Զարմանալի ունիվերսալ երգիչ էր Սարգիս Թորոսյանը: Դրա բացատրությունը թերևս պետք է փնտրել իր բազմակողմանի երաժշտական կրթության մեջ. Հայաստանի կրթական օջախները մինչ օրս լայն ընդգրկումով մասնագիտական գիտելիքներ են մատուցում՝ խուսափելով արտասահմանում առավել ընդունված նեղ մասնագիտական ուղղվածությունից: Սակայն արդեն հետբուհական շրջանում երաժշտական ասպարեզ դուրս եկող յուրաքանչյուր երաժիշտ սեփական հայեցողությամբ անխուսափելիորեն կատարում է իր ընդունակություններին, հնարավորություններին ու հետաքրքրություններին առավել մոտ երաժշտական ոճի, ուղղության, ի վերջո իրեն բնորոշ բեմական ամպլուայի ընտրություն:

Բայց այդպես չէլավ Սարգիս Թորոսյանի դեպքում: Անբացատրելի է, թե ինչպես արմատներով պոստեցի ճարտարագետի երևանյան ընտանիքում ծնված այդ երաժիշտը կարողանում էր հավասար կերպով հարազատորեն վերապրել ծայրահեղ տարբեր ոճական ձեռագիր ունեցող կոմպոզիտորների ստեղծագործությունները. Մոցարտ ու աշուղ Զիվանի, Դոնիձետտի և Կոմիտաս, Բեթհովեն ու Չայկովսկի, Տիգրանյան ու Շուբերտ, Մաշտոց և Տերտերյան, Պերգոլեզի ու Ճզնավորյան, Բախ, Սպենդիարյան ու Մադրյան...:

Ահա Սարգիս Թորոսյանի երգացանկի մասնակի պատկերը. 3. Ս. Բախ՝ 4, 57, 89, 131 Կանտատներ, «Չարչարանքներ ըստ Հովհաննես», Գ. Ֆ. Հենդել՝ Մեսիա, Կոմիտաս՝ Պատարագ, Ա. Տիգրանյան՝ «Անուշ» (Սարո), «Դավիթ Բեկ» (Ամենդ), Վ. Ա. Մոցարտ՝ «Թագադրման» մեսսա, Մեծ մեսսա, Ռեքվիեմ, «Առևանգում հարեմից» (Պեդրիլիո), «Կախարդական սրինգ» (Տամինո); Գ. Դոնիձետտի՝ «Պողիկտոս» (Պողիկտոս), Ֆ. Շուբերտ՝ 2-րդ Մեսսա, Զ. Վերդի՝ «Օթելլո» (Ռոդրիգո), «Տրավիատա» (Ալֆրեդ), «Տրուբադուր» (Մանրիկո), Ա. Բաբայան՝ Մագնիֆիկատ, Լ. վ. Բեթհովեն՝ 9-րդ Սիմֆոնիա, Զ. Պերգոլեզի՝ *Stabat Mater*, XVII դարի ռուսական հոգևոր երաժշտություն, Ա. Հարությունյան՝ «Ասք հայ ժողովրդի մասին», Ս. Մուքիսայան. Ռոմանսներ, Ա. Բաբայան. Կանտատ ձայնի համար, Դ. Սարգսյան Կանտատ 2, Լ. Ճզնավորյան. Կանտատ «Քրիստոս ընդդեմ Սատանայի», «Ռոստամ և Ջոհրաբ», Է. Սաղոյան. «Գրիգոր Լուսավորիչ» (Տրդատ արքա, Հիսուս Քրիստոս ասմունք), Ա. Ազիզյան. Երգեր Հ. Թումանյանի, Սիփան Շիրազի խոսքերով, Ա. Տերտերյան. «Երկրաշարժ» (Քարոզիչ), Ա. Սպենդիարյան. «Ամաստ» (Ալի Մուրադ):

Որքան բազմազան էին նրա մասնագիտական հետաքրքրությունները: Հոգևոր երաժշտությունն իր ազգի, ցեղի ու հավատքի ակունքն էր, հոգու ծարավը հագեցնող մշտնջենական բնական աղբյուրը: Հայկական ժողովրդական ու աշուղական երգը, գերմանական օրատորիան և մտերմիկ Lied-ը, իտալական bel canto-ն ու ռուսական վոկալ դպրոցի ավանդույթները՝ ամենը խտացած էր մի ստեղծագործ մեկնաբանի, աշխարհի քաղաքացու, «շարքային» երևանցու կերպարի և հոգու մեջ: Հետևաբար, սովորական մի բան էր, որ ավարտելով Սարոյի դերերգն Օպերային թատրոնում՝ Տիգրանյանի «Անուշ» օպերայում, Սարգիսը շտապում էր Հայֆիլիարմոնիա, որտեղ սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ կատարում էր Լենսկու արիան Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայից, իսկ մյուս օրը վաղ առավոտյան Էջմիածնում էր՝ Պատարագի: Եվ միայն երեկոյան, ընտանեկան շրջապատում հանգստանալիս, վերջապես ժամանակ էր գտնում նոր մի սարքի նախագիծ գծագրելու ձախ ձեռքով (ձախլիկ էր), որ գիշերվանից անընդհատ պտտվում էր մտքում ու սեփական ձեռքերով պատրաստում այն:

Սարգիսը սիրահարված էր կյանքին: Նրա ամենամեծ սերն ընտանիքն էր ու երաժշտությունը, բեմն ու թատրոնն և ունկնդիրը տարբեր երկրներում, եկեղեցին, աշակերտներն ու ուսանողները: Հատկապես մանկավարժական աշխատանքը մոտ էր նրա խառնվածքին. ուսանողներին նա հարազատի պես էր ընդունում, մասնագիտական և կյանքի հարցերում դառնում նրանց ավագ ընկերը, առաջնորդը, երբեմն նույնիսկ երկրորդ հայրը:

Ե Պ Կ եր ա խ ա վ ո ղ ն եր ր

Դպրոցի աշակերտներին անգամ կարողացավ հասցնել այնպիսի մակարդակի, որ ներկայանան միջազգային մրցույթին, այն էլ Իտալիայում՝ *bel canto* երգեցողության ծննդավայրում... Ս. Թորոսյանի ուսանողներների թվում են Ֆրանսիայում գործունեություն ծավալող երգիչներ Խաչատուր Հակոբյանը, Արտակ Համբարձումյանը, Մասիս Մաղադին Իրանի Հանրապետությունից, ինչպես նաև հայաստանաբնակ Հայկ Հովհաննիսյանը, Ռոյանդ Աբրահամյանը, Արթուր Ադամյանը:

Սարգիս Թորոսյանը սիրված էր աշակետների, ընկերների, գործընկերների, հասակակից և ավագ սերնդի հայտնի երաժշտական գործիչների կողմից: Ստորև ներկայացնենք նրանց սրտակից խոսքը Սարգիս Թորոսյանի մասին: Նշենք, որ բացառությամբ Տիգրան Լևոնյանի, տարիներ առաջ տրված բնութագրության և Աննա Արևշատյանի հողվածների, բոլոր հարցազրույցներն ու հուշապատումները գրվել են հատուկ այս հողվածի համար:

Հավելենք, որ Յուրի Դավթյանի, Միքայել Հովակիմյանի, Ռուբեն Ասատրյանի, Գայանե Գեղամյանի հատվածները հարցազրույցներ են, որոնք ներկայացված են առանց հարցադրումների:

ԼԻԼԻԹ ԵՓՐԵՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ

օպերային երգիչ, ռեժիսոր

Ա. Սպենդիարյանի անվան ազգային ակադեմիական օպերայի և բալետի թատրոնի գեղարվեստական ղեկավար և գլխավոր ռեժիսոր ՀՀ ժողովրդական արտիստ

Ազգային Օպերային թատրոնում Սարգիս Թորոսյանը վստահաբար ամրագրվեց որպես առաջատար դերերգիչներից մեկը: Նրա անկաշկանդ դիսկոգրոնի գեղեցիկ և ջերմ տեմբրով քնարական դրամատիկ տենորը, կատարողական վարպետությունը և բեմական արտաքինը եղան երաշխիք՝ բեմում կերտելու երաժշտաբեմական կերպարներ, որոնք աչքի են ընկնում կատարողական կուլտուրայով:

Դոնիժետտոյի «Պողիկտոսի» Պողիկտոսի դերերգը երգչի անատարկելի հաջողությունն է, որն, ի դեպ թե՛ հայրենիքում, թե՛ Իսպանիայի համաշխարհային փառատոնում արժանացավ հանդիսատեսների ամենաջերմ գնահատականին:

Սարոյի դերերգը Թորոսյանի կատարմամբ, ազատվելով օտարածին խաղերից, հնչում է հայեցի, խորապես ազգային և երգի ու խաղի գեղեցիկ դաշնակցությամբ:

Սարգիս Թորոսյանի պես լրջմիտ և բարեկիրթ արվեստագետն աշխատանքային նվիրումով և անընդմեջ կատարելագործությամբ օպերային թատրոնի առաջատար դերերգչի հիանալի օրինակ է:

ՅՈՒՐԻ ԴԱՎԹՅԱՆ

դիրիժոր, ՀԽՍՀ Արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ

Սարգիս Թորոսյանին հիշում են դեռ ուսանող տարիներից, երբ ԵՊԿ Օպերային պատրաստման իմ դասարանում նա մասնակցում էր Օպերային ստուդիայի ներկայացումներին: Տարբեր դերեր էր կատարում՝ ըսկզբից փոքր, հետո ավելի բարդ, այդ տարիներին արդեն աշխատում էր Էջմիածնի Մայր տաճարի երգչախմբում: Իր տաղանդով և աշխատասիրությամբ նա հասցրեց այնպես դրսևորվել, որ ես զուգահեռաբար հանդիսանալով Ա. Սպենդիարյանի Օպերայի և բալետի թատրոնի գլխավոր դիրիժորը, գեղարվեստական ղեկավար Տիգրան Լևոնյանին առաջարկեցի Սարգիսին հրավիրել

թել թատրոն՝ մեներգչի հաստիքով: Շատ շուտով նրան հանձնարարվեց Սարոյի պատասխանատու դերը Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայում, և նա լիովին արդարացրեց մեր սպասելիքները:

...Եվ ահա սկսվեցին Դոնիժետտոյի «Պողիկտոս» օպերայի բեմադրական աշխատանքները: Գլխավոր դերը պետք է կատարեր Ռազմիկ Պապիկյանը: Արդեն բավական փորձեր էին արվել, երբ հանկարծ պարզվեց, որ Ռազմիկը մշտական բնակության է մեկնում Միացյալ Նահանգներ: Պարտիան շտապ փոխանցվեց Սարգիս Թորոսյանին, ով միանգամից կարողացավ ներգրավել դերում:

Բոլորն են հիշում, թե ինչ մեծ իրադարձություն դարձավ «Պողիկտոսը» Հայաստանի մշակութային կյանքում: Եղանք Մոսկվայում՝ Մեծ թատրոնի բեմում ներկայացնելով այս հազվադեպ բեմադրվող ստեղծագործությունը: Երբ 1998 թվականի ամռանը մենք մեկնեցինք հյուրախաղերի Իսպանիա, դեռ չգիտեինք, թե ինչպես կընդունվի օպերան արտասահմանում: Մերիդա քաղաքի ավանդական 44-րդ օպերային արվեստի փառատոնն էր: Այդ բեմը տեսել էր բազմաթիվ աշխարհահռչակ կատարողների և կարելի է ասել ուղղակի երգիչների ռեժիսորների՝ ախտորոշիչ սարքի նման մի բան էր, ստուգելու համար արտիստի ով լինելը: Պատկերացրեք, մենք արժանացանք այնպիսի խանդավառ ընդունելության, որ մյուս տարի նորից հրավիրվեցինք Իսպանիա, այս անգամ արդեն Ջ. Վերդիի «Օթելլո» օպերայով:

Սարգիս Թորոսյանը որպես Ա. Սպենդիարյանի անվան թատրոնի առաջատար մենակատար, մեծ «ամազ» ու ներդրում ունի հայ երգարվեստում: Ափսոս, շատ շուտ հեռացավ կյանքից. և իբրև կատարող, և որպես մանկավարժ, ով լավ սերունդ էր դաստիարակում, նրա բեղմնավոր գործունեությունը կարևոր մի օղակ էր ազգային մշակույթի միասնական շղթայում:

ՉԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

դիրիժոր,

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

ՄԱՐԿՈՒ ԳԵՂԵՑԻԿ ԿՈՉՄԱՄԲ

Ինձ հաճելի է գրել մի մարդու մասին, ում հետ շփումը միշտ ցանկալի է եղել: Քիչ մարդիկ կան, որ հարաբերությունների մեջ իրենց անձը դարձնում են աննկատ,

չպարտադրող, անհավակնոտ, պարզ ու անմիջական, որով էլ դառնում են միշտ փնտրվող:

Սարգիս Թորոսյանը չափված-ձևված, բարեհամբույր մարդ էր, արտաքինից թվում էր մի քիչ սառը, բայց ներքուստ այդպիսին չէր. գիտեր հուզվել, հուզել, լիաթոք ծիծաղել, ուներ հումորի նուրբ զգացողություն: Երբեք չէր անցնում պատշաճության սահմանը: Բնությունից կիրթ ու մեղմաբարո անձնավորություն էր: Եթե մի բան այնպես չէր, ապա մոտենում էր և մտերմիկ-մեղավոր ձայնով խոստովանում: Հոգևոր և մտավոր աշխարհով մաքուր, անբասիր անձնավորություն էր, հեռու ինտրիգներից: Պարկեշտ մարդ: Սքանչելի ամուսին, հրաշալի հայր:

Չորս Ավետարանիչներից ինձ ամենամոտը Հովհաննու Ավետարանն է՝ իր պոետիկությամբ և պատմելաճի դինամիկայով: Ուստի 1999 թվականին՝ Հայաստանում Քրիստոնեությունն իբրև պետական կրոն հռչակման 1700-ամյակին ընդառաջ, մտածեցի ներկայացնել նախ Բախի այս պասսիոնը, ապա՝ 2001-ին՝ «Չարչարանքներ ըստ Մատթեոսի» պասսիոնը: Երբ Սարգիսին, ով ուներ գեղեցիկ, յուրահատուկ տեմբրով, առողջ միջուկով ձայն, առաջարկեցի երգել Բախի «Չարչարանքներ ըստ Հովհաննու» պասսիոնի Ավետարանիչի պարտիան, նա երկմտության մեջ էր՝ կկարողանա՞ հաղթահարել այն խնդիրները, որոնք բոլորովին նոր էին իր համար: Մինչև այդ մենք միասին կատարել էինք Բախի մի քանի կանտատ, արիաներ և անսամբլային համարներ «Մազնիֆիկատից» և «Ծննդյան օրատորիայից», ինչպես նաև դեկտեմբերյան Ծննդյան Տոնին նվիրված երգերը: Իսկ մեր օպերային թատրոնում՝ Մոցարտի «Առևանգում հարեմից» **Singspiel**-ը, որտեղ Սարգիսը փայլուն կատարեց Պեդրիլլոյի դերերգը:

Երբ սկսեցինք աշխատել, Սարգիսն աստիճանաբար հմայվեց Ավետարանիչի կերպարով: Լինելով հավատացյալ, երկար տարիներ եկեղեցում երգած անձ և Պատարագի մենակատար սկսեց զգալ նյութը, պահանջվող երգելաճո՞ր՝ **Sprechgesang**-ը: Աշխատում էինք համառորեն և բժախնդիր հետևողականությամբ, յուրաքանչյուր բառի արտահայտչականության, արտաբերման էներգետիկայի, հուզական զամմայի ամբողջ ամպլիտուդի, յուրանքանչյուր բառի թարգմանության յուրացման, տեսարանների դինամիկ արտահայտչականության վրա: Իր արվեստում լինելով լուրջ և կարգապահ անձնավորություն Սարգիսը համառորեն հաղթահարում էր բոլոր անսովոր և բարդ խնդիրները: Եվ արդյունքը եղավ հրաշալի: Նրա արտաքինն էլ էր օգնում Ավետարանիչի կերպարի ամբողջացմանը. կարծես մագաղաթից ելած Հովհանն էր, որ եկել էր մեզ պատմելու այն ամենը, ինչ կատարվել էր, և որի Վկան էր եղել ինքը: Սարգիսը կարողացավ անշտապ ոճով մեզ պատմել. «Եվ Հիսուսը իր աշակերտների հետ քայլում էր Կիդրոն գետի եզերքով»... հուզմունքով, հեկեկայով, խեղդվող ձայնով նկարագրել երրորդ քրոնոակաճից հետո Պետրոսի հոգեվիճակը. «Հիշեց Պետրոսը Հիսուսի խոսքերը և հեռացավ, և լաց եղավ դառնագին»: Մա աննկարագրելի գեղեցկության, շատ դժվարին երաժշտական ֆրագ է. դանդաղ տեմպում պետք է **Bweinete**

(«լաց եղավ») բառը երգվի մեկ շնչով, արտահայտիչ կերպով փոխանցելու Հիսուսին ուրացած Պետրոսի հոգեվիճակը: Սարգիսը հրաշալի մատուցեց պահը: Այնուհետև, երբ տեսնում է, թե ինչպես անարդարացիորեն մտրակում են Հիսուսին, չկարողանալով զսպել իրեն զայրացած ու դառնացած բացականչում է. «բայց Բարրաբան մի ավազակ էր, սակայն Պիղատոսը տվեց Հիսուսին, որ մտրակահարեն...» Ու, երբ Հիսուսը Խաչի վրա էր, Սարգիս-Ավետարանիչը հայացքը ուղղեց դեպի դահլիճ, հառաչեց-շնջաց. «...և խոնարհելով գլուխը, հոգին ավանդեց»: Երուսաղեմի կործանումից ցնցված, ներսից ժայթքող պաթետիկ, հուժկու ցնծությամբ ու սարսափով բառացիորեն գոչեց. «...Եվ ահա տաճարի վարագույրը վերևից մինչև ներքև երկուսի պատուվեց, և երկիրը շարժվեց, և ժայռեր ձեռքվեցին, և գերեզմանները բացվեցին, և ննջեցյալ սրբերի բազում մարմիններ հարություն առան...»: Սարգիսը հավատաց և հավատացրեց մեզ, ու մենք՝ կատարողներս և ունկնդիրը, եղանք ներկան այդ դրամատիկ իրադարձությունների...

Ամոռանալի օրեր էին: Բոլոր մասնակիցներս գտնվում էինք հոգևոր երանության և վերելքի մեջ...

Սարգիս Թորոսյանն առաջին տենորն էր հայ երգարվեստում, ով մեծ հաջողությամբ կերպարանավորեց, իրականացրեց Ավետարանիչի խոսքը և բարձրացավ այն պատվանդանը, որն իրավամբ իրեն է պատկանում: Նրա ծավալուն գործունեությունից՝ օպերային թատրոն, կոնսերվատորիա, Մայր Տաճարի երգչախմբի երկարամյա մենակատար, համերգային կյանք, ես փորձեցի մեկ-երկու շտրիխով տալ նրա ապրած ազնիվ մարդկային ու ստեղծագործական կյանքից ընդամենը մեկ դրվագի պատմությունը: Դրվագ, որն առանձնահատուկ տեղ գրավեց հայ կատարողական երգարվեստի պատմության մեջ:

...Ուրախության մի զգացում եմ ունենում, երբ հիշում եմ Սարգիսին՝ իր թախճոտ աչքերով, անկեղծ ժպիտով և տխրության զգացում, որ ոչ մեծ տարիքում լքեց մեզ: Նաև սիրտանքի, որ ունեցել ենք իր անձի հետ շփման հաճելիությունը:

Ավարտեմ Հովհաննու Ավետարանի փոքր-ինչ փոփոխված տողով.

«Տեր, թույլ տուր Քո սիրելի հրեշտակներին տանել նրա հոգին Աբրահամի գիրկը»:

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏԱՆ
երաժշտագետ, ԵՊԿ պրոֆեսոր,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր,
ՀՀ ԳԱԱ առաջատար գիտաշխատող

...Եվ ահա Ձ. Վարդանյանի նոր գաղափարը, նոր նախաձեռնությունը. Հայ և Գերմանա-Ավստրիական երաժշտության վոկալիստների առաջին մրցույթ (4.): Գաղտնիք չէ, որ մեր կոնսերվատորիայում գրեթե անտեսված է կամ բավարար չէ գերմանական երգի, օրատորիայի և օպերայի ուսուցումը վոկալ ամբիոնում: Այնինչ առանց դրա դժվար է պատկերացնել համակողմանի զարգացած երգչի: Համաշխարհային երաժշտու-

թյան այդ հոյակապ հատվածը հաճախ այդպես էլ անցնում է շատերի կողքով: Չեն դասավանդում նաև հայ հոգևոր երգարվեստին հատուկ երգեցողության հիմունքները, թողնելով ազգային հինավուրց մասնագիտացված ավանդույթների պահպանումն ու հարատևումը կամայակալության քմահաճույքին:

Ծրագրի բարդությամբ և բարձր պահանջներով հայ և գերմանա-ավստրիական երաժշտության վոկալիստների առաջին մրցույթը չէր գիջում Մյունխենի և Յվիկաույի միջազգային մրցույթներին: Մրցույթային ծրագիրը նախատեսում էր գերմանական Lied-ի (Շուբերտ, Շուման, Բրամս, Ռ. Շտրասուս, Մալեր, Հ. Վոլֆ), օրատորիալ (Բախ, Հենդել, Հայդն), օպերային (Մոցարտ, Բեթհովեն, Վագներ, Ռ. Շտրասուս) արիանների պարտադիր կատարումը: Ոճի ճիշտ զգացողության հետ մեկտեղ հաշվի էր առնվում գերմաներենի արտաբերման մակարդակը: Բոլոր փուլերում պարտադիր բնույթ էր կրում նաև Կոմիտասի և հայ հոգևոր երգի (շարական, տաղ, պատարագի սրբասածություն) մեկնաբանումը:

...Ի վերջո, մրցույթային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ:

Աննա Մայիլյան՝ I տեղ և հատուկ մրցանակ Կոմիտասի երգերի լավագույն կատարման համար: Սարգիս Թորոսյան՝ I տեղ և հատուկ մրցանակ օրատորիալ արիայի լավագույն կատարման համար: Կարինե Բաբաջանյան՝ II տեղ և հատուկ մրցանակ Lied-ի լավագույն կատարման համար: 3-րդ տեղը կիսեցին Արծվիկ Դեմուրյանը և Լիաննա Վարդանյանը:

...Կարծում եմ, ունկնդիրների հիշողության մեջ դեռ երկար կմնան Ս. Թորոսյանի՝ Բախի «Մագնիֆիկատից» և Մոցարտի «Առևանգում հարեմից» օպերայի արիանների, բարդ մեծածավալ միաձայնային ձևերին պատկանող Պատարագի Հրեշտակայինի և Ն. Շնորհալու «Ի գերեզման» տաղի, կոմիտասյան «Կոմնկի» փայլուն կատարումները:

Հոգևոր երաժշտության առաջին փառատոնը (5.), որը նվիրված էր Հայոց դարձի 1700-ամյակին, [...] բացվեց Յ. Ս. Բախի կոթողային ստեղծագործություններից մեկի՝ «Չարչարանքներ ըստ Հովհաննո» օրատորիայով, որն ամբողջական տեսքով առաջին անգամ էր հնչում Հայաստանում: Դժվար է գերազանահատել այդ իրադարձության նշանակությունը մեր մշակութային կյանքում: Այն միանշանակ պետք է դասվի հայ ժամանակակից կատարողական արվեստի երևելի ձեռքբերումների շարքը:

Փառատոնի կազմակերպիչ և գեղարվեստական ղեկավար, անվանի դիրիժոր Զավեն Վարդանյանը, որը հայտնի է որպես խորաթափանց երաժիշտ և հասարակական գործիչ, տարիներ շարունակ փայփայել է տվյալ ստեղծագործության կատարման գաղափարը: [...]

Հայ և Գերմանա-Ավստրիական վոկալիստների առաջին հանրապետական մրցույթի դափնեկիր Սարգիս Թորոսյանը առաջին հայ տեևորն է, որն ամբողջությամբ կատարեց Ավետարանիչի երգամասը և հնչեցրեց այն վարպետորեն, գեղարվեստական առումով համոզիչ: «Չարչարանքները» կամ, ինչպես ընդունված է

անվանել, «Յոհաննես Պասիոնը» 2. Վարդանյանի մեկնաբանմամբ աչքի ընկավ ոճի անվրեպ զգացողությամբ, զարգացման ամբողջականությամբ, զուսպ և հավասարակշռված հնչողությամբ, զարգացման ամբողջականությամբ և դրամատուրգիական համամասնությունների ճիշտ շեշտադրումով: Կարևորն և հույժ այժմեականը Վարդանյանի մեկնաբանման համահունչ լինելն է Բախի երաժշտության համաշխարհային կատարողական արվեստում այսօր առկա առաջավոր միտումներին, որոնք ձգտում են վերականգնել այդ դարաշրջանի կատարողական ավանդույթները՝ միևնույն ժամանակ չդառնալով թանգարանային: Տվյալ դեպքում դա դրսևորվեց տեմպերի ավելի զգայուն բնույթի, գործիքային ձայնարտաբերման կերպի, ֆակտուրայի անկաշկանդ ծավալման, ձայների բնական ու պարզ շարժման, ակտիվ, եռանդուն գեներալ բասի, մոտիվների հստակ ու բնութագրիչ արտիկուլյացիայի, ռեչետատիվների մատուցման մեջ: Այս բոլորը դիտելի է որպես տվյալ կատարողական ոճը սերմանելու առաջին և լուրջ փորձը Հայաստանում:

ՌՈՒԲԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ
դիրիժոր, ԵՊԿ պրոֆեսոր,
ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ

Սարգիսին գիտեմ դեռ ուսանողական տարիներից. մենք սերնդակիցներ ենք: Առաջատար տեևոր. ձայնի նուրբ տեմբր, կոլորիտ, մեծ դիսպլազոն՝ այդ առումով ոչ մի դժվարություն չունենր... Յավոք, մեր համագործակցությունն ակտիվ չի եղել, ընդամենը երկու անգամ ենք հանդիպել բեմում...

Առաջինը Լորիս Ճգնավորյանի «Փորձություն» ավետարանական թեմայով կանտատոն էր, որ 1999-ի դեկտեմբերին իմ ղեկավարությամբ հնչեց Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի, երգչախմբի ու մենակատարների կատարմամբ: Պետք է ասեմ, որ տեևորի ձայնաբաժինն առաջարկվել էր մի քանի կատարողի, բայց միայն Սարգիսը կարողացավ հաղթահարել և հաջողությամբ պսակել այդ դժվարին ստեղծագործությունը, որը հեղինակը գուր չէր «Փորձություն» անվանել: Ի դեպ, թողարկվել է այդ ստեղծագործության CD:

Երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ 2008 թվականին Երևանի Ա. Սպենդիարյանի անվան ազգային օպերային թատրոնում՝ Ավետ Տերտերյանի «Երկրաշարժ» օպերայի բեմադրության ընթացքում: Սարգիսն էր վրստահված հոգևոր առաջնորդի՝ Քարոզչի դերը: Ի դեպ, ներկայումս թատրոնը դիմել է ինձ այդ ներկայացումը վերականգնելու առաջարկով, և պետք է ասեմ, որ ինձ համար մեծ խնդիր է լինելու Ս. Թորոսյանին փոխարինող գտնելը: Այդ դերերգն ինտոնացիոն, ռիթմիկ տեսակետից շատ բարդ է, բայց Սարգիսը միանգամից զգաց դերը՝ առաջին օրվանից անսխալ, ստարիլ երգելով իր պարտիան: Օպերայի VI պատկերում, երբ թնդում է նվագախմբի, մեծ քառաձայն և փոքր կանանց երգչախմբերի գերհագեցած հնչողությունը, տեևորը բոլորովին այլ տոնայնության մեջ կարծես ճեղքում է այդ երաժշտական հեղեղը: Սարգիսն իր հնչեղ ձայնով դա հրաշալի էր կատարում:

Իր մարդկային տեսակը շատ քիչ է հանդիպում, եզակի է: Առաջատար մասնագետ լինելով Սարգիսը երբեք չգոռոզացավ: Շատ նվիրված մանկավարժ էր: Պարզ ու ազնիվ իր մարդկային նկարագրով երկար տարիներ ծառայեց Մայր Աթոռի երգչախմբում, կյանքում և արվեստում ամենից վեր դասելով հոգևոր արժեքները:

ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ
խմբավար, ԵՊԿ պրոֆեսոր,
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
ՀՀ երաժշտական ընկերության նախագահ

Այսօր, երբ Հայաստանում պաշտոնապես հռչակված է երիտասարդներին առաջավոր դիրքեր համարձակորեն վստահելու քաղաքականությունը, դժվար է պատկերացնել, որ տարիներ առաջ, մասնավորապես 1980-1990-ականներին, բոլորովին էլ այդպես չէր: Եվ ոչ միայն քաղաքական ու հասարակական դաշտում՝ այլ ամենուրեք, նաև արվեստում: Մեծ բեմեր նվաճելու ճանապարհին երիտասարդները հանդիպում էին լուրջ խոչընդոտների, ու հազվադեպ էր պատահում, որ օրինակ՝ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի վոկալ բաժնի շրջանավարտն աշխատանքի հրավեր ստանար երկրի գլխավոր օպերային թատրոնից: Ընդ որում, միանգամից մենակատարի կարգավիճակով՝ մի շարք պատասխանատու գլխավոր դերերգեր կատարելու առաջարկով:

Բայց հենց այդպես եղավ Սարգիս Թորոսյանի պարագայում: Դա վկայությունն է այն իրողության, որ նա արդեն այդ տարիներին տիրապետում էր ոչ միայն իր գեղեցիկ ու յուրօրինակ ձայնի՝ քնարական տենորի կատարողական գաղտնիքներին, այլև հասուն անձնային և պրոֆեսիոնալ որակներ ուներ: Ուներ նաև փորձ՝ Օպերային ստուդիայում տարիներ շարունակ աշխատելու շնորհիվ, նաև հարուստ երգացանկ, որ ժամանակի ընթացքում էլ ավելի ընդլայնվեց:

Սարգիսի կատարողական ոճի մասին խոսելիս հատուկ ուշադրություն կհրավիրեի նրա առզանության, ճշգրիտ արտասանության վրա՝ անկախ լեզվից՝ լինելով դա հայերեն, ռուսերեն, իտալերեն, գերմաներեն, թե այլ լեզվով գրված ստեղծագործություն: Դա մեծ ներքին կոլտուրայի մասին է վկայում, այն մասին, որ ապրելով և ստեղծագործելով Հայաստանում, նա ունակ էր աշխարհը ճանաչելու ու զգալու տիեզերական ընդգրկմամբ և խորությամբ:

Ոչ միայն օպերային, այլև կամերային ժանրում նշանակալի ձեռքբերումներ ուներ: Դեռ այսօր էլ պարզ հիշում եմ այն վառ տպավորությունը, որ ստացա նրա ելույթից Կոմպոզիտորների Միության դահլիճում՝ հայ կոմպոզիտորների հերթական պլենումի համերգներից մեկում: Սարգիսը ներկայացրեց ժամանակակից հայկական ռոմանսի մի շարք նմուշներ. հնչեցին Է. Աբրահամյանի, Է. Բաղդասարյանի, Գ. Չթչյանի, Ռ. Պետրոսյանի, Վ. Կոտոյանի ստեղծագործությունները: Տասնամյակներ անց ականջումս այս պահին դեռ հնչում է Կոտոյանի հազվադեպ կատարվող «Բնչպես երագ» ռոմանսը Թորոսյանի յուրօրինակ մեկնաբանությամբ:

Միրված մանկավարժ էր ԵՊԿ պրոֆեսոր Սարգիս

Թորոսյանի Թորոսյանը: Բազմիցս լինելով Պետական քննական հանձնաժողովի նախագահ, կարող եմ վկայել նրա մանկավարժական հաջողությունների, ուսանողներին նվիրվելու, նրանց ճակատագրերին սրտակցությամբ և հոգատարությամբ վերաբերվելու մասին: Շատ ճիշտ էր ընտրում ուսանողների ավարտական ծրագրերը՝ բացառիկ մանկավարժական «հոտատու-թյամբ» գտնելով ոսկե միջինը ուսանողի ձայնաձայնի, ձայնի տեսակի հնարավորությունները շահեկան կերպով ներկայացնելու առումով: Ընդ որում, հաջողության էր հասնում ոչ միայն տղաների, այլև աղջիկների հետ աշխատանքում: Նրան հաջողվում էր ճիշտ կողմնորոշել ուսանողներին, նրանց պրոֆեսիոնալ հասունացման ճանապարհին սովորեցնել հաղթահարել բազում խընդիրներ, այդ թվում՝ գրագետ ձայնատարության, ֆրագավորման հարցն ընդգծելով գրական տեքստի հանդեպ ուշադիր լինելու անհրաժեշտությունը և այլն: Վերջին տարիներին դասավանդում էր նաև Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում՝ արդեն վաղ տարիքից երեխաներին հաղորդակից դարձնելով գրագետ, պրոֆեսիոնալ երգեցողության գաղտնիքներին:

Իր ազնիվ ու համեստ մարդկային կերպարին համահունչ էր երկար տարիների Ս. Գայանեի, այնուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երգչախմբերի մենակատարի գործունեությունը: Կոմիտասի, Մակար Եկմայանի, Խորեն Մելիսանեջյանի Պատարագների կատարումն ու ձայնագրումը մեծ ներդրում էին հայ երգչախմբային արվեստի պատմության մեջ:

Այսպես ամենուր հավասարապես հարյուրտոկոսանոց նվիրվածությամբ նա ծառայում էր թե՛ օպերային թատրոնում, թե՛ կոնսերվատորիայում, թե՛ եկեղեցում և թե՛ տանը՝ իր սիրելի ընտանիքին...

Սարգիս Թորոսյանի մասին հիշատակի խոսքս ուզում էի ավարտել՝ նշելով ՀՀ Վաստակավոր արտիստի նրա կոչման մասին, բայց... հենց այս պահին ինձ համար անսպասելիորեն բացահայտեցի, որ հայ արվեստի այդ երախտավորը ոչ մի կոչման չարժանացավ...

Սակայն իր գործը մնայուն արժեք ունի հայ արվեստում՝ գործն է անմահ...

ՄԻՔԱՅԵԼ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
մեներգիչ, ԵՊԿ պրոֆեսոր,
ՀՀ արվեստի վաստակավոր արտիստ,
Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի
ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչ

Մենք ընտանիքներով երկար տարիներ մտերիմ ենք եղել Սարգիս Թորոսյանի հետ, բազում ուրախ և տխուր օրեր անցկացրել միասին, ելույթներով հանդես եկել աշխարհի տարբեր բեմերում, երգել ենք Էջմիածնի երգչախմբում, միասին դասավանդել Երևանի կոնսերվատորիայում: Այնպես որ, կարելի է ասել, ես նրա ամբողջ ստեղծագործական կյանքի ականատեսն եմ եղել: Եվ գիտե՞ք ինչն է զարմանալի. մասնագիտական վերելքի ճանապարհին նա բոլորովին չփոխվեց, միշտ նույն զուսպ ու համեստ Սարգիսը մնաց՝ անկախ բոլոր հանգամանքներից:

Դեռ ուսանողական տարիներին, երբ Օպերային ստուդիայի ինսպեկտորն էր՝ պատասխանատուն, միշտ ժամանակին բաժանում էր պարտիաները, ճշգրիտ կատարում դիրիժորի բոլոր հանձնարարությունները՝ աննկատ, առանց որևէ ցանկության աչքի ընկնելու կամ երգչախմբի մյուս անդամներից ինչ-որ բանով առանձնանալու: Եվ տարիներ անց, երբ դարձավ ազգային օպերային թատրոնի մենեջրի, և կատարելով գլխավոր դերերգերը, հաճախ առանց փոխարինողի, փաստորեն, գլխավոր դեմքն էր այդ պահին թատրոնում, որից կախված էր ամբողջ ներկայացման լինել-չլինելը, հյուրախաղերի կայանալ-չկայանալը, ամբողջ անձնակազմի հոռոտար ստանալու-չստանալու հարցը... Սարգիսը նորից նույն պահվածքն ուներ: Օդանավակայանում կկանգներ հերթի պոչին՝ պատրաստակամությամբ իր տեղը զիջելով երգչախմբի արտիստներին, կամ բարձրանալով ավտոբուս և առջևում հարմար տեղ չգտնելով, հանգիստ ու անվրդով քայլերը կուղղեր դեպի վերջին շարքը, ամբողջ ճանապարհին անտեղի թոթալով հետևի նստատեղում: Պատկերացրեք մի պահ ժամանակակից մեր օպերային աստղերի պահվածքը նույն իրավիճակում՝ հաստատ տարբերվող է:

Կյանքում ամեն ինչին շատ լուրջ էր վերաբերում՝ մեծ նվիրումով, համարյա ինքնամոռացության, ինքնագոհաբերության աստիճանի: Հայ ավանդական ընտանիքում տղամարդու հոգսերն՝ աշխատած գումարը տուն հասցնելը, առևտուր անելը ու ծանր-ծանր տուն բերելը, ամեն ինչ սարքի պահելն ու դրանից գոյիս հանելը, սեփական ձեռքերով իր հայրական բնակարանի կամ նույնիսկ շենքի կառուրը վերանորոգելը... Այս ամենը խոնարհաբար կատարում էր Օպերային թատրոնի աստղը, և նրա մտքով անգամ չէր անցնում դիմել բանվորների կամ արհեստավորների օգնությանը: Դա էլ էր իրենը՝ հայ տղամարդու կերպարն ու պահվածքը պահպանելու միջոց: Հիմա, որ մեկը երեկոյան ներկայացմանը մի երկու տող պարտիա ունի երգելու, ամբողջ օրը բոլորն իր շուրջը պար են գալիս, որ ներվերը հանգիստ պահի, կոկորդը չմրսեցնի, ճիշտ ձևով սնվի և այլն: Բայց երբ կարդում ես մեծ երգիչների կենսագրականները, համոզվում ես, որ այդպես չի դասավորվել իրական մեծություններից շատ-շատերի կյանքը: Ասենք, Էրիկո Կառուզոն, որ բեռնակիր է եղել, զիջերներով ծանրություններ է քարշ տվել ու շատ վատ էլ սնվել է, երեկոյան աստվածային ձայնով երգել ու խաղացել է իր անմոռանալի դերերգերը...

Կան երգիչներ, որոնք իրենց կոչումն ամեն բանից վեր են դասում: Թողնում են ընտանիքը, հայրենիքը, ամեն ինչ պատրաստ են զոհելու հանուն առաջխաղացման «կարիերայի», մեծ բեմերում կայանալու հնարավորության՝ ոչինչ չկա դրանից թանկ ու կարևոր: Նար Հովհաննիսյանը, ով նույնիսկ չամուսնացավ, դրա վատ օրինակն է, և իսկապես, մինչ օրս ինձ համար անգերազանցելի են նրա մի շարք կատարումներ, ասենք, Բազիլիոյի դերերգը Ռոսսինիի «Սևիլյան սափրիչը» օպերայից կամ Մուտրզակու «Լու» («Ե.ռ.ռ.») ռոմանսը:

Բայց ոչ Սարգիսը, և ոչ էլ ես այդպիսին չենք եղել, և եթե ինչ-որ բանի էլ չենք հասել, դրանում միայն մենք

ենք մեղավոր: Բայց մենք ուրիշ առաջնահերթություններ ունեինք կյանքում. սարելու իմաստը տեսանք ոչ միայն արվեստի, այլև ընտանիքի, երեխաների մեջ, երեխայիդ ամեն օր գորգուրելու, նրա առաջին քայլերով ու բառերով հրճվելու, միշտ հարազատներիդ հետ լինելու երջանկության մեջ, քո երկրում հայ արվեստը զարգացնելու, հայ բեմը զարդարելու մեջ... Եվ ո՛վ գիտե՞ ի՞նչն է ճիշտը... Ամեն մարդ յուրովի է փնտրում այդ անլուծելի հարցերի պատասխանը և իր իսկ կյանքով է վճարում ճշմարտությունը բացահայտելու գինը...

Գ Ա Յ Ա Ն Ե Գ Ե Ղ Ա Մ Յ Ա Ն
մենեջրուհի, պրոֆեսոր,
ԵՊԿ մենեջրոգնության ամբիոնի վարիչ

Մեր սերնդի ճակատագիրը լավ չդասավորվեց. քաղաքական ցնցումների, երկրաշարժի, պատերազմի, էներգետիկ ճգնաժամի, մասսայական արտագաղթի հետևանքով երկրի մշակութային կյանքը կոլապսի մեջ հայտնվեց: Փակվում էին մշակութային և կրթական օջախներ, չջեռուցվող դահլիճներ: Սա է եղել մեր սերնդի ծաղկուն շրջանի միջավայրը. մենք, փաստորեն հայտնվեցինք Խորհրդային Միության ավերակների տակ, կամ ավելի ճիշտ, պատկերավոր ասած՝ կործանված անցյալի և դեռ չձևավորված ապագայի արանքում՝ օդի մեջ: Շատերը բռնեցին օտարության ճանապարհը, և այսօր նրանցից ոմանք համաշխարհային բեմերից պատվով են հնչեցնում Հայաստանի անունը:

Իսկ մյուսները մնացին Հայրենիքում՝ պահելու հարուստ մշակութային ավանդույթները և փոխանցելու դրանք հաջորդ սերունդներին, ինչի շնորհիվ կարողացանք փրկել և այսօր նոր որակի հասցնել մեր ազգային մշակույթը: Սարգիս Թորոսյանը մեր երկրի այդ անխոնջ պահապաններից էր, ով ամբողջ ստեղծագործական կյանքում անմնացորդ ծառայեց իր Հայրենիքին:

ԵՊԿ-ում ուսանելու տարիներին Սարգիսի հետ մենք համակուրսեցիներ ենք եղել: Հումորով, անմիջական պատանի էր, շատ ուշադիր բոլորի նկատմամբ: Չէր մոռանում ոչ մի մանրուք, մտապահելով ոչ միայն բոլորիս ծննդյան օրերը, այլև փոքր հաջողությունները և ամենաչնչին առիթով միշտ հիշեցնում էր, բարձրաձայնում դրանց մասին: Բարի էր իսկապես, նախանձ չուներ: Արտակարգ ընկեր էր:

Անչափ աշխատասեր էր: Իմիջիայլոց, կյանքում հույսը դնում էր միայն իր վրա, ոչ մեկից ոչինք չէր ակրեկալում: Դեռ ուսանողական տարիներից մենք միասին սկսեցինք աշխատել կոնսերվատորիայի Օպերային ստուդիայի երգչախմբում՝ իր գործի հիանալի գիտակ, խմբավար Վալերիա Ալեքսանյանի ղեկավարությամբ (Ստուդիայի ղեկավարն էր Ռաֆայել Մանգասարյանը): Օպերային ստուդիայի երգչախմբը ճանաչված կոլեկտիվ էր հանրապետությունում, մենք հանդես էինք գալիս համերգներով՝ բավականի բարդ և բազմազան ծրագրերով:

Ուզում եմ առանձնահատուկ նշել Սարգիսի մեծ սերը հոգևոր երաժշտության հանդեպ: Թեև խորհրդային տարիներին ուսանողների մասնակցությունը Սուրբ

Պատարագին առանձնապես չէր խրախուսվում, բայց մենք՝ երգեցողության բաժնի ուսանողներս, շատ էինք տարված Լուսինե Ջաքարյանի արվեստով և նրա միջոցով՝ հայ հոգևոր երաժշտությանը: Այդ նվիրվածությունը Սարգիսը պահպանեց մինչև իր կյանքի վերջը՝ ծանայելով Էջմիածնի Մայր տաճարի երգչախմբում:

Դրա հետ մեկտեղ չէր վախենում, չէր խուսափում ժամանակակից երաժշտությունից, սիրով էր երգում ոչ միայն անվանի հայ կոմպոզիտորների, այլև իր սերընդակիցների կամ իրենից կրտսեր, նույնիսկ սկսնակ կոմպոզիտորների ստեղծագործությունները:

...Էդուարդ Սադոյանի «Գրիգոր Լուսավորիչ» օպերայում մենք նորից հանդիպեցինք, այս անգամ Սպենդիարյանի անվան Օպերային թատրոնի բեմում: Թեև եղավ միայն համերգային կատարում, բայց բեմական զգեստներով, գրիմով՝ ամբողջական կերպարներով: Սարգիսը փայլուն մարմնավորեց Տրդատ արքայի կերպարը: Շատ հաճելի էր աշխատել նրա հետ. ուներ լավ անսամբլային զգացողություն, բեմում նույնպես, ինչպես որ տարիներ առաջ լսարանում, նա իրենով չէր տարված, շատ նրբազգաց էր և ուշադիր իր հետ հարթակում գտնվող արտիստների հանդեպ: Բեմելը հրաշալի անցավ, օպերան հաջողություն ունեցավ և մեծ ոգևորությամբ ընդունվեց հանդիսատեսի կողմից:

Սարգիսն ուներ սպեցիֆիկ ձայնատարություն, արտաբերման ձև, տեմբր և դրա շնորհիվ նրա ձայնը միշտ ճանաչելի է, ոչ մեկի հետ չէիր շփոթի:

Օտար շրջապատում նա իրեն մի փոքր կաշկանդված էր զգում, զուսպ պահվածք ուներ, բայց մտերիմ ընկերների հետ, որի թվին էս համարձակորեն ինձ էլ կդասեի, արտահայտվում էր իր ողջ էությանը՝ ամեն ինչ սրտին մոտ ընդունող, խորը ապրող մարդ էր: Շատ շուտ էր վիրավորվում, մենք կատակի էինք տալիս, փորձում շեղել ուշադրությունն իրեն խայթող խոսքից, բայց նա դեռ երկար այդպես ազդված էր մնում...

Հրաշալի հայր էր՝ նվիրված իր ընտանիքին և երբ ճակատագիրն իրեն փորձության ենթարկեց, ոչ մի կերպ չէր կարողանում համակերպվել դաժան իրականության հետ... Մենք երկար գրուցում էինք կյանքից, աշխարհից, և էս մինչ օրս մեծ ջերմությամբ եմ հիշում այդ հուզիչ պահերը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ
մեներգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ,
Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի մեներգչուհի, ԵՊԿ դոցենտ

Ուզում եմ սրտանց մի քանի խոսք ասել իմ կոլեգայի, բայց նաև ընկերոջ՝ Սարգիս Թորոսյանի մասին: Միասին ենք սովորել, այնուհետև շարունակել մեր ընկերական շփումը և կոնսերվատորիայում, և օպերային թատրոնի բեմում:

Հետաքրքիր գրուցակից, անզուգական հայր և ամուսին ընտանիքում, նվիրյալ և հավատարիմ ընկեր, հոյակապ մարդ: Ամեն տարի Մարտի 8-ին, ծննդյան օրվա առթիվ առաջին շնորհավորանքը ստացել եմ Սարգիսից: Ունենալով շատ գեղեցիկ ձայն, նա նաև հոյակապ գուրբնկեր էր բեմում: Միասին երգել ենք գլխա-

վոր դերերը «Անուշ», «Տրուբադուր», «Պողիկտոս» օպերաներում, մասնակցել ենք բազմաթիվ համերգների, ելույթ ենք ունեցել Իսպանիայում, Մոսկվայում, և միշտ բոլորս արժանացել ենք նրա ջերմ վերաբերմունքին և ուշադրությանը:

Կարոտում եմ և միշտ հիշում եմ իմ ընկերոջը՝ հոյակապ մարդ Սարգիս Թորոսյանին:

ԻՐԻՆԱ ՉԱԲՅԱՆ
օպերային երգչուհի,
ՀՀ վաստակավոր արտիստ

Սարգիսն ուներ յուրահատուկ և անկրկնելի ձայն: Հիանալի ընկեր էր, ուշադիր և հոգատար: Պարտաճանաչ և ազնիվ ոչ միայն աշխատանքում, այլև ընկերական հարաբերություններում:

Սարգիսը շատ կարևոր գույն էր երաժշտական աշխարհում, և նրա կորուստն անդառնալի է:

ԱՆՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ
երգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ,
ԵՊԿ պրոֆեսոր

Սարգիս Թորոսյանին ճանաչում եմ դեռ 90-ականներից: Միասին շատ համերգների ենք մասնակցել Երևանի տարբեր համերգասրահներում: 1990-ականների մութ ու ցուրտ տարիներին նման համերգները հրաշալի առիթ էին, որպեսզի մոռանալիք խնդիրների մասին և արվեստի միջոցով ապրելիք ու ապրեցնելիք մյուսներին: Սարգիսի հետ միասին բազում համերգների մասնակից ենք եղել և նույնիսկ միասին հաղթել ենք Գերմանա-Ավստրիական և Հայ երգի հանրապետական մրցույթում: Այդ մրցույթը բավականին բարդ էր իր ծրրագրով, բայց հաղթահարեցինք՝ միասին բաժանելով առաջին տեղը:

Սարգիսի հետ հետագայում դարձանք կոլեգաներ Երևանի պետական կոնսերվատորիայում: Երբ միջանցքում հանդիպում էինք, բռնվում էինք հաճելի զրբույցի, և էս բնականաբար, դասից ուշանում էի սպասեցնելով ուսանողներին, սակայն հաճելի մարդու հետ զրույցը միշտ էլ կարևոր է: Սարգիսը երբեք չէր գանգատվում կյանքից, էս մյուսներից էի լսում իր առողջական և այլ խնդիրների մասին: Բայց այդ վիճակում գտնվելով նա կարողանում էր այնպես անել, որ ոչ միայն չձանրաբեռնի դիմացիներն իր պորբլեմներով, այլ նույնիսկ ինքը դրական լիցքեր հաղորդի զրուցակցին: Ինձ ուրախ պատմություններ էր պատմում, որ տրամադրությունս բարձրանա: Այդ ամենը բնորոշ է միայն բարի, ազնիվ, ուժեղ և հավատքով լի մարդուն, ինչպիսին էր և մեր սիրելի Սարգիսը:

ՄԿՐՏԻԶ ՄԿՐՏՅԱՆ
մեներգիչ և խմբավար
(Ֆրանսիա)

Երգարվեստի իսկական մշակ՝ եթե մեկ նախադասությամբ բնորոշելու լինեք Սարգիս Թորոսյանին: Սարգիսի հետ մենք ծանոթացանք Ռոմանոս Մե-

լիքյանի անվան ուսումնարանում նրա ուսումնառության առաջին տարվանից և դարձանք ընկերներ: Այնուհետև նրա երաժշտական ամբողջ գործունեությունն ընթացավ իմ աչքի առաջ: Սարգիսն այն երգիչներից չէր, որոնք մեծ աղմուկով մտնում են երաժշտական ասպարեզ և կարճ ժամանակ անց մարում: Կյանքում չափազանց ուղղամիտ և ճշտապահ, նա այդպիսին էր նաև իր արվեստում: Օժտված գեղեցիկ ձայնով՝ նա դեպի երգարվեստի բարձունքն էր գնում քայլ առ քայլ՝ ամենօրյա լուրջ աշխատանքով զարգացնելով իր կարողությունները, խորացնելով իր գիտելիքները, և երբեք տուրք չտալով էժան զանգվածայնություն ու անուր բերող արտաքին էֆեկտներին: Հարգանքով էր վերաբերվում իր բոլոր գործընկերներին, նախանձն ու չարությունը խորթ էին նրան:

Մեր համատեղ ելույթներից ամենանշանակալին էր «Անուշ»-ը Ա. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում, որտեղ Սարգիսը հանդես էր գալիս Սարոյի, իսկ ես՝ Մոսիի դերում: Հիշում եմ, թե ինչպես ներկայացումների ժամանակ լուրջ երգեցողության ու խաղի արանքում դեռ կարողանում էինք կատակել ու լիաթոք ծիծաղել՝ արտաքուստ ոչինչ ցույց չտալով հանդիսատեսին: Սարգիսը ոչ միայն մտածված ու կենտրոնացած զբաղվում էր իր անելիքով, այլև հոգ էր տանում իր խաղընկերների մասին: Իմ առաջին ներկայացմանը հարսանիքի տեսարանում՝ կոխի ժամանակ, ցանկանալով առավել բնական երևալ, ես չափից ավելի տարվեցի բեմական խաղով: Սարգիսն ականջիս շնչաց. «Հանգիստ, հանգիստ, սրանից անմիջապես հետո մեծ արիա պիտի երգես, դրա մասին մտածիր, շատ ուժ մի տուր հիմա, թե չէ շունչդ կկտրվի...»:

Սարգիսին իրավամբ կարելի է դասել մեր բեմի՝ Սարոյի լավագույն դերակատարների շարքին: Նրա Սարոն անկեղծ էր ու բնական: Բայց նրա օպերային դերերի գագաթնակետը եղավ Պողիկտոսը Գ. Դոնի-ձետտիի «Պողիկտոս» օպերայում: Այստեղ Սարգիսը փայլեց իր ներկայանալի շքեղ արտաքինով, գեղեցիկ, անկաշկանդ վոկալով:

Ցավոք շատ շուտ հեռացավ կյանքից, շատ անելիքներ թողնելով անկատար:

**ԱՆՆԱ ԱԶԻԶՅԱՆ,
կոմպոզիտոր, մեթոդիստ-մանկավարժ**

Սարգիս Թորոսյանը պատկանում է այն մտավորականների թվին, որոնք ամենօրյա իրենց աշխատանքն ընկալում, օր օրի մի քար ավելացնելով՝ մասնակցում են ազգային երաժշտական մշակույթի տաճարի կառուցմանը: Նա այն մտավորականներից էր, որ աշխատում են առանց բարձրագույն ծափահարություններ կամ գովազդող մեծարումներ ակնկալելու: Այդպիսին էր իր սպերելու կերպը:

Ուներ մաքուր, պայծառ, զուլալ հնչերանգ: Ուներ կատարման կուլտուրա, ճաշակ: Իր կոչումը հայր, ամուսին, լավ ընկեր լինելն էր, երգելն ու մեներգեցողության գաղտնիքներն իր ուսանող-աշակերտներին փոխանցելն էր: Վերջին տարիներին աշխատում էր նաև երաժշտական դպրոցում: Աշխատում էր նվիրումով և

սիրով: Ուսանողներն ու երեխաները նրան սիրում էին: Սարգիսի առաքինության մասին է վկայում նրա վերաբերմունքը հայկական երգարվեստի, թատերական արվեստի ավագ սերնդի ներկայացուցիչների նկատմամբ:

Քայլող, շնչող ժամանակագրություն-վկայություն էր Սարգիս Թորոսյանը: Գեղեցիկ, հարգալից պատմելաժողովուրդներ: Օհան Դուրյան, Գոհար Գասպարյան, Տաթևիկ Սազանդարյան, Տիգրան Լևոնյան, Արման Կոթիկյան... Նրանցից յուրաքանչյուրի հետ կապված բազմաթիվ ուսանելի ու հետաքրքիր պատմություն-վկայություններ, աֆորիզմներ ուներ պահած, որոնք սիրով ունկնդրում էի ցուրտ ու մութ տարիներին, երբ հաճախ հյուրընկալվում էի իրենց հյուրասեր, ջերմ հարկի տակ: Երանի ժամանակին ձայնագրած լինեինք ու այսօրվա համար պահպանեինք այդ զարմանալի, նուրբ հումորով համեմված, գեղեցիկ, ուսանելի, մտորելու արժանի նրա պատմությունները... Մեր ընկերությունը սովորական հայկական տարբերակով ձևավորված ընկերություն էր: Սկզբում ես ու նրա կինը՝ Կատյան, Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանում ուսանելու տարիներից ընկերացանք, հետո մեր ամուսինները՝ Աշտն ու Սարգիսը, հետո՝ երեխաներն իրենց խաղերով ու «դադարության» համար վեճերով, հետո՝ էլի խաղերով: Ինչքան էինք ծիծաղում, ուրախանում այդ խաղ-վեճերի առիթով, երբ երեխաների ինքնամոռաց ճիչ-աղաղակով համեմված զուլալ, բարձրագույն աղմուկը հասնում էր իր գագաթնակետին: Հետո աղմուկ-աղաղակը միանգամից դադարում էր, երբ իջնում էին Քասախի կիրճ, գետակի մոտ... ու նորից ետ սլանում տուն: ...Երբ մեծացան, խաղը վերածվեց գրույցերկիստությունների, ինտելեկտուալ բանավեճերի...

Հ. Թումանյանի խոսքերով գրված «Հեյ ջան, տղերք» երգիս ու Սիփան Շիրազի խոսքերով գրված՝ «Քանի որ լույս ես, հոգիս», «Ամեհին» ռոմանսներիս առաջին կատարողն է Սարգիսը:

«Հեյ ջան, տղերք»-ի կատարմանը բնորոշ է կոչող, հորդորող, բայց ոչ հրամայական ազնվական հուզակալությունը: Ս. Շիրազյան շարքին բնորոշ է փիլիսոփայական-հայեցողական, նուրբ ու զգացմունքային մեկնաբանությունը:

Անկեղծ, լուսավոր, խոհական կատարումներ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Դանիել Երաժիշտ. Սրբազնագործություն, //Առավոտ, 17.04.1999 թ.: Daniel Yerazhisht. Srbaznagortsutyun, //Aravot., 17.4.1999 th.
2. Սարգսյան Ս. Կ., Մոցարտը, Արաքս Դավթյանը և ուրիշներ, //Ազգ, 31.10.1992 թ.: Sarkisyan S. K., Mozart', Araqs Davthyan' ev urishner, //Azg, 31.10.1992 th.
3. Асмарян Н. Т., Шедевр оперной классики., //Республика Армения, 3-10.8.2001. Asmaryan N. T., Shedevr opernoj klassiki., //Respublika Armeniya, 3-10.8.2001.
4. Արևշատյան Ա. Ս., Մտորումներ մրցույթից հետո, //Ազգ», 19.11.1995 (կրճատված): Arevshatyan A. S., Mtvorumner Mrtzuytitz hetvu, //Azg, 19.11.1995 (krdchatvats).
5. Արևշատյան Ա. Ս., «Չարչարանքներ ըստ Հովհաննես»

սի» օրատորիան, Երևանում (հատված), //Երաժշտական Հայաստան, 1(2)2000, էջ 18-19, Եր.: Արևշատյան Ա. Ս., « «Չարչարանքներ ըստ Հովհաննեսի» օրատորիան, Երևանում» //Հայաստանի Հանրապետություն, 7.05.1999. Arevshatyan A. S., “Charcharanqner ‘st

Hovhannesi” oratvorian Yerevanum (hatvats)”, //Yerazhshtakan Hayastan, 1(2)2000, ejj 18-19, Yer. Arevshatyan A. S., “Charcharanqner ‘st Hovhannesi” oratvorian Yerevanum”, //Hayastani Hanrapetutyun, 7.05.1999.

Բանալի քառեր. փոկալ արվեստ, Երևանի պետական կոնսերվատորիա, Սարգիս Թորոսյան, օպերային արվեստ, գերմանական օրատորիալ երաժշտություն:

Ключевые слова: вокальное искусство, Ереванская государственная консерватория, Саргис Торосян, оперное искусство, немецкая ораториальная музыка.

Keywords: vocal art, Yerevan State Conservatory, Sargis Torosyan, opera art, German oratorical music.

Տեղեկություններ հեղինակի մասին. ԵՓՐԵՄՅԱՆ ԼԻԼԻԹ ԿԱՌԼԵՆԻ (ծ.14.05.1963, ք. Երևան) երաժշտագետ, հոգեբան, սոցիոլոգ, լրագրող, բարձրագույն, ցեղապանագետ: Ավարտել է ԵՊԿ-ի երաժշտագիտական քաժիմը (1989 թ., ղեկ.՝ պրոֆեսորներ Ռ. Հ. Ստեփանյան, Ն. Վ. Դերոյան), Ռուսաստանի Պետական արվեստաբանության ինստիտուտի (ՊԱԻ, Մոսկվա, ղեկ.՝ արվ. դոկտոր Բ. Ռ. Յոլյան) ասպիրանտուրան ԵՊԿ-ի հետ համատեղ (1993 թ.), նույն ինստիտուտում պաշտպանել է քեկնաժողովական քեզը, 1995 թ., Մոսկվա: 2001-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Գործնական հոգեբանների պատրաստման կենտրոնը, 2006-ին՝ ՉԼՄ Կովկասյան ինստիտուտը՝ «տարածաշրջանագիտություն» մասնագիտացմամբ: 1996-ից աշխատում է ԵՊԿ-ում, ղրցենտ է (2002) դասավանդում է հոգեբանություն, մանկավարժություն, համընդհանուր երաժշտության պատմություն դասընթացները, 1996-ից՝ «Новое Время»-ի բիրակից է: Իր երաժշտագիտական ուսումնասիրություններում հաճախ օգտագործում է այլ գիտությունների մերթադրանքությունը՝ նորոշի լուսարաններով շատ արդիական երաժշտագիտական հարցեր, աշխատում է միջառարկայական հետազոտությունների ոլորտում, պրակտիկ հոգեբան է: Հեղինակ է մենագրության «Էդվարդ Միրզոյան՝ մանակներում և երկխոսությամբ», Եր., Տիգրան Մեծ, 2011 թ., (ուսաներեն, 616 էջ): Մասնագիտացած է էթնիկ ավանդույթի, քաղաքային ֆոլկլորի, ինչպես նաև Հայոց ցեղասպանության սերնդի-սերունդ փոխանցվող խելման խնդիրներով: Ավելի քան 20 գիտական և 500-ից ավելի հրատարակախոսական հոդվածների հեղինակ է: Կոմպոզիտորների (1997-ից) և Գրողների (2016-ից) միությունների անդամ է:

Сведения об авторе: ЕПРЕМЯН ЛИЛИТ КАРЛЕНОВНА (род.14.05.1963, Ереван) - музыковед, психолог, социолог, журналист, переводчик, генноцидолог. В 1989 окончила Ереванскую государственную консерваторию им. Комитаса по специальности "музыковедение" (кафедра теории музыки, классы проф.: Р. О. Спепаняна, Н. В. Дерояна), 1993 - аспирантуру Государственного института искусствознания (Москва, класс докт. иск. И. Р. Еолян) совместно с ЕГК. В 1995 в ГИИ (Москва) защитила канд. диссертацию. В 2001 окончила Центр подготовки практических психологов при Ереванском Государственном университете, в 2006 - Кавказский институт СМИ по специальности "Регионоведение". С 1996 по настоящее время в ЕГК ведет курс лекций по психологии, педагогике, истории музыки (бакалавриат), основы музыкальной научно-педагогической деятельности (магистратура). Доцент (2002). С 1996 является корреспондентом газеты "Новое Время". Автор монографии о композиторе Эдварде Мирзояне ("Эдвард Мирзоян в письмах и диалогах", Ер., 2011), занимается феноменом этнической традиции, вопросы городского фольклора, проблемой трансгенерационной травмы Геноцида армян, практикующий психолог. Работает в области междисциплинарных исследований, в музыковедческих исследованиях использует методы других наук, по-новому освещая проблемы музыковедения. Автор более 20 научных статей, в том числе "Этнокультурный подход в социологии музыки", "Лики этнической традиции", "Виноваты ли мы, или "Усвоенная беспомощность" как гибель "внутреннего агента", "Маргинальность как судьба", "Судьбоносный выбор (к проблеме осмысления векторов развития армянской музыки XX века)" и др., более 500 публицистических статей. Практикующий психолог, член Союзов композиторов РА (с 1997) и писателей РА (с 2016).

Information about the author: YEPREMYAN LILIT KARLEN (born of 14.05.1963, Yerevan) - the musicologist, the psychologist, the sociologist, the journalist, the translator, genocide examiner, art candidate, In 1989 graduated from YSC on specialty of musicologist (chair of the theory of music, a class of the prof. N. V. Deroyan). In 1993 got a postgraduate degree in YSC together with the State institute of Art Studies (Moscow, a class of PhD of art I. R. Eolyan). In 1995 in SIA (Moscow) protected master's thesis. In 2001 graduated from the Center of training of Practical psychologists at the Yerevan State university, in 2006 from the Caucasian mass media Institute on specialty of regional studies. In her researches uses methods in the field of musicological and interdisciplinary sciences. From 1996 to the present she teaches in YSC and she is a docent since 2002. She worked as correspondent in the newspaper "Novoe Vremya". The author of the monograph "Edward Mirzoyan in letters and dialogues", Yer., Tigran Mets., 2011., -616 P. The practicing psychologist is engaged in a phenomenon of ethnic tradition, questions of city folklore, a problem of a transgeneration trauma of Genocide of Armenians. She is the author of more than 20 scientific articles, including "Ethnocultural approach in the sociology of music," Liks of ethnic tradition, "Whether we are guilty, or " Learned helplessness "as the death of " internal agent, "Marginalization as fate," Fateful choice (to the problem of understanding the vectors of development of Armenian music of the 20th century), "etc., more than 500 journalistic articles. She is a practicing psychologist, member of the RA Composers Union of RA (since 1997) and Writers (since 2016).

Резюме

Музыковед, кандидат искусствоведения, доцент ЕГК **Лилит Карленовна Епремян.** - “Служитель искусства **Саргис Торосян**”.

Статья посвящена памяти рано ушедшего из жизни профессора ЕГК, известного певца Саргиса Торгомовича Торосяна. За свою недолгую жизнь (1956-2016) он оставил значительный след в музыкальной культуре Армении, проявив себя как всесторонне одаренный исполнитель. Солист Национального театра оперы и балета им.Спендиаряна, концертирующий исполнитель камерной музыки, он ярко проявил себя и в ораториальном жанре, а также был знатоком армянской духовной музыки. Долгие годы он являлся солистом хора при кафедральном соборе Св. Эчмиадзина. Музыковед Лилит Епремян провела ряд эксклюзивных интервью с коллегами музыканта, которые, наряду с оценкой его профессиональных достоинств, добавили личную ноту в собирательный образ певца.

Summary

Musicologist, PhD, Docent of YSC **Lilit Karlen Yepremya.** - “**Attendant of Art Sargis Torosyan**”.

The article is dedicated to the memory of the early passed away professor of YSC, famous singer Sargis Torgom Torosyan. During his short life (1956-2016) he left a significant mark on the musical culture of Armenia, showing himself as a comprehensively gifted performer. The soloist of the National Opera and Ballet Theater after Spendaryan, a concert performer of chamber music, he also proved himself in the oratory genre, and was also an expert of Armenian spiritual music. For many years he was the soloist of the choir at the Cathedral of St. Echmiadzin. Musicologist Lilit Yepremian conducted a number of exclusive interviews with colleagues of the musician who along with an assessment of his professional merits, added a personal note to the collective image of the singer.

ՍԵՐՉԵՅ ԱՐՄԵՆԻ
ՍՄԲԱՏՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու,
Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի
գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր
E-mail: office@smbatyam.am

Ն. ԶԱՐԻՖՅԱՆԻ ԱԿՈՒՍՏԻԿ ԿԻԹԱՆԻ
ԲԱԶՄԱԺԱՆԻ ԵՐԿԵՐԸ

Ն արինե Զարիֆյանն իր երաժշտությամբ, ժամանակի շունչն արտահայտող հայ երաժշտարվեստի ամենավատ կոմպոզիտորներից է: Նրա արվեստին հատուկ է ակադեմիական դասական երաժշտական ոճերի միակցումը ջազային, ժողովրդական և փոփ երաժշտության հետ, որով իր ուրույն տեղն է զբաղեցնում արդի հայ երաժշտական արվեստում: Ն. Զարիֆյանը հետամուտ լինելով իր ուսուցչի՝ Ավետ Տերտերյանի ժողովրդական և դասական գործիքների համադրման սկզբունքին ստեղծագործում է սիմֆոնիկ, կամերային, վոկալ, փոփ, ջազային, ժողովրդական, սիմֆո-փոփ երաժշտության ոլորտներում:

«Scerzo à la retro»-ն, «Ragtaim»-ը (1999 թ.), «Էլեգիա» կոնցերտի (2013 թ., ակուստիկ կիթառի և սիմֆոնիկ նվագախմբի համար) հետ միասին կազմում են յուրօրինակ եռապատում (Տրիլոգիա) ակուստիկ կիթառի համար: Առաջին երկու երկերը մեծ հաջողությամբ կատարվեցին 2018 թ. դեկտեմբերի 14-ին Արամ Խաչատրյանի անվ. համերգասրահում, հեղինակի 40-ամյա ստեղծագործական գործունեությանը նվիրված հոբելյանական համերգի ծրագրում: Նույն համերգի ընթացքում հնչեց նաև «Solea» ստեղծագործությունը՝ գրված ակուստիկ կիթառի, սոպրանոյի, սաքսոֆոնի և սիմֆոնիկ նվագախմբի համար, ՀՊԱՖՆ-ի կատարմամբ, գեղարվեստական ղեկավար՝ Էդվարդ Թովչյան: Ակուստիկ կիթառը իր յուրահատուկ հնչողությամբ ամբողջ ստեղծագործությանը որոշակի երանգ է հաղորդում: «Solea»-ում կիթառը հանդես է գալիս որպես ինքնուրույն, իր երաժշտական ինքնատիպ տեմբրային շերտով, մինչև ստեղծագործության ավարտը տանող գործիք՝ մերթ առանձնապառ, մերթ ձուլվելով ընդհանուր գունային ներկայանալի մեջ:

«Scerzo à la retro»-ն իր քնարական մեղեդայնու-

թյամբ և նուրբ հումորով հարուստ անակնկալ երաժշտությամբ գրավել էր շատերի ուշադրությունը ՀԿՄ 85-ամյակին նվիրված առաջին համերգի ընթացքում (16.9.2018 թ), որտեղ հնչեցին միայն կամերային նվագախմբային գործեր: Ն. Զարիֆյանի «Scerzo à la retro»-ն կիթառի և կամերային նվագախմբի համար (գրված 1999 թ.) հաճելի և բարձր տրամադրություն ստեղծեց նաև երաժշտական մասնագիտական միջավայրում*:

«Scerzo à la retro»-ն միամաս նվագախմբային պիես է դասական եռամաս ձևակառուցմամբ, սակայն իր մեղեդիական և ռիթմական արտահայտչամիջոցներով այն հարում է սիմֆո-փոփ երաժշտությանը:

Այն իր նուրբ գործիքավորմամբ և ճաշակով տեմբրային համադրումներով ունկնդրին տանում է քնարական, ռոմանտիկ աշխարհ՝ պահպանելով ստեղծագործության տեմբրային, դինամիկ զարգացումը և մտահղացման դրամատուրգիան:

Ն. Զարիֆյանը միակն է հայ կոմպոզիտորներից, որը պարբերաբար ակուստիկ կիթառի համար ստեղծագործում է, այն կիրառելով և որպես մենակատար, և անսամբլային գործիք ամենատարբեր ժանրերի ստեղծագործություններում, որոնք հիմնականում նվիրել է առաջին կատարող Հակոբ Զաղացպանյանին: Կոմպոզիտորն ակուստիկ կիթառը դարձրել է հայկական կատարողական արվեստում համերգային գործիք: Նարինե Զարիֆյանի բազմաժանր ժառանգությունից առանձնացրել ենք մեկ բնագավառ, որտեղ ակուստիկ կիթառը մեկնաբանվում է որպես մենակատար գործիք. դա «Expressia» տանգո ստեղծագործություն է (գրված՝ 2000 թ., Կադանս անսամբլը կատարել և ձայնագրել է Անգլիայում (SICNUM Records TD URG 7BR UK 2009)):

* Ստեղծագործությունը կատարեցին ՀՀ վաստակավոր արտիստ Հակոբ Զաղացպանյանը և Հայաստանի պետական կամերային նվագախմբը (գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Վահան Մարտիրոսյան), դիրիժոր՝ Նվարդ Անդրեասյան (Փրանսիա):

* Տերտերյանական պատգամներով առաջնորդվող սանր իր «Solea» երկի կատարումը 2019 թ. նվիրել է Ա. Տերտերյանի ծննդյան 90-ամյակին:

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի ընդունվել է տպագրության՝ 30.05.2019 թ. ներկայացրել է հեղինակը՝ 20.05.2019 թ.

Տանգո «Expressia»-ն (կիթառ, սկկորդենո, դաշնամուր և կոնտրաբաս), այն նա տարբեր կազմերի համար է փոխադրել, նաև կվինտետի (ջութակ, կիթառ, սկկորդենո, դաշնամուր և կոնտրաբաս), որն առանձնանում է Ն. Ջարիֆյանի հեղինակած կվինտետների շարքից: Նա հեղինակ է վեց կվարտետի: Միջազգային փառատոների ու բեմերի միայն պարզ թվարկումով պատկեր է ստեղծվում նրա երաժշտության մատչելիության, գրավչության և ցայտուն տաղանդի մասին: Այն կատարվել է «Armenia festival»-ում՝ 2007-ին, նույն թվականին Չինաստանում՝ Պեկինում, 2008-ին՝ Անգլիայում SICNUM Records TD URG 7BR UK, 2009-ին «Տանգո» փառատոնում՝ նվիրված Աստոր Պիացոլային, Արգենտինայում՝ Բուենոս-Այրես, «Իմիտրով» միջազգային փառատոնում Տունաստանում՝ Թեսալոնիկեում, ԱՄՆ-ում՝ Լոս-Անջելեսում:

Մեզ հետաքրքրող ժանրին (1.)՝ մենանվագ լարային գործիքներին է վերաբերում Ն. Ջարիֆյանի *Melodie* կամ «Գունագեղ երազ» («Մեղեդի») ակուստիկ կիթառի համար գրված պիեսը, որը գրվել և կատարվել է 2000-ին Ա. Խաչատրյանի համերգարահում, իսկ 2001-ին՝ Բրյուսելում (Բելգիա): Այն կատարել է բելգիացի կիթառահար Տիգրան Տեր-Ստեփանյանը և ընդգրկել է իր երկացանկում: Պիեսում բացահայտվում են կիթառի տեխնիկական հնարավորությունները, տեմպային յուրահատկությունները և կիթառին բնորոշ մեղեդային ոճական, և հայկական ազգային մեղեդայնության մեկնաբանության հարազատությունը: Այս երկու ոլորտները սինթեզվում են կոմպոզիտորի արդի մտածելակերպի՝ ջազայինի և ազգայինի համադրման ինչպես նաև կառուցվածքային հենքով, որը դարձնում է ստեղծագործությունը յուրահատուկ և ինքնատիպ (2.): Ակուստիկ կիթառի օգտագործմամբ է գրված նաև «Բո ձեռքերը» երգը (ըստ՝ Գ. Էմինի) ձայնի և կամերային նվագախմբի համար*:

Շատ հետաքրքիր գործիքային կազմ է ընտրված «Քեզ»՝ երկու կիթառի, երգեհոնի և հարվածային գործիքների համար անսամբլային երկում (2005 թ.): Կոմպոզիտորի տարբեր ժանրերի անսամբլային բոլոր գործերը հրատարակվել են «Անտարես» հրատարակչության կողմից 2013 թվականին:

Կոնցերտ «Էլեգիան» կիթառի և նվագախմբի համար դարձել է ավելի հասանելի պրոֆեսիոնալ երաժիշտ կատարողների ու կիթառի արվեստը սիրողների համար, դրան են նպաստել նաև Ն. Ջարիֆյանի գործերի հրատարակումները: Կոնցերտի տպագրությունը իրականացրել է «Լույս» հրատարակչությունը 2017-ին:

Ազգային ինտոնացիոն մտածելակերպի առանձնահատկությունները դրսևորվել են կոմպոզիտորի դասական ձևակառուցմամբ «Հայկական էսքիզներ»-ում, որն ստեղծվել է ջութակի, կիթառի, սկկորդենոի, կոնտրաբասի և դաշնամուրի համար (2012 թ.): Սակայն հետագայում հեղինակը կատարել է խմբագրումներ, փոխադրումներ՝ նկատի ունենալով տարբեր կազմերի առկա-

յությունը:

«Գունագեղ երազ» ստեղծագործությունը կոմպոզիտորը փոխադրել է նաև հետևյալ կազմի համար՝ դուդուկ, 3 կիթառ և հարվածայիններ (2012 թ.): Կիթառը ներառված է նաև խմբերգերում մանկական երգչախմբի համար (շուրջ 10), ժողովրդական բանաստեղծությունների հիման վրա գրված՝ «Ծափիկ-ծափիկ ծիրանի» (2013 թ.), «Արև-արև, եկ-եկ» (Ե., Վան-Արյան, 2000 թ.), «Լորիկ» (2000 թ.), «Դու կապուտակ ծովով արի» (2000 թ.), ըստ Հ. Թումանյանի բանաստեղծության՝ «Էյ, կանաչ ախպեր», «Քամին» (1993 թ.), «Հրեշտակների աղոթք» մեներգչի, մանկական երգչախմբի և կամերային նվագախմբի համար, ըստ Մ. Գրիգորյանի (2015 թ.): Գրել է 20 մանկական երգ, որոնցից «Չի կարելի»-ն՝ Գ. Կյոկչյանի կատարմամբ մանկական 2013 թ. Եվրատեսիլում 2-րդ մրցանակ է ստացել, և այլ երգերի հեղինակ է:

Ն. Ջարիֆյանը համագործակցել է անվանի կատարողներ Հակոբ Ջաղացյանյանի, Ռուբեն Հախվերդյանի, Արմեն Հյուսունցի, նաև կյանքից վաղ հեռացած անվանի երգչուհի Արաքս Դավթյանի հետ: Նրանց կատարողական արվեստն ստեղծագործական ներշնչանքի աղբյուր է դարձել և որպես շարունակություն այդ համագործակցությունները յուրօրինակ երկերի, նաև կամերային և սիմֆոնիկ նվագախմբերի փոխադրումների ստեղծման շարժառիթ:

Վերջին տարիներին մի քանի հետաքրքիր համերգներ իրականացրեցին՝ ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ Ա. Խաչատրյանի անվ. համերգարահում և Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տան առավել մեծ բեմահարթակների համար գործիքավորելով և մշակելով Ռուբեն Հախվերդյանի բազմաթիվ հանրաձանոթ երգերը կիթառի և կամերային նվագախմբի, նաև սիմֆոնիկ փոքր կազմի համար: Երկու համերգներն էլ կատարվել են Հայաստանի պետական կամերային նվագախմբի, մենակատարների և մեներգիչ-հեղինակ Ռ. Հախվերդյանի հետ, դիրիժոր՝ ՀՀ վաստակավոր արտիստ Վահան Մարտիրոսյան: Նրանց համատեղ գործունեության արդյունքում թողարկվել են լազերային 5 ձայներից, որոնցից մի քանիսն արժանացել են Armenian Music awards մրցանակի (1998 թ., ԱՄՆ՝ ԼԱ): Ժողովրդական երգերի մշակումները սիմֆոնիկ ոճում զուգերգով, կատարել են Ռուբեն Հախվերդյանը՝ իրեն հատուկ հեղինակային երգի ձայնի և ոճին հարազատ և Արաքս Դավթյանը՝ ակադեմիական-երգեցողության ոճում, գործիքային մենակատարները կամերային նվագախմբերի հեղինակի ղեկավարությամբ: Այդ կատարումը թողարկել է «Բարսեղյան Ռեքորդս» ընկերությունը ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսում: Այն 2002-ին արժանացել է Վ. Թեքլյան մշակութային միության մրցանակին: «0-ից 100 տարեկան երեխաներին» Ռ. Հախվերդյանի CD-ում ժողովրդական երգերի մշակումներ են՝ մենակատարների անսամբլի և կամերային կազմի նվագախմբի համար (ՀՊՖՆ, «Բարսեղյան Ռեքորդս» ընկերությունը թողարկել է 2000-ին, ԱՄՆ, Գլենդեյլ), նրա «Կտակ», «Հեղինակային երգեր»-ի մշակումը և գործիքավորումը

* Մենակատար Էմմա Պետրոսյանի և ՀՊԱՖՆ-ի կողմից կատարվել և ձայնագրվել է Գերմանիայում (2005 թ., Sony DADC CD):

Չարիֆյանի գրչին են պատկանում, որոնք լազերային ձայներից թողարկել է «Արդենի» ստուդիան (ԱՄՆ):

Կոմպոզիտորը 30 փոփ երգերից շատերում օգտագործել է ակուստիկ կիթառը, ինչպես օրինակ ձայնի և էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի համար՝ «Թափվող լույսեր» (ըստ՝ Գ. Կարապետյանի, 1999 թ.) և այլն:

Նարինե Չարիֆյանն իր եռանդուն և լայն շրջանակի երկրպագուների կողմից սիրված լինելու համար զանազան պարգևատրումների և գնահատանքի է արժանացել:

Կատարողական արվեստի համաշխարհային ասոցիացիայի կողմից Նարինե Չարիֆյանն ստացել է 1-ին համահայկական մրցանակաբաշխության պատվոգիր՝ «**Armenian golden star awards-2016**», «Տարվա լավագույն կոմպոզիտոր» անվանակարգում, ՀԿՄ-ի 3-րդ գիտաժողով-փառատոնին (2003 թ.) ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից արժանացել է Ա. Խաչատրյանի 100-ամյակին նվիրված Ոսկե հուշամեդալի: Ն. Չարիֆյանը պարգևատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալով (2017 թ.) (3.): 2018-ին 40-ամյա գործունեության հոբելյանի առթիվ երաժշտական արվեստում առանձնահատուկ

ներդրում և երաժշտական ոճ ունեցող կոմպոզիտորը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով, ԵՊԿ Պատվոգրով և ՀԿՄ ուղերձով:

Ծ Ա Ն Ո Ւ Կ Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. *Սմբատյան Ս. Ա.*, XX դարի մենանվագ լարայինների համար գրված երկերի ոճական առանձնահատկությունները և դրանց անդրադարձը հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում, թեկնածուական թեզ, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Ե., 2009 թ., (մեռագիր): *Smbatyan S. A.*, XX dari menanvagalayinneri hamar grvats erkeri votchakan arandznahatkutyunner, ev drantz andradardz, hay kompozitorneri steghtsagortsuthyunnerum, theknatsuakan thez, HH GAA AI., Yer., 2009 th., (dzer,zgir).
2. *Зарифян Н. К.*, Современные требования в области гитарного исполнительского искусства., //Музыкальная Армения 3-4 (42-43) 2011., С. 84-87. *Zarifyan N. K.*, Sovremennye trebovaniya v oblasti gitarnogo ispolnitel'skogo iskusstva., //Muzykal'naya Armeniya 3-4 (42-43) 2011., С. 84-87.
3. Նարինե Չարիֆյանի անձնական արխիվ: *Narine Zarifyani andznakan arkhiv:*

Բանալի-բառեր. Չարիֆյան, Հայաստանի կոմպոզիտորների միություն, համերգաշար, սիմֆո-փոփ երաժշտություն, պիես, ժողովրդական, ջազ, տանգո, կոնցերտ, մենանվագ ստեղծագործություն, ակուստիկ կիթառ, լարային գործիքներ, սիմֆոնիկ նվագախումբ, Հ. Ջաղացյանյան, Ռ. Հախվերդյան, Տ. Տեր-Ստեփանյան, Ա. Դավթյան:

Ключевые слова: Зарифян, Союз композиторов Армении, цикл концертов, симфо-поп музыка, пьеса, народная, джаз, танго, концерт, произведения для сольных инструментов, акустическая гитара, струнные инструменты, симфонический оркестр, А. Джагацпаян, Р. Ахвердян, Т. Тер-Степанян, А. Давтян.

Keywords: Zarifyan, Composers Union of Armenian, a cycle of concerts, symphonic-pop music, the play, national, jazz, a tango, a concert, works for solo tools, an acoustic guitar, string instruments, symphonic orchestra, H. Jagatspanyan, R. Hakhverdyan, T. Ter-Stepanyan, A. Davtyan.

Տեղեկություններ հեղինակի մասին. ՍՄԲԱՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՐՄԵՆԻ (ծ. 23.09.1987, ք. Երևան), դիրիժոր, ջութակահար, արվեստագիտության թեկնածու (2009 թ., «XX դարի մենանվագ լարայինների համար գրված երկերի ոճական առանձնահատկությունները և դրանց անդրադարձը հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում»), Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը վերանվանվել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ 21.12.2017-ից, հիմնադիր, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր (2006 թ.): Ավարտել է՝ Պ. Ի. Չայկովսկու անվ. ՄՄԵԴ-ը՝ ջութակ մասնագիտությամբ, 2009-ին՝ ԵՊԿ սիմֆոնիկ դիրիժորության, ջութակի (պրոֆ.-ներ՝ Յ. Հ. Դավթյանի, Բ. Ս. Վարդանյանի դասարանները), 2011-ին՝ Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվ. պետ.կոնսերվատորիայի ջութակի (պրոֆ.՝ Մերգել Կրավչենկո) բաժնիները: 2012-ին՝ Լոնդոնի թագավորական երաժշտական ակադեմիան: Միջազգային մրցույթների Տոկիոյի, “Rovere d’Oro” (Ճապոնիայում, Իտալիայում) դափնեկիր է: Վարպետության դասընթացներ է անցել Ջախար Բրոնի, Գրիգորի Ժիսլինի, Ռիկարդո Մուտիի, Ռուջերիո Ռչչիի և այլ աշխարհահռչակ երաժիշտների մոտ: 2008 թ. Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի կողմից հրավիրվել է վարպետության դասընթացի մասետրո սրբ՝ Քոլին Դևիսի մոտ: Ս.-ը ելույթներ է ունեցել Մարիինյան թատրոնի սիմֆոնիկ և Մոսկվայի ֆիլհարմոնիկ, Բեռլինի սիմֆոնիկ, Գրեգոնի ֆիլհարմոնիկ, Վարշավայի ֆիլհարմոնիկ, Մյունխենի սիմֆոնիկ նվագախմբերի և այլոց հետ: Կորեայի կամերային նվագախմբի հետ 2015 թ. հոկտեմբերին ելույթ է ունեցել Նյու-Յորքի «Քառնեգի հոլ» համերգասրահում, իսկ 2017 թ. սեպտեմբերին Համահայկական նվագախումբը նրա ղեկավարությամբ հանդես է եկել դասական երաժշտության հեղինակավոր «Գրամմոֆոն» մրցանակաբաշխությանը: Նա հանդես է գալիս աշխարհահռչակ երաժիշտներ Պինկաս Յուկերմանի, Մաքսիմ Վենգերովի, Դենիս Մացուկի, դերասան Սվետոզար Մալկովիչի և այլոց հետ: Նա հանդիսանում է Հայ կոմպոզիտորական արվեստի և Ա. Խաչատրյանի միջազգային փառատոների, «Անկախության սերունդ» համահայաստանյան երգչախմբի և նվագախմբի, «24/04» համաշխարհային նվագախմբի, ՅՈՒՆԵՍԿՕ մանկական նվագախմբերի հիմնադիրը: Հեղինակ է գիտական և ուսումնամեթոդական հոդվածների՝ նվիրված հայ և արևմտանվորոպացի կոմպոզիտորների լարային գործիքների կատարողական և կոմպոզիտորական արվեստին՝ հրատարակված «Երաժշտական Հայաստան» միջազգային ամսագրում և այլ գիտական պարբերականներում: 2015 թ. Ֆրանսիայի մշակույթի և կապի նախարարությունը Սմբատյանին պարգևատրել է Ֆրանսիայի արվեստի և գրականության շքանշանով, Մշակույթի բնագավառում ունեցած հաջողությունների համար 2016-ին արժանացել է ՀՀ վաստակավոր արտիստի կոչմանը:

Сведения об авторе: СМБАТЯН СЕРГЕЙ АРМЕНОВИЧ (род. 23.09.1987, Ереван), дирижер, скрипач, кандидат искусствоведения (“Стилистические особенности сочинений для струнных соло XX века и их преломление в произведениях армянских композиторов”, 2009), основатель (2006), художественный руководитель и глав-

ный дирижер Симфонического оркестра Армении (с 2017). Окончил музыкальную школу-десятилетку им. П. И. Чайковского по классу скрипки, лауреат международных конкурсов (Япония, Россия). В 2009 г. окончил факультет струнных инструментов (класс скрипки проф. Б. С. Ваданяна) и симфонического дирижирования Ереванской государственной консерватории (класс проф. Ю. Г. Давтяна), Московскую государственную консерваторию им. П. И. Чайковского (класс проф. Сергея Кравченко, 2011), Лондонскую королевскую академию музыки (2012). Участник мастер-классов Захара Брона, Григория Жислина, Рикардо Мути, Руджиеро Риччи и других всемирно известных музыкантов, Сэра Колина Дэвиса (Лондонский симфонический оркестр, 2008). С. Смбабян выступал с Симфоническими оркестрами: Мариинского театра, Московской, Берлинской, Дрезденской, Варшавской, Мюнхенской филармоний и другие. С Корейским камерным оркестром в октябре 2015 года выступил в концертном зале Carnegie Hall (Нью-Йорк). В сентябре 2017 года Всеармянский оркестр во главе с Смбабяна выступил на престижной премии классической музыки "Граммофон". Выступает со всемирноизвестными музыкантами Пинхасом Цуккерманом, Максимом Венгеровым, Денисом Мацуевым, актером Джоном Малковичем и другими. С. является основателем Международных фестивалей: Арама Хачатуряна и Армянского композиторского искусства, Всеармянского хора и оркестра "Независимое поколение", Всемирного оркестра "24/04", Детского оркестра ЮНИСЕФ. Министерство культуры и связи Франции в 2015 году наградило Смбабяна Орденом искусства и литературы. Заслуженный артист РА (2016).

Information about the author: SMBATYAN SERGEY ARMEN (born 23.09.1987, Yerevan), conductor, violinist, PhD Candidate, (2009, "Stylistic peculiarities and their reference to the works of Armenian composers written for the 20th century's lyric poetry), Founder, Artistic Director and Principal Conductor of the State Youth Orchestra of Armenia (2006). He graduated from Music School after Tchaikovsky in Yerevan, with the profession of violin, laureate of international competitions (Japan, Russia). Graduated from Yerevan State Conservatory with the profession of symphonist conductor, violinist (Professors Y. H. Davtyan, B. S. Vardanyan's Classes) in 2009, and in 2011, Moscow State Conservatory after Tchaikovsky (Violin, Prof. Sergey Kravchenko's class), London Royal Academy of Music in 2012. He has master classes at Zakhar Bron, Grigor Zhislin, Ricardo Muti, Ruggiero Richchi and other world-famous musicians. In 2008 he has been invited by the symphonic orchestra of London Maestro Sir Colin Davis to have a master class. Smbatyan performed with the Mariinsky Theater Symphonic and the Moscow Philharmonic, Berlin Symphonic, Dresden Philharmonic, Warsaw Philharmonic, Munich Symphonic Orchestras and with others. In 2015 October with the Korean Chamber Orchestra, he performed at the "Carnegie Hall" concert hall in New York City. And in 2017 September, the Pan-Armenian Orchestra, led by Smbatyan., performed at the prestigious "Gramophone" awards of classical music. He act with world-known musicians Pinchas Zukerman, Maxim Vengerov, Denis Matsuev, actor John Malkovich and others. Smbatyan is the founder of the Armenian Composers' Art and Khachaturian International Festivals, "The Independence Generation" Pan-Armenian Choir and Orchestra, the "24/04" World Orchestra and the UNICEF Children's Orchestra. He is an author of scientific and educational-methodological articles devoted to armenian and west European composers' string instruments' performance and composer's art. As well author in the "Musical Armenia" international journal, "Kantegh" and other scientific journals. 2015 The French Ministry of Culture and Communication awarded Smbatyan with the French Arts and Literature Order. For the successes in the field of culture in 2016, the President of the Republic of Armenia was awarded the title of Distinguished Artist of the Republic of Armenia. In 2015 The French Ministry of Culture and Communication awarded Smbatyan with the French Arts and Literature award. For the successes in the field of culture in 2016, the President of the Republic of Armenia was awarded the title of Distinguished Artist of the Republic of Armenia. For the successes in the field of culture in 2016, the President of the Republic of Armenia was awarded him with the title of Distinguished Artist of the Republic of Armenia.

Резюме

Дирижер, скрипач, кандидат искусствоведения, художественный руководитель и главный дирижер Государственного симфонического оркестра Армении **Сергей Арменович Смбабян.** - **“Разножанровые произведения для акустической гитары Н. Зарифян”.**

Автор статьи обзорно рассматривает творчество видного композитора нашей действительности Н. К. Зарифян в русле той части творчества, которая относится к произведениям, созданным для акустической гитары, Инструмента, для которого она единолично в армянской действительности пишет сочинения в разных жанрах как для сольного, так ансамблевого и оркестрового исполнения, которые звучат в Армении и за рубежом.

Summary

Conductor, violinist, PhD candidate, artistic director and chief conductor of the State Symphony Orchestra of Armenia **Sergey Armen Smbatyan.** - **“N. Zarifyan's multi-genre works for acoustic guitar”.**

The author of the article reviews the creativity of the prominent composer of our reality Narine K. Zarifyan in line with the part of creativity that refers to the works created for acoustic guitar, instrument, for which Armenian reality she writes works in different genres both for solo and ensemble and orchestral performance, which sound in Armenia and abroad.

**СУРЕН СУРЕНОВИЧ
ШАХСУВАРЯН**

Пианист, доцент Армянского государственного педагогического университета им. Х.Абовяна.

E-mail: shahsuvaryansuren33@aspu.am

К ЮБИЛЕЮ УЧИТЕЛЯ

В сентябре 2019–го года отмечается знаменательная дата – 100–летие видного деятеля музыкальной культуры Армении, Заслуженного деятеля искусств Арм. ССР, профессора Ереванской консерватории Георгия Вардовича Сараджева. Статья, приуроченная к столетию со дня рождения моего профессора – дань памяти, выражение признательности, огромной любви и благодарности за терпение, чуткость и знания полученные в течение почти 15–летнего пребывания в его классе (десятилетка, консерватория, аспирантура–стажировка).

Сфера музыкальной деятельности Г. В. Сараджева довольно многогранна. Это – исполнительство в качестве солиста и ансамблиста, фортепианная педагогика, композиция. Наряду с оригинальными произведениями перу Г. В. Сараджева принадлежат обработки народных песен, ашугских мелодий, которые прочно вошли в педагогический репертуар муз. заведений и в концертные программы солистов, а также создание фортепианной школы для детей в соавторстве с проф. Ваче Вагановичем Умр–Шатом. Кроме того он проводил открытые уроки и консультации в музыкальных школах города Еревана и различных регионов Армении.

Г. В. Сараджев является представителем фортепианной школы видного музыкального деятеля, пианиста и педагога Самария Ильича Савшинского, который является одним из инициаторов создания групп одаренных детей при консерваториях Ленинграда, Москвы, Киева, Одессы. В 1933 году в Ленинграде был проведен конкурс юных дарований. Об этом соревновании интересно узнать со слов самого Георгия Вардовича: *"Когда в 1933 году был объявлен "Конкурс юных дарований", рискнул участвовать в нем. Был безмерно счастлив узнать, что удостоился премии, и что на меня обратил внимание проф. С. И. Савшинский"*.

1934 год стал решающим в судьбе Г. В. Сараджева – он поступил в класс Савшинского, в связи с чем вся



семья переезжает из Москвы в Ленинград.

Консерваторские годы прошли довольно содержательно. Кроме занятий в классе специального фортепиано, Г. В. Сараджев берет уроки композиции у А. Гладковского, также занимается в классе органа у И. Браудо.

В течение десяти лет (школа, консерватория, аспирантура) Г. В. Сараджев, наряду с освоением педагогических установок фортепианной школы С. И. Савшинского, по инициативе своего профессора посещает уроки других педагогов – Н. Голубовской, П. Серебрякова, В. Софроницкого. Оставаясь в классе С. И. Савшинского, Георгий Вардович в течение трех лет занимается в классе В. Софроницкого – явление редко практикуемое в среде музыкантов.

Становлению Г. В. Сараджева как музыканта способствовали посещение концертов В. Софроницкого,

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ալինա Աշոտի Փահլևանյանի և ՀՊՄՀ Երաժշտության մանկավարժության ամբիոնի ընդունվել է տպագրության՝ 28.11.2019 թ. գրախոսներ՝ 15.10.2019 թ., 04.09.2019 թ. ներկայացրել է հեղինակը՝ 04.09.2019 թ., 28.11.2019 թ.

Н. Голубовской, М. Юдиной, также зарубежных гастролеров – Эгона Петри, Артура Шнабеля, Альфреда Корто и других. Кроме посещения концертов и лекций Г. Сараджев с успехом выступает в концертах, организуемых консерваторией.

Забегая вперед отмечу, что за весь период обучения в классе Георгия Вардовича с его уст не сходили имена таких исполнителей, как В. Софроницкий, А. Корто. Он часто отсылал своих студентов к записям своих кумиров, а портрет В. Софроницкого висел в нашем классе на самом видном месте.

Сразу по окончании Ленинградской консерватории Г. В. Сараджев был принят в аспирантуру и начал преподавать в консерватории в качестве ассистента С. И. Савшинского, совмещая учебу и педагогику с концертной деятельностью солиста Узбекской филармонии.

Государственные экзамены на фортепианном факультете под председательством проф. Х. С. Кушнарева принимали профессора Л. В. Николаев, С. И. Савшинский и А. В. Зейлигер. Экзаменационная комиссия, в составе выдающихся деятелей музыкального искусства, выдала блестящую характеристику Георгию Сараджеву: *"Сараджев Г. – высокоодаренный пианист с ярко выраженной артистической индивидуальностью большого масштаба. В нем гармонично сочетаются глубокое проникновение в содержание исполняемой музыки с яркой эмоциональностью и виртуозностью исполнения"*.

Воспитанный на традициях ленинградской фортепианной школы, в атмосфере расцвета музыкальной культуры довоенного Ленинграда, Г. В. Сараджев мог по возвращении из эвакуации в родной город успешно продолжить концертную и педагогическую деятельность в стенах ленинградской консерватории. Но, благодаря содействию Х. С. Кушнарева, в 1944 году Георгий Вардович принимает приглашение ректора Ереванской консерватории К. С. Сараджева продолжить педагогическую деятельность в Армении.

Ներածականով հեղինակը պատմական արժեւորումը կ'ընէ Սայեթ-Նովայի, անոր տեղը կը ճշդէ երաժշտութեան պատմութեան մէջ, կը ներկայացնէ զայն Գրիգոր Նարեկացիով սկսած, Ներսէս Շնորհալիով շարունակուած միջնադարեան մասնագիտացուած երաժշտութեան որպէս վերջին երաժիշտը: Աշուղական արուեստը, որ իրմէ 150 տարիներ առաջ սկսած էր, արդէն իսկ փայլուն աստղեր՝ աշուղներ սկսած էին իրենց հետաքրքրութիւնները դարձնել դէպի հայրենի արմատները: Որո՞նումներ՝ ազգային տաղերգութեան, հին գուսանական արուեստի, ժողովրդական եւ հոգեւոր երգարուեստներու տարբեր շերտերու մէջ, «երբ Սայեթ-Նովան իր հսկայական կերպարանքով յայտնուեց ճիշդ այդ ճանապարհի վրայ, եւ հուժկու մղումներ հաղորդեց հայ քերթողութեան ու երաժշտութեան» (էջ 6.). - կ'ըսէ Թախնիգեան (էջ 6):

Սայեթ-Նովա, իր քերթողական ու երաժշտական արուեստով ոչ միայն հանդիսացաւ միջնադարեան երգ-երաժշտութեան վերջին փայլուն աստղը, այլ՝ եւ մանաւանդ, նոր շրջանի առաջին ու առաջնորդող աստղը.- «Նրանով (Սայեթ-Նովայով. - Գ.Փ.) է սկսում հայ գուսանա-աշուղական ազգային դպրոցի ձեւաւորումը, որն եւ աւարտում է ԺԹ դարի վերջին երեսնամեակում» (էջ 6.). - կ'ըսէ հեղինակը:

Տեղեկանալէ յետոյ Սայեթ-Նովայի ստեղծագործական միջավայրին, իր եռալեզու երաժիշտի, յանկարծարանի, տաղանդաւոր երգիչի եւ նուագածուի հանգամանքներուն, կը տեսնենք որ իր մահէն աստե՛ն մը վերջ լուծ են այլեւս խաղերը:

Ապա, հեղինակը կու տայ Սայեթ-Նովան վերագտնող ու կեանքի վերակոչող ուսումնասիրողներուն անուններն ու թուականները: Շուրջ 150 տարիներու վրայ երկարող բանասէրներու, երաժշտագէտներու անուններ, որոնցմէ սակայն ոչ մէկը երաժշտագիտական գետնի վրայ ամբողջականօրէն վերլուծած ու ներկայացուցած է Սայեթ-Նովան: Ճիշդ է, որ Քրիստափոր Քուշնարեան՝ մեծ երաժշտագէտը, աշխատանք տարած է այս գետնի վրայ, բայց այդ մասնակի է եւ ոչ

Նվիրվում է Նիկողոս Թահմիզյանին

թէ ամբողջական: Թահմիզյան կ'ըսէ.- «Մայեաթնովագիտութեան մէջ իր խօսքը չի ասել տակաւին հայ երաժշտագիտութիւնը» (էջ 10.):

Այա, կը կարդանք այս գործի միտ բանին. - «Մոյն մենագրութեամբ աշխատում ենք լրացնել այդ բացը, ներկայ պայմանների ընձեռած հնարատրութիւնների սահմաններում» (էջ 10.):

Յետոյ, հեղինակը կու տայ նիւթը ներկայացնելու իր մեթոտարբանութիւնը եւ որով ալ վերջ կը գտնէ ներածականը:

Ա. ՄԱՍ.

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅ ԳՈՎԱՍՏԱՆՆԵՐԻ,
ՎԻՊԱՍԱՆՆԵՐԻ ԵՒ ԳՈՒՍԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրքի այս առաջին գլուխէն կ'իմանանք, որ թէն Սայեաթ-Նովայի երգաստեղծութեան անմիջական պատուանդանը ուշ միջնադարու երաժշտական աւանդութիւնները եղած են, բայց եւ այնպէս, « <...> ըստ էութեան շատ աւելի հին են, հասնում են մինչեւ հայկական աշխարհիկ մասնագիտացուած երգաստեղծութեան կազմաւորման դարերը» (էջ 11.), - կ'ըսէ Թահմիզյան: Եւ, սկսելով հնագոյն ժամանակներէն՝ համառօտ, սակայն, միշտ քննական, բաղդատական եւ գիտական մօտեցումով կու տայ մասնագիտացուած երգ-երաժշտութեան զարգացման հանգրուաններն ու զանազան ժամանակաշրջաններու մշակներու կերպարները, որոնք սկսելով անյիշատակ ժամանակներէ, հայ երաժշտութիւնը զարգացուցած ու հասցուցած են մեր օրերը: Ահա այդ մշակներու շրթան. - «գովասանը, վիպասանը, գուսանը, եւ աշուղն ու սագանդարը» (էջ 11.):

Այա, մի առ մի քակելով այս շրթանին օղակները՝ կը ներկայացնէ անոնցմէ իւրաքանչիւրն առանձին կերպով՝ բացատրելով իւրաքանչիւրն կերպարը, այդ շրթանի երաժշտութեան գոյալիճակը, անոր նկարագիրը, տեսութիւնը, երգ-երաժշտութեան նիւթը, անոր պատմական հունաւորումը, դրկից ժողովուրդներու հետ երաժշտութեան փոխյարաբերութիւնները, նոյնիսկ երաժշտական տեսութեանց փոխառութիւնները, գործիքային երաժշտութեան յանկարծակիս զարգացման պատճառները, եւ այլն..., ու այս ընելու համար Թահմիզյան կը դիմէ բանասիրական բոլոր կարելիութիւններուն: Երբեմն հին ձեռագիրներու մէջէն այնպիսի տողեր կը մէջբերէ, որոնք կամ առաջին անգամ ըլլալով ի յոյս աշխարհ կու գան, եւ կամ ալ, եթէ ուրիշներ մէջբերած ըլլան զանոնք իրենց գործերուն մէջ, կարծէք յատկացուցած չեն ըլլար անոնց իմաստը: Օրինակով խօսած ըլլալու համար, ահա, կը բերեմ Թահմիզյանի հետեւեալ տողերը. - «Այն, որ հեթանոսական Հայաստանում այս կամ այն ձևով ու չափով մշակուած է եղել նաեւ երաժշտա-տեսական-գեղագիտական մտքերի մի համակարգ, կասկածից դուրս է պարզապէս: Միայն թէ՛ ձեռքի տակ գտնուող տուեալները հատուածական բնոյթ ունեն: Բայց որպէս այդպիսիք՝ եւս արժէքատուր են:

Այսպէս՝ «այլ ճառագայթ է արեգականն - կարդում ենք միջնադարեան ժողովածու տիպի գրչագրերից մէկում — եւ այլ փառք է լուսնին, եւ այլ ճաճանչ է աստե-

ղացն, առաւել քան զմիւսեանս, որ են արինակաց ձայնից եւ տրոհից գեղգեղմանց» (ընդգծումը մերն է. - Ն.Թ.):

Ինչպէս նաեւ խօսելով հայ երաժշտութեան հնագոյն չորս ձայներու (*modes*) մասին, որոնք ծագում առած են բնութեան չորս ուժերէն, տարրերէն, նորէն դիմելով Մատենադարանի ձեռագիրներուն՝ Թահմիզյան կը մէջբերէ հետեւեալը. - «Եւ Դ ձայնքն - կարդում ենք միջնադարեան ձեռագրերից մէկում - ի չորից տարրերս ունին զգոյութիւն: Որպէս եւ է՝ առաջին ձայնն ի հողոյն: Եւ երկրորդն՝ ի ջրոյն: Երրորդն՝ ի յադոյն: Եւ չորրորդն՝ ի հրոյն»: Եւ կը շարունակէ. - «Սրա հիմքում գտնուում է տիեզերքի եւ բնութեան չորս գլխատուր տարրերի մասին գաղափարը: Տարրեր, որոնք նկատուել են նաեւ առհասարակ գոյութեան խարխիսներն ու գերագոյն ուժի խորհրդանիշները:

Այս վերջին մտքով, տուեալ հիմնադրոյթը, դարձեալ հազարամեակների միջով հասնելով մինչեւ Յ. Բ. ԺԸ դարը, արտայայտութիւն է գտել Սայեաթ-Նովայի հազուագիտ խաղերից մէկում, ուր ասուած է.-

«Հուրը մերն է, ջուրը մերն է, հողմըն ու հողը մերն է» (էջ 15-16.):

Անցնելէ առաջ յաջորդ գլուխին, կ'ուզեմ հետեւեալ կէտը եւս, իր կարեւորութեան համար, յանձնել ձեր ուշադրութեան:

Երեսոյթ մը, որ VII դարուն մեծ նշանակութիւն ունեցած է մեր երաժշտական տեսութեան, ինչպէս նաեւ յօրինողական եւ հետեւաբար կատարողական արուեստներուն մէջ, ճանչցուած է «Խոսրովային» անունով:

Թահմիզյան տալէ յետոյ պատմականը այս «Խոսրովային» տարագին, կ'ըսէ.- «Մակայն, «Խոսրովային» ոճի վաւերացմամբ թում է, պատմութեան մէջ առաջին անգամ, գիտակցուել է «արեւելեան» (*oriental*) կոչուած քնարական մեղեդիների գեղագագակական էութիւնը, դրանց՝ դէպի անհատի ներաշխարհն ուղղուած բնոյթը: Նաեւ մասնատուր գնահատութեան են արժանացել անձանցեալ (*altered*) աստիճաններ, այդ թում եւ մեծացրած երկեակ (*augmented second*) պարունակող ձայնեղանակներում ծաւալուող մեղեդիները, ենթակայական քնարականութեամբ յատկորոշուող դրանց իւրայատուկ որակը: Եւ դա՛ գուսանական երաժշտութեան մէջ քնարականութեան խորացմանը նպաստելու կոչուած նոր նախադրեալներ է ստեղծեր» (էջ 17-18.):

ՋԱՐՄԱՆԱԼԻ Է ԻՆՁ

Նվիրվում է Նիկողոս Թահմիզյանին



Եւ որպէս օրինակ, ծանօթագրութեան մէջ կը բերէ VIII դարու աշխարհական երաժշտուի Խոսրովիդուխտի «Ջարմանայի է ինձ» երգը, որ իր գրական նիւթին ու երաժշտական գեղեցկութեան համար Հայց. Եկեղեցին անցուցած է զայն կանոնականացած շարականներու շարքին:

ԳԼՈՒԽ 2

ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ՝
ՀԻՆ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԵՒ ՏԱՂԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Այս գլուխին մէջ կը տեսնենք թէ՛ ինչպէս հայ երաժշտութեան (միաձայնային) ճակատագիրը, կապուած ըլլալով հայ ժողովուրդի քաղաքական իրավիճակին հետ, եւ վերջինս քաղաքական եւ կրօնական պատճառներով կտրուած ըլլալով արեւմուտքէն, հայ երաժշտութիւնը եւս կտրուեցաւ, այս անգամ, բազմաձայնային դրութեան զարգացմամբ ծով կարելիութիւններու ստակ դարձած արեւմտեան երաժշտութենէն:

«Մոնղոլական անգուսպ ասպատակութիւններն Հայաստանում, եւ մամլութեան հետեւողական կործանիչ արշաւանքները Կիլիկիայում, յետոյ Լէնկ-Թիմուրի աներաձուլութիւնները, թուրքմէն քոչուոր ցեղերի տիրապետութեան տխուր շրջանն ու թուրք-պարսկական հիւժող պատերազմները, ոչ միայն խափանեցին հայ մշակոյթի վերելքը, այլեւ նոյնիսկ այն վերածեցին ակամայ ետընթացի: Փոխուել էր ամբողջ Մերձատր Արեւելքի մշակութային դէմքը» (էջ 23-24.), - կը գրէ Թահմիզյան:

Այսպիսի վիճակի մատնուած հայ ժողովուրդին երաժշտութիւնը ստիպուեցաւ ամփոփուիլ իր պատեանին մէջ:

Թրքական լուծին տակ հայ ժողովուրդին մէկ մասը, չկարողանալով պահել մայրենի լեզուն, ստիպուեցաւ թրքերէնով խօսիլ ու երգել: Իսկ ժողովուրդի միւս մասը, որուն ճակատագիրը քիչ մը անլի բարեբախտ ըլլալով,

ինչպէս Ակնի շրջանի ժողովուրդը, պահեց հայ հնագոյն երգարուեստը:

Երաժշտատեսաբանական գետնի վրայ շատ հետաքրքրական են հեղինակին հետեւեալ տողերը.- «Ըստ բոլոր տուեալների, սոյն հարիւրամեակում (ԺԵ դար. - Գ.Փ.) հայ գուսաններն, իրենց աշխատանքի բերումով սերտ շփման մէջ գտնուելով արտաքին աշխարհի՝ մահմեդական շրջապատի հետ, ձգտել են յարաբերակցել, առաջին հերթին հայոց ուրձայն եւ երկու ստեղծի համակարգը՝ պարսիկ-արաբական-թրքական տասնէրկու «մուլամ»-ների դրութեան հետ: Ձեռագրերում պահպանուել են այդ վկայող հակիրճ գրառումներ, ինչպէս, օրինակ՝ «Երաժիշտ՝ գուսան. շուի Դ ադի՝ Ա զիլ, Ա բամբ Երկաստեղն՝ Ժ, այլազգի՝ ԺԲ ձայն տաճկի» (էջ 26.):

XVI դարում հայրեններու վարպետ երգիչ Նահապետ Քուչակ արդէն կոչուած է «աշուղ» եւ յօրինած հայտատու թրքերէն երգեր եւս:

«Բայց, մասնագիտացուած աշուղութիւնը, որն իր հետեւորդներից պահանջում էր տաղաչափական յատուկ ձևերի եւ տիպական ձայնեղանակների որոշակի մի խմբի իւրացումն ու դրանց ստեղծագործական կիրառումը, մեր մէջ - կ'ըսէ Թահմիզյան - ծագեց անլի ուշ, վերանորոգութեան շրջանում (ԺԷ-ԺԸ դդ.), եւ շատ իրակերպ պայմաններում, ինչպէս կը տեսնենք» (էջ 27.):

Այս շրջանին հայ հոգեւոր երգարուեստը եւս ունեցաւ որոշ շրջափոխութիւն: Թէ՛ն ան հարստացաւ նոր ստեղծագործութիւններով համաձայն հին ձևերու, բայց եւ այնպէս ստացաւ նոր ժամանակներու ճաշակ՝ պարսկա-թրքական տիպի արեւելականացումով:

Թէ՛ն հայ տաղերգութեան ոգին աշխարհականացաւ, լեզուն եւ ոճը ժողովրդականացան, երեւոյթներ, որոնք երաշխիքներ պէտք էր հանդիսանային տաղերգութեան արուեստի առաւել զարգացման, բռնատիրութեան դաժան եւ ծանր պայմաններու տակ սակայն, «փոխանցեցին հասարակական կեանքից դառնօրէն յուսախաբուած՝ մտաւորականի միակ սփոփանքի նկարագիր. իսկ ուրախութեան ու վայելքի առանց այդ էլ անցողիկ զգացումներին՝ ապրումների լոյ մանրութիւն» (էջ 29.). - կ'ըսէ հեղինակը:

Տուեալ ժամանակաշրջանին կը ձեւաորոյի Տաղարանը հայրենակարօտ պանդոխտներու նախաձեռնութեամբ: Այս շրջանէն պէտք է առանձնացնել երեք քնարերգուներ, որոնց յօրինումներէն օրինակներ կը գրուենք Տաղարաններու մէջ խազագրուած ձեւով: Այս բոլորը տեղի կ'ունենային, կ'ըսէ Թահմիզյան. «ուսումնական մարդկանց շրջանակներում, որոնք ի դէպ, սաստիկ նուագել էին, մանաւանդ կեդրոնական Հայաստանում: Արտագաղթի պատճառով նուագում էր նաեւ քիչ թէ շատ ունեւոր մարդկանց թիւը: Մի կողմի վրայ էին թողնում գիւղական եւ քաղաքային աշխատատուր զանգուածը:

Պետականութիւնից զրկուած, քաղաքականապէս ստրկացուած, բռնագաղթերի եւ գերեվարութիւնների ենթարկուած, հալածուած, կողոպտուած, աղքատացած, անարգուած ու արհամարհուած՝ նրանք (աշխա-

Նվիրվում է Նիկողոս Թահմիզյանին

տատրները) գոյատևում էին խաարի մէջ խարխալի-
լով:

Ո՛վ պիտի կարեկցեր նրանց, մխիթարէր, կրթէր,
դաստիարակէր եւ լուսաւորէր (հնարաւորութեան սահ-
մաններում), հասկանար նրանց խոր վշտերը, արտա-
յայտէր նրանց մեծ ցատերն ու փոքր ուրախութիւնները,
իղձերն ու տենչերը, ինչպէս եւ դեռեւս չնոսացուած խտ-
ւալները:

Եկեղեցին, ինքն էլ տկարացած ու կծկուած, բաւա-
կան չէր դրա համար:

Ժողովրդի ծառաներ էին պէտք, խալխի նոքարներ»
(էջ 30-31.):

Ու, այդ «խալխի նոքարներ»-ը եղան աշուղները:

Այսպէսով, ահաւասիկ, հեղինակը մասնագիտացու-
ած երգ-երաժշտութեան պատմական ենթահողը տալէ
յետոյ կը հասցնէ ընթերցողը բուն աշուղութեան սեմին:

ԳԼՈՒԽ 3

ԱՇՈՒՂՈՒԹԵԱՆ ԾԱՌՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԱՅՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Այս գլուխը կը սկսի «Աշուղ» բառի բացատրութե-
ամբ, որմէ՛ յետոյ հեղինակը կը ներկայացնէ մասնագի-
տացուած աշուղութեան ծագման եւ զարգացման
փուլերը, աշուղներու գործունէութեանց միջավայրերը,
անոնց ստեղծագործական նիւթին բովանդակու-
թիւնները, ու ապա, կը խօսի աշուղական արուեստի
մասին, բացատրելով թէ՛ ինչպէս, որպէս մասնագիտա-
ցուած արուեստ, աշուղութիւնը ունեցած է իր հաստատ
կանոնները, սահմանափակումներն ու պահանջները, եւ
կը թուէ անոնցմէ՛ գլխատրները. - « <...> բանաստեղծու-
թիւնները յօրինել աշուղական չափերով, եւ ստեղծա-
գործաբար հարստացնել դրանք. իրացնել տուեալ լ
ժամանակին ու շրջապատին յատուկ աշուղական աւ-
անդական եղանակներն ու ճոխացնել դրանք եւս. մաս-
նակցել աշուղական հրապարակային մրցութիւններին
եւ երգով ու նուագակցութեամբ ելոյթներ ունենալ մե-
նակ կամ ընկերներով» (էջ 35.):

Վարպետ աշուղներու մօտ աշակերտող արուեստա-
գէտները տարիներու դաստիարակութենէ՛ եւ խիստ
քննութենէ՛ յաջողապէս անցնելէ՛ յետոյ միայն կը կարող-
անային վարպետի կոչում ստանալ եւ մկրտուիլ աշու-
ղի անունով:

Այստեղ, Թահմիզեան հեղինակաւոր եւ յատուկ խո-
րացումով կը ներկայացնէ մասնագիտացուած աշուղու-
թեան ուսման ծրագրի տաղաչափութեան եւ ձայնեղա-
նակներու բնագաւառներու մէջ արհեստավարժութեան
խնդիրներուն հետ կախում տեսական եւ գործնական
գիտելիքները:

Ահա, պարագայի մը լուծման կերպը.-

Տաղաչափութեան գետնի վրայ գիտելիքները առըն-
չուելով արարական դասական «Արուտ»ի դրոշմներ
հետ եւ տրուած ըլլալով որ, արարական տաղաչափու-
թեան հիմը կը տարբերի հայկական եւ թրքական տա-
ղաչափական հիմերէն, օրինակի համար, ինչպէս բոլոր
արարական երկիրներ ծնած ու արարեղէն լեզուն տր-
ված հայեր, անոնցմէ՛ մին ըլլալով եւս, գիտեն որ արա-

բական լեզուի կառուցուածքը հիմնուած է նկարագրով
կարճ ու երկար ձայնահնչիւններով գոյացած վանկերու
գուգորդութեամբ յառաջ եկած կշռութային յատուկ
(կարճ-երկար, կամ երկար-կարճ) սկզբունքի վրայ,
որուն արտասանական միատրի չափանիշը կ'ըլլա յ
կարճ վանկի տետրութիւնը: Մինչդեռ հայերէնը պատ-
կանելով կայուն շեշտ ունեցող լեզուներու խումբին, ան
տետրութեամբ կարճ ու երկար վանկեր չունի. այլ՝ ունի
անշեշտ եւ շեշտուած վանկեր, եւ որպէս ընդհանուր կա-
նոն շեշտը կ'իյնայ բառի վերջին վանկին վրայ: Ուրեմն,
անմիջապէս կարելի է նկատել տարբերութիւնը. մինչ
արարական վանկերը կը ներկայանան մեզի ժամանա-
կային-տետրական տարբեր արժէքներով, հայկական
վանկերը, սակայն, կը ներկայանան մեզի ոչ թէ ժամա-
նակային-տետրական, այլ շեշտային-ուժային (*dyna-
mic*) արժէքով: Թահմիզեան կը բացատրէ թէ ինչպէս
լուծուած է այս հարցը ըսելով. - « <...> Հայ, թուրք եւ
աղբեջանցի աշուղները «Արուտ»ն են ուսումնասիրել,
վերջինիս գրեթէ կատարելապէս մշակուած լինելու
պատճառով: Եւ իրօք, այդ անելով նրանք, տեսական
հարթութեան վրայ յատակ գաղափար են կազմել՝ խօս-
քի կշռութիւն ստեղծող հիմնական տարբերի (ձայնաւոր-
ների, վանկերի, տաղաչափական ոտքերի, անդամների,
դադարների, կիսատողերի եւ տողերի) մասին, ինչպէս
եւ բանաստեղծական կայունացած ձևերի կամ տեսակ-
ների, տների կառուցման, յանգագիտութեան եւ առհա-
սարակ չափագիտութեան վերաբերեալ:

Այդ ճանապարհով ձեռք բերուած գիտելիքները
գործնական կիրառութեան հունի մէջ դրուել են, հիմնա-
կանում բնութեամբ կարճ ձայնաւորն ու վանկը որպէս
անշեշտ, եւ երկարը՝ որպէս շեշտակիր մեկնաբանելու
միջոցով» (էջ 36.):

Այս առնչութեամբ ծանօթագրութեան մէջ կը կար-
դանք. - « Ճիշդ այդպէս են վարուել նաեւ միջնադարե-
ան հայ շարականագիրներն ու քերթողները, որոնք տե-
սական գիտելիքներ իրացնելու նպատակով աչքի
առաջ են ունեցել հին յունական չափական տաղաչա-
փութեան վերաբերող դրոշմները, իսկ գործնականում
հիմնուել են հայոց լեզուի հնչիւնակազմութեան վրայ»
(էջ 36.): Եւ, օրինակներ թուելով կը շարունակէ տակաւ-
ին աւելի խորանալ նիւթին մէջ: (Այստեղ փակագիծ մը
բանալով կ'ուզեմ ընթերցողին յայտնել, որ գրքին ծանօ-
թագրութիւնները պէտք չէ երբեք երկրորդական նկա-
տելով անտեսել: Թահմիզեանի ծանօթագրութիւնները,
իրենց յարաբերական նիւթերու ծանրակշիռ եւ խորի-
մաց ներկայացումներով, նոյնքան կարեւոր ու արժէ-
քաւոր են, որքան գրքին նիւթը):


Ապա, հիմք ունենալով աշուղական արուեստի ամե-
նագիտակ անձերէն Աշուղ Զիւանիի որդույն՝ արուես-
տաբան. Լեւոնեանի «Աշուղները եւ նրանց արուեստը»
աշխատասիրութիւնը, Թահմիզեան կը ներկայացնէ
աշուղական բանաստեղծական տուններու կառուցման-
յանգաւորման եւ շեշտադրութեանց ընդհանուր կանոն-
ները, ուր կը տեսնենք թէ ինչպէս տաղաչափական այս
ձևերը կը գտնուին նաեւ հայ մասնագիտացուած եւ ժո-
ղովրդական երգարուեստին մէջ. այսպէս Ներսէս Շնոր-
հալի (1102-1173 թթ.) մեծ վարպետութեամբ կիրարկած

Նվիրվում է Նիկողոս Թահմիզյանին

է 5-15 վանկանի բազմապիսի չափեր: Ըստաճն առելի հասկընալի դարձնելու համար մի քանի օրինակներ յիշենմ:

Իւրաքանչիւր տաղաչափական ձեւատեսակ ունի իրեն յատուկ արարական կաղապարը:

Հինգ վանկանի տաղաչափական արարական կաղապարն է.-



Եւ, Ներսէս Շնորհալիի այբենական կարգով յօրինած այնքան ժողովրդականացած «Առաօտ լուտոյ» եւ «Աշխարհ» ամենայն» երգերը յօրինուած կաղապարին վրայ, այսպէս.-

Առաօտ լուտոյ. արեգակն արդար.

առ. իս լոյս ծագեա՛

Բդխումն 'ի Հօրէ. բղխեա 'ի հոգւոյս.

բան քեզ 'ի հաճոյս:

եւ այլն:

Իսկ, տասնըինգ վանկանի տաղաչափական արարական կաղապարն է.-



Նորահրաշ պսակատր եւ զօրագլուխ առաքինեաց, Վառեցար գինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու:

Ինչպէս կը տեսնէք, Ներսէս Շնորհալիի այնքան գեղեցիկ յօրինումներէն վարդանանց Զօրավարաց նուիրուած ռազմաշունչ «Նորահրաշ պսակատր» շարականը յօրինուած է այս կաղապարով:

Իսկ, ժողովրդական տաղաչափական արուեստէն օրինակ մը տալու համար յիշենմ հետեւեալը.-

Այս աշուղականն է.


Եարի լեզուն բլբուլ է,

Դաստամազը սըմբուլ է,

Սայեաթ-Նովէն լալիս է,

Մա՛կար դարիբ բլբուլ է:

Ատր արարական կաղապարն է.-



4 + 3 = վանկերով

Ժողովրդական խաղը հետեւեալն է.-

Աշուղի պէս խաղ ասա,

Բլբուլի պէս տաղ ասա.

Ինչքան գովես, ես արժեմ,

Իմ մօր գովական փեսայ:

Այսպիսի շուրջ 40 տաղաչափական տեսակներ կան աշուղական արուեստին մէջ:

Թահմիզեան կ'ըսէ.-

« <...> ինչքան էլ հայկական աշուղական չափերը տարբերում են հայ քերթողութեան եւ միջնադարեան գուսանական չափերից, դրանց գործնականում ծանօ-

թանալու (խաղերի գրական բնագրերն ընթեռնելիս) օտարոտի ոչինչ չենք զգում:

Նախ կիրառուած տաղաչափական որոշակի չափերի խնդրում հայ աշուղները, մասնաւոր սկզբնական շրջանում, ուղղակի օգտուելով պարսկա-արաբական դասական արուեստից, ներըմբռնումով (*intuition*) թէ ենթագիտակցութեամբ, նրանք զարգացման մի նոր հարթութեան վրայ փաստօրէն վերակենդանացրին միջնադարեան հայ քերթողութեան կապերը արեւելեան գրական-գեղարուեստական մշակոյթի հետ» (էջ 40-41.):

Այս, կ'անդրադառնայ գրական բնագրերու յատուկ շեշտադրութեան խնդրին, որ յատկօրէն կը տեսնուի «Մէմայի» տաղաչափական ձեւատեսակին մէջ: Ահա Մէմայիի բանաստեղծական կառոյցն ու վանկերը շեշտադրելու օրինական պատկերը.-

3 կամ 4 տուն,

Տունը՝ 4 տող,

Տողը (4 + 4 +4 +4) 16 վանկ:

Իւրաքանչիւր 4 վանկը մէկ ոտք է՝

Իւրաքանչիւր ոտքի 2-րդ վանկը շեշտել:

Եւ երկու օրինակ կը տեսնենք գրքին մէջ: Անոնցմէ առաջինը կը ներկայացնեմ, որպէսզի ընթերցողին համար հասկնալի դառնայ այս շեշտադրութեան խնդիրը.-

Անուժ ձմրան | արև դարձաւ | վառարանը | հայրց բախտին,

Ինչպէս կը տեսնէք, երրորդ հատածին, կամ ոտքին, որ «վառարանը» բառն է, շեշտը կը հակասէ հայկական բառաշեշտին: Բայց, երբ արուեստագէտ աշուղին կողմէ երաժշտական բաղադրիչը միանայ այս բանաստեղծութեան ան կը լսուի սահուն եւ բնական, կ'ըսէ Թահմիզեան եւ կ'աւելցնէ.- «Երաժշտա-բանաստեղծական հարթութեան վրայ է լուծում «Մէմայի»-ի ձեւին, այլեւ, կարող ենք համարձակ ստելացնել, ընդհանրապէս աշուղական խաղերի գրակա բնագրերին յատուկ շեշտադրութեան խնդիրը» (էջ 42.):

Այս, հեղինակը ընթերցողին դիտել կու տայ, որ հայ հոգեւոր երաժշտութեան մէջ եւս երբեմն մեղեդիական դասոյթի կառուցուածքը շեշտադրութեան տեսակէտով կ'ենթարկուի չափակշռութային որոշ բանաձեւի. եւ որպէս օրինակ կը բերէ ննջեցելոց կանոններէն Միջակ-ԲԿ «Սարսափելի որոտմամբ» Տէր յերկնից շարականին առաջին տունը:

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՈՐՈՏՄԱՄԲ

ՄԻՋԱԿ - ԲԿ Տէր յերկնից

Նվիրվում է Նիկողոս Թահմիզյանին

Յետոյ՝ կը տեսնենք թե՛ ինչպես շարականերգութան մէջ գործածուած հնագոյն չափը, որ «Հայկական չափ» կը կոչուի, ըստ Հ. Արսէն Բագրատունիի համեմատելի է «Սէմայի»ի հետ: Ահա, հայկական չափ»ի կառոյցին ու շեշտադրութեան օրինական պատկերը.-

3 կամ աւելի տուն,
Տունը՝ 3 կամ 4 տող,
Տողը՝ (4 +4 +4 +4) 16 վանկ,

Քառավանկ ոտքերը բարդ եւ մեծավերջ կառոյցով:
Իւրաքանչիւր ոտքի 2րդ եւ 4րդ վանկերը շեշտել՝
Յստակացնելու համար այս պատկերը,

Թահմիզեան կու տայ շեշտադրութեանց հետեւեալ ուրուագիծը (էջ 44.)-

— — — — — , — — — — — , — — — — — , — — — — — :

Որպէս օրինակ, այս անգամ կը բերէ ննջեցելոց կարգի ԴԿ «Ես ասացի Տէր ողորմեա» (էջ 45.) Տէր յերկնից շարականը:

ԵՍ ԱՍԱՑԻ ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱ

Միջակ - Գկ

Տէր յերկնից

Ես ա՛-սա-ցի տէր ո՛ղոր-մեա հոգ-ւոյ ի - մոյ բա՛զ-մա-մն - դի,

Որ բնա - կեալդ ես ի յեր - կնս եւ յա՛ն-մարմ-նոց փա՛ռ-ոս-րա - ճիս. հայնք:

Այս, տարբեր տարբեր երգատեսակներ ներկայացնել եւ օրինակներով բացատրել յետոյ զանոնք, կ'ըսէ. «Աշուղական երաժշտութիւնը ազգային մերձարեւելեան քաղաքային երգ ու նուագի դարաւոր նուաճումների վրայ հիմնուած, կայուն աւանդույթներ ունեցող, բայց եւ միշտ պատմական զարգացման ընթացքի մէջ զանոնող մասնագիտացուած արուեստ է» (էջ 53.):

Ասկէ յետոյ ընթերցողը կը ծանօթանայ աշուղական արուեստի երգ ու նուագի կատարողական երեսին:

«Ի տարբերութիւն ժողովրդականի, այն՝ (աշուղականը. - **Գ.Փ.**) բնոյթով համերգային է: Պահանջում է ունկնդիր հասարակայնութեան անկայութիւն եւ ունի դրա վրայ ներգործելու միտում: Աշուղական կատարողական արուեստի անբակտելի յատկանիշներից է յանկարծաբանութիւնը (*extemporization, improvisation*), որը կատարողը երգն ու նուագը երբեմն զգալի մօտեցնում է տեղն ու տեղը յօրինուած ստեղծագործութեան» (էջ 54.):

Հեղինակը շարունակելով կը յիշէ աշուղներուն գործածած երաժշտական գործիքները, հայկական եւ մասնաւոր աճանցեալ (*altered*) ձայնահնչունաշարերով եղանակները, երաժշտական բարդ եւ խառն չափերէն յառաջ եկած կշռութային բազմազանութիւնը, ինչպէս նաեւ ԺԿ-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ սելճուկեան աշխարհաւեր արշաւանքներու հետեւանքով օղուգթորքմենական քոչուոր ցեղերու հաստատուիլը, անոնց հպատակ ժողովուրդներէն՝ հայերէն, յոյներէն եւ ուրիշներէն կատարած մշակութային գետնի վրայ փոխառութիւնները, եւ կ'ըսէ.- «Թուրքերէնում հայերէնից փոխառուած 223 բառեր կան, որոնցից 25-ը ժողովրդական բառերի անուններ են, ներառեալ «պար» խօսքն իսկ, այսպէս.-

- «Պար - *bar*,
- Հորան - *horan*,
- Հոյ նար - *Oynar*,
- ովենք - *govenk*,
- ութանապար - *Kotanabar*,
- Վարձակ - *varsagi*,
- խմրի պար - *Gumri bar*,
- Համշէնի հորան - *Hamsen horani*,
- Հին Համշէն - *Eski Hamsen*,
- Մարօ - *Maro*,
- Թէլլօ - *Tello*,
- եւայլն...» (էջ 55.):

Փոխառութիւնները այսքանով չեն վերջանար:

ԺԳ-րդ դարու առաջին կէսին սելճուկեան պետութեան ամենաձաղկուն շրջանին հայ յաւագոյն գուսաններու ամբողջական խումբեր, կազմեր Իկոնիոյ սուլթանութեան զարդն են համարուեր:

Թահմիզեան ցոյց տալէ յետոյ թե՛ Ժամագրքի, Շարակնոցի, Պատարագամատոյցի, անձարանի եւ Մանրուսման գրքերու մէջ, այս շրջանէն, յատկապէս ԺԵ-րդ դարէն, հայկական միաձայնային երաժշտութեան գրի-խատր ու երկրորդական ձայնեղանակներու միակցութեամբ տասնեակներ հաշուող չափանմոյշ մեղեդիներու պերճ համակարգութիւն մը, զոյացած էր, ըստ Կոմիտաս Վարդապետի 150-էն աւելի, որուն միայն մէկ երրորդը հասեր է մեզի, ան հարց կու տայ. «Որտե՞ղ են մնացածները». եւ կը պատասխանէ. - «...Հայ երաժշտութեան մեղեդիական հարստութիւնների մեծագոյն մասն ուղղակի կամ անուղղակի կերպով ներքաշուել է մերձարեւելեան արուեստի ընդարձակ խճանկարի մէջ: ործընթացն սկսուել է Ժ. դարում, եւ զնալով խորացել հետագայ հարիւրամեակներու:

Իրան նպաստել են՝ Օսմանեան պետութեան հաստատումը 1299-ին (որն անմ իջապէս շարունակութիւնը եղաւ Իկոնիայի սուլթանութեան), Սսի անկումը 1375-ին, Կ. Պոլսի գրաւումը 1453-ին, եւ, ի վերջոյ, Օսմանեան կայսրութեան կազմաւորումը ԺԵ-ԺԶ դարերում» (էջ 57.):

Այսպէսով Փոքր Ասիոյ հսկայածաւալ տարածքներու վրայ թրքերէնը կը դառնայ պարտադիր լեզու:

Կ. Պոլիսը կը դառնայ Մերձաւոր Արեւելքի արուեստներու կեդրոն: Հայ երաժիշտներ եւս իրենց գործունէութեան վայր կը դարձնեն զայն, ուր յաւագոյնները կը բարձրանան մինչեւ պալատական շրջանակներու մէջ:

Օսմանեան կայսրութիւնը ըլլալով ուշ միջնադարու մահմետական հզօրագոյն պետութիւնը, հայ արուեստագէտներու կատարած կարեւոր դերը Մերձաւոր Արեւելքի թէ՛ կատարողական եւ թէ՛ ստեղծագործական գետններու վրայ մեծ նշանակութիւն կը ստանար, եւ ներծծելով տարածաշրջանին յատուկ մեղեդիական հարստութիւններու չափանմոյշ եղանակները, հայ աշուղները վերարտադրելու ատեն գիտակցաբար թէ անգիտակցաբար իրենց ազգային էութիւնն ու անհատական ճաշակը կը դնէին իրենց գործերուն մէջ:

ԺԷ-րդ դարու առաջին քառորդին Նոր Ջուղայի մէջ կը հիմնուի հայկական դպրոցը, որուն հետեւող աշուղները կը յօրինեն Նոր Ջուղայի բարբառով, պարսկերէ-

նով եւ ատրպէճաներէնով:

Շուրջ մէկ դար յետոյ, Կ. Պոլսոյ մէջ կը հիմնուի թրքա-հայկական աշուղական դպրոցը, որուն հետեւողները կը յօրինեն գլխաւորաբար թրքերէնով: Իսկ, ԺԸ-րդ դարու կէսերուն Թիֆլիսի մէջ կը հիմնուի վրացահայկական աշուղական դպրոցը, որուն հետեւողները կը յօրինեն Թիֆլիսի հայկական բարբառով, վրացերէնով եւ ատրպէճաներէնով:

Թահմիզեան կ'ըսէ.- «Ճագումով գաղթաշխարհին կապուած հայկական աշուղութիւնը սկզբից եւթ ունեցել է, դէպի բուն ազգային արուեստը երկարելու, եւ հայրենի երկիրը տարածուելու եւ այնտեղ խարսխուելու միտումը, որն եւ առաւել բացայայտ դարձաւ ԺԹ դարի կէսերին եւ շատ չանցած իրականացաւ» (էջ 59.): Եւ ծանօթագրութեան մէջ կը կարդանք.- «Յիրաւի, Սայեաթ-Նովայի դարակազմիկ ստեղծագործութեամբ արդէն կանխորոշուած էր դա: Նրանից յետոյ Շիրինը (1827-1857 թթ.), որն արդէն Երեւանի դպրոցն է ներկայացնում, իր խաղերով այդ ուղղութեամբ առաջընթաց կարելու քայլ է կատարում եւ կապող օղակ է հանդիսանում: Իսկ քիչ անց, հայկական ազգային դպրոցը վերջնականապէս ձեւաւորում եւ Հայաստանում արմատաւորում է Ջիվանիի (1846-1909 թթ.) արդիւնաւետ ջանքերով: Նա իր հարուստ ստեղծագործութեան հիմքում դրեց հայոց գրական նոր լեզուն եւ ազգային ժողովրդական ոգիով յօրինուած բազմազան եղանակներ» (էջ 59.):

Հայ աշուղական վերոյիշեալ դպրոցներուն մէջ ձեւաւորուեցաւ եւ կազմուեցաւ հայ մասնագիտացուած աշուղի տիպարը:

Հայ աշուղներ սպրելով բազմալեզու միջավայրի մէջ եւ շփման մէջ ըլլալով Մերձատր Արեւելքի այլազգի աշուղներու հետ, սկզբնական շրջանին հայ աշուղական արուեստը հիմնական մի քանի կողմերով եւ բազմաթիւ արտաքին յատկանիշներով հասարակաց շատ գիծեր ունէր այլազգի աշուղներու արուեստին հետ:

Որպէս կատարողներ, աշուղները մեր ժողովուրդին ձանձօրացուցին արեւելեան շարք մը վէպեր, սիրավէպեր, եւ հեքիաթներ, երբեմն, նոյնիսկ հայացնելով երգուող հատուածները: Իսկ անոնցմէ ուսեալները հաղորդուն լով Արեւելքի մեծ երգիչներու՝ Ֆիրդուսիի, Օմար Խայեամիի, Նիզամիի, Հաֆէզի, Ֆիզուլիի ու այլոց գործերուն հետ նուաճեցին ժողովուրդի հոծ զանգուածներուն սիրտը եւ որոշ չափով ազդեցին հայ գրչի մշակին վրայ:

ԺԷ-րդ դարուն, Հայաստանի տնտեսական կացութիւնը յարաբերաբար աւելի տանելի վիճակի մէջ ըլլալով, շնորհիւ ասի մը լուսամիտ եկեղեցականներու, սկսաւ մշակութային զարթօնի շարժում մը, որով դրպրոցներու ցանցով մը օժտեցին հայ աշխարհը՝ Ջուղայէն մինչեւ Էջմիածին: Թահմիզեան կ'ըսէ.- «Խաչատուր, Կեսարացու աշակերտ Ոսկան Վարդապետը, գլուխ բերելով հայերէն Աստուծաշունչի՝ Խաչատուր Շարակնոցի ու Ժամագրքի առաջին տպագրութիւնները, փաստօրէն լուրջ գործ է կատարել նաեւ առողջամտութեան նշանների ու խազագրերի համակարգի ուսումնասիրութեան առումով:

Փրկում էին, երաժշտական բաղադրիչի իմաստով, Շարակնոցը՝ գրեթէ ամբողջութեամբ, եւ, Խաչատուր Ժամագրքի միջոցով, նաեւ կարելուր մասեր անձարանից ու Մանրուսման գրքից» (էջ 62.):

Վերանորոգութեան այս շարժումը շարունակուեցաւ զարգանալ յաջորդ դարուն, այս անգամ, պապական լուսաւորութեան ակունքներէն ստանալով ոյժ, աջակցութիւն, օգնութիւն եւ օժանդակութիւն:

Այստեղ, Թահմիզեան կ'առանձնացնէ Մխիթար Սեբաստացին, դրուատելով անոր կատարած աշխատանքը, Գրիգոր Շղթայակիրը, որ վերակենդանացուց Երուսաղէմի հայոց վանքը, Յովհաննէս Կոլոտը, որ նոր շունչ տուաւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան եւ Սկիւտարի մէջ հիմնելով դպրանոց մը, նոր երես մը բացաւ Թուրքիոյ հայոց ԺԸ-րդ դարու մտաւորական կեանքին մէջ, եւ Սիմէոն Երեւանցին որ Մովսէս Միւնեցիէն յետոյ հայոց պաշտօնեղբայրութեան երկրորդ մեծ բարենորոգիչը եղաւ:

Ապա, ուշ միջնադարու մէջ յօրինուած երգերէն, որպէս յիշատակութեան արժանի, կը յիշէ Մխիթար Սեբաստացիի շարականները, Սիմէոն Երեւանցիի «Արի Աստուածը», Պետրոս Ղափանցիի «Կանայք ամենայն»ը, եւ կ'աւելցնէ.- «Երեք հեղինակների երգերն էլ զուգորդուած են հայ հոգեւոր երաժշտութեան մի շարք արդէն յայտնի, սիրուած եղանակների հետ» (էջ 63.):

<...> Ըստ էութեան, հայ տաղերգութիւնը զարգացման մի նոր աստիճանի է բարձրանում ԺԷ-ԺԸ դարերում, աշուղութեան ծաւալման զուգընթաց, այլեւ առհասարակ վերանորոգութեան ծայր առած ընդհանուր ընթացքի հետ համաքայլ: Վերջինս տաղերգութեան բերում էր երեք նորոյթ-կրօնական զգացման վերարծարծումը, աշուղական արուեստից եկող նկատելի հովեր, եւ գրաբարի ճաշակը» (էջ 63.): Ապա, ուշադրութիւնը սեւեռելով նոյն ժամանակաշրջանէն ուրիշ երեք հեղինակներու վրայ, Նաղաշ Յովնաթանի, Պաղտասար Դպիրի եւ Պետրոս Ղափանցիի, ընթերցողին կը յայտնէ որ, ինչպէս Նաղաշ Յովնաթան իր սիրոյ եւ խնձորի երգերով ու տաղերով նախորդ շրջանի աւանդութիւնները զարգացուցած է, միաժամանակ ենթարկուելով աշուղական ստեղծագործութեան որոշ ազդեցութեան եւ փոխադարձաբար. թէ՛ ինչպէս իր գործերուն արեւելեան գունատրումը խօսուն կերպով կը փաստուի Սայեաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ երգով, որ յղացած է, Նաղաշ Յովնաթանի «Նստեմք ի մէջիս» տաղի կրկնուող բաժնի (*refrain*) եղանակով, եւ կ'աւելցնէ, որ Յովնաթանի շարք մը տաղերու խորագրերուն տակ, հայերէն երգերու եղանակներէն զատ կը հանդիպինք ատրպէճանական կամ, աւելի ճիշդ, պարսկական երգերու «ձայներու» յիշատակութիւններու եւս:

Նաղաշ Յովնաթանի այս արեւելեան ձայնեղանակներու ու աշուղական արուեստի հանդէպ ցուցաբերած իր ընթացքին կը միանայ եւ նուազ թէ առաւել չափով կը ձայնակցի Պաղտասար Դպիր:

Պաղտասար Դպիր ըլլալով Կ. Պոլսոյ դպրոցի աշուղ, կը ներկայանայ մեզի որպէս թրքահայ աշուղ, որ տաղերու յօրինման համար անկախ իր անձնականէն օգտագործած է հայկական, ինչպէս նաեւ արեւելեան

Նվիրվում է Նիկողոս Թահմիզյանին

մեղեդիներ, եւ նաեւ դիմած է օսմանեան երաժշտական փորձին, որ ինչպէս վերը տեսանք, հայերը մեծապէս նպաստած էին անոր զարգացման գործընթացին: Ան ըլլալով նաեւ հայկական աշխարհիկ տաղերու դրական խօսքերուն կ'ընդդէմէր. «Բառ ու բանի եւ դարձածքների գրաբարեան ձեւերը» (էջ 64.):

Պաղտասար Դպիր, որպէս ԺԸ-րդ դարու ամենատաղանդաւոր բանաստեղծ-երաժիշտներէն մին ազդած է իր ժամանակակիցներուն վրայ եւ փոխադարձաբար: Օրինակի համար, «Ի ննջմանէդ արքայական» տաղին ծանօթ է եղած Սայեաթ-Նովան եւ ստեղծագործաբար օգտուած է անկէ:

Իսկ Պաղտասար Դպիրին կը ձայնակցի երրորդ աչքառու բանաստեղծ երաժիշտ՝ Պետրոս Ղափանցի, որ կրելով հանդերձ առաջինին ազդեցութիւնը, գեղարուեստական խօսքի գրաբարեան ձեւեր գործածելու իր հակումով քայլ մը այլեւս յառաջ երթալով իր «Երգաբան»ին մէջ այլեւս չկան թրքական եւ կամ ընդհանրապէս արեւելեան եղանակներու յիշատակութիւններ:

Ապա, Թահմիզեան, որպէս ԺԸ-րդ դարու հայ նշանաւոր նուագաձուի, կը յիշէ թամպուրի (թամպուրահար) Յարութիւնը, եւ կ'ըսէ. - «Որ խորացել է նաեւ արեւելեան երաժշտութեան տեսութեան մէջ եւ իր «Արեւելեան Երաժշտութեան Ձեռնարկ» հայատառ թրքերէն աշխատութեամբ նշանակելի հետաքրքրութիւն է առաջացրել Կ. Պոլսում երաժշտութեան տեսութեան հարցերի նկատմամբ» (էջ 66.): Եւ հեղինակը այս գլուխը կը փակէ այսպէս. - «Այսպէս, դժմ յանդիման են կանգնել, բանաստեղծն ու աշուղը, տաղերի երգիչ-կատարողն ու սազանդարը, եկեղեցական երաժիշտն ու քաղաքային մասնագիտացուած երաժշտարուեստի մշակը:

Այսպիսի յետնախորքի վրայ, եւ այսպիսի պայմաններում է յայտնուել, ահա, Սայեաթ-Նովան՝ ու բարձրացել այս ամէնի վրայ» (էջ 67.):

ԳԼՈՒԽ 4 ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ» ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ (Ուրուագիր)

Սայեաթ-Նովա ունեցած է հետաքրքրական, բազմերես, հարուստ, խորախորհուրդ, վերելքներով ու անկումներով, յուսախարութիւններով ու հոգեկան տուայտանքներով, պերճանքներով ու տատասկներով, եւ ցարդ անհասկնալի մնացած երեւոյթներով լեցուն կեանք մը եւ դժբախտ, ողբերգական վախճան մը:

Գրքի այս բաժինով Թահմիզեան կու տայ Սայեաթ-Նովայի բարդ կեանքի ուղիին ուրուագիրը միայն, հիմնուելով սայեաթնովագիտութեան մէջ հաւաքուած մեծ աշուղի խաղերէն, ու անոր որդի Օհանի կազմած տետրակներու ծանօթագրութիւններէն հաւաքուած տուեալներու վրայ, ինչպէս նաեւ երգչի զաղափարած երկու միջնադարեան գրչագրերու յիշատակարաններուն, ժառանգներուն եւ աւագ ու կրտսեր ժամանակակիցներու յուշերուն վրայ:

Այժմ, անցնինք ծանօթանալու այսպիսի աղբիւրներու վրայ հիմնուած Թահմիզեանի առաջատուական ձեւով ներկայացուցած Սայեաթ-Նովայի կեանքի ուղիին:

Իր ծննդավայրի եւ ծնողներու մասին Սայեաթ-Նովա իր խաղերէն մէկուն մէջ տուած է հետեւեալ տեղեկութիւնը.

«Սայեաթ-Նովա վաթսուհիցն հարց կու տան.
Մէկը կ'օտ հինգն է, մէկը՝ Համադան...
Վաթսանքս Թիփլիսն է, կողմը՝ Վրաստան.
Մերըս Հավաբարցի, հէրըս Հալաբու» (էջ 69.):

Իսկ, տարիներ յետոյ, երբ ան կղերական դարձած էր Ստեփանոս անունով, իր ընդօրինակած երկու ձեռագիրներու յիշատակարաններուն մէջ ձգած է հետեւեալ կարեւոր ծանօթութիւնները.

Ա. Ձեռագիր - «Գրեցաւ Ի իլան, Անգալի եկեղեցին՝ թուին ՌՄԺ (1761 թ.): Ով ընթերցող, յիշեայ գծող Ստեփանոս վարդապետս, որ Սայեաթ Նովայ ասին, եւ հայր իմ մա (հ)տիսի Կարապետ, եւ դուք յիշեայ լինիք: Առաջնորդութեան Հախապտո Չաքարիա Վթ Թիփլիզցի» (էջ 70.):

Բ. Ձեռագիր - «Ի թուին հայոց ՌՄԺԵ (1766 թ.)... գրեցաւ ի Կախո քարվանսարէն: Ով ընթերցող, յիշեայ զգծող գրոյս մեղապարտ Ստեփանոս քահանայս, որ Սայեաթ Նովա կոչեն եւ հայրն իմ մահտեսի Կարապետն եւ մայրն իմ Սարրայ եւ դուք յիշեայ լինիք առաջի Աստուծոյ. ամէն» (էջ 70.): (Սայեաթ-Նովայէն կատարուած մէջբերումներուն ուղղագրութիւնը պահուած է այնպէս, ինչպէս մեծ աշուղը դրած է. իսկ վրացերէնէն ու ատրպէճաներէնէն կատարուած թարգմանութիւնները պահուած են այնպէս, ինչպէս թարգմանիչը կատարած է):

Ուրեմն, ինչպէս կը տեսնենք, հայրը Հալեպէն Վրաստան գաղթող Մահտեսի Կարապետն էր, իսկ մայրը՝ Սառան, Թիփլիսի Հալաբար արուարձանի բնակիչներէն, որ համաձայն վրացական աղբիւրնէն, ժամանակաորապէս ծնողաց հետ փոխադրուած էր հայկական Սանահին գիւղը:

Շատ հաւանաբար, Սայեաթ-Նովա Սանահին ծնած է, ու ապա ծնողաց հետ մանուկ հասակին վերադարձած է Թիփլիս: Ասոր համար է որ իր երգին մէջ կ'ըսէ. «Հայրենիքս Թիփլիսն է»:

Սայեաթ-Նովա ծնած է 1712-ին, հաւանաբար Սանահին գիւղի մէջ: Աւագանի անունը, Արութին (Յարութիւն): Տակաւին մանուկ, ծնողաց հետ կը հաստատուի Թիփլիսի հայկական Հալաբար արուարձանը, ուր կ'աճի ու կը մեծնայ փոքրիկ Արութիւնը:

Իր գրելու կերպէն յայտնի է, որ աղքատ ընտանիքի զաւակը Արութին, ժամանակի ընդունուած չափանիշներով կանոնաւոր կրթութիւն չէ կրցած ստանալ: Միայն գրել-կարդալ սորված է: Բազմաշնորհ պատանիին կրթական օճախը կ'ըլլայ իր տան ու անմիջական շրջապատի առօրեան. անկէ կրած տպաւորութիւններով կը զարգացնէ իր մէջ երաժշտական հակումները (յատկապէս իր հօրմէն, որ քամանչա նուագող էր), լեզուական ընդունակութիւնները եւ տարեցներու ու ժողովրդական իմաստութիւններու պերճ պաշարով կը հարստացնէ իր պատանի միտքն ու հոգին:

Այս շրջանին Թիփլիսի եռալեզու (հայերէն, վրացերէն, ատրպէճաներէն) բնակչութեան կէսէն աւելին հայեր էին:

Այլազանություններով ու հակադրություններով լեցուն, ինչպես նաև հայկական տարրի անմիջական ներկայությամբ յազեցած միջավայրը, ԹԻՖԼԻՍԱՏԱԿԱ ՔԱՐՔԱՅԻՆ իր իրայատուկ դարձած արձանադրություններով ու ոճաբանություններով, վրացերեն ու ատրպեճաներեն լեզուներու կենդանի գործածությունը, հրապարակներու վրայ տեղի ունեցող աշուղական ելույթներն ու մրցումները կը դառնան Արութինի դպրոցը, ուր, հազիւ 7-8 տարեկան, կը փորձէ յօրինել, երգել ու նուագել:

Սակայն, չքատր ծնողներ, իրենց զուսակին ապագան ապահովելու մտահոգությամբ կը յանձնեն փոքրիկ Արութինը ջուլիակ վարպետի մը, որ որպէս աշկերտ շուտով կը գերազանցէ բոլոր ակնկալությունները:

«Տասնըրկու տարեկանում ինձ յանձնեցին ուստաքարին, Տասնըրեք տարեկանում իմ արհեստում տուի, անցայ. Տասնըչորսում, իմ շնորհքով, վարպետս պարգև ստացաւ» (էջ 73.):

Գործի, շուկայի, այս հետաքրքրական միջավայրին մէջ Արութին անկասկած, որ պարարտ հող գտած էր իր երաժշտաբանաստեղծական հակումները լիովին դրսևորելու:

Տասնըչորս տարեկանին, երբ, այլևս արհեստին տիրանալով կեանքի ապրուստը ապահովելու հարցը մասամբ լուծուած էր, ամբողջությամբ կը նուիրուի իր կոչումին՝ աշուղութեան:

Տարիներ տեւող աշուղական դպրոցի գիտելիքներուն տիրանալէ, երկար ճամբորդություններ կատարելէ, կեանքի ու արուեստի փիլիսոփայությունը մշակելէ ու անհրաժեշտ պաշարը ամբարելէ յետոյ, երիտասարդ Արութին ասպարէզ կ'իջնէ:

«Տասնըինը տարեկանում ման եկայ Հաբաշ-Հինդուստան. Քսան տարուց, էշխի ինկած, լալ կը ծախսեմ սովդաքարին» (էջ 74.):

Ջուլիակ Արութին էրբ դարձաւ Սայեաթ-Նովա, ո՞վ եղալ իր ուսուցիչը, ինչպէս եւ ո՞վ տուաւ այդ անունը իրեն յայտնի չէ:

Երգիչը, ինք իր հասուն տարիքը համարել է 30-ը: «Շատ սիրուն իս, շախաթայի ասողին խոր չիս անի» խաղին կցած ծանօթագրութեան մէջ Սայեաթ-Նովա գրել է.

«Էս դիվանի խիստ լաւն է, ովոր սովրի օղորմի ասէ՛ Հիմի գ'ուզիմ թէ հայեվար ասիմ: Ամէն աստուած, յիս, մոլոս վուրդի Արիութինս, պըստուց ինչոր եարսուն տարին գլուխ դրի ամենան խաղին, ամա Սուրբ Կարապետի կարողութեանով սովրեցա քամանչէն ու չնգուրն ու (թ)ամբուրէն» (էջ 75.):

Այս ծանօթագրություններէն Թախնիգեան երեք տեղեկություններ կը քաղէ.

ա) Ինչպէս բոլոր աշուղները, Սայեաթ-Նովա եւս ինքզինքն ակատել է շնորհաբաշխ Մշոյ Սուլթան Ս. Կարապետի ծառայողներէն մին եւ գացել է Մուշ, եւ

Ս. Կարապետի հին վանքին մէջ ստացել է վերին օրհնությունը: (Արդեօք հոս շնորհուր է Արութինին Սայեթ-Նովա անունը):

բ) Աշուղական արուեստին խորը թափանցելու ու անոր բարձունքներուն հասնելու համար Սայեաթ-Նովա տքներ է «պստուց ինչոր եարսուն տարին» (էջ 75.):

գ) Միևնէ այդ ժամանակը խաղերը ատրպեճաներէնով յօրինուած էին: Ատիկա ԺԷ-րդ դարէն սկսեալ արհեստի դարձած էր արեւելահայ աշուղներու համար, որովհետեւ հայերէն գրական աշխարհաբար գոյություն չունէր տակաւին: Աշուղները գրաբար չէին տրվել. եթէ սորվ'ին իսկ, գրաբարով չէին կրնար հասկցուիլ ժողովուրդի մեծամասնութեան կողմէ. իսկ, հայկական որեւէ բարբառ, տեղական կիրառութեան շրջանակի մէջ միայն պիտի սահմանափակուէր:

Աշուղը բաւական փորձառութիւն ձեռք ձգելէ յետոյ կը համարձակէր հայերէն, տեղական բարբառներով յօրինել իր խաղերը: Ու, այդպէս է ըրել Սայեաթ-Նովա: Ան յօրինել է ԹԻՖԼԻՍԱՏԱԿԱ Հալաբարի բարբառով, որ իրեն համար այդ էր հայերէն մայրենի լեզուն, ինչպէս ծանօթագրութեան մէջ կարդացինք, ուր կ'ըսէր. «Հիմի գուզիմ թէ հայեվար ասիմ»:

Վրաց պալատին մէջ միջին դարերէն ի վեր արքունի հովանաւորութեան արժանացած են հայ գորավարներ, գիտնականներ, բժիշկներ, վարդապետներ, մշակոյթի գործիչներ ու արուեստագէտներ: Այդ աւանդութիւնը շարունակուած է նաև ԺԷ-ԺԸ դարերուն: Օրինակի համար պալատի մէջ էին երեւելի բանաստեղծ եւ նկարիչ Բէգթաբէգ, եւ հայ մշակոյթի հսկաներին բանաստեղծ, երգիչ եւ նկարիչ Նաղաշ Յովնաթան:

Սայեաթ-Նովայի համբաւը արդէն տարածուած էր ժողովուրդին մէջ:

1744-ին Վրաստանի Կախէթի շրջանի Հերակլ Բ թագաւորի հրաւերով Սայեաթ-Նովա կը նշանակուի պալատական երաժշտախումբի անդամ: Ապա, կը դառնայ թագաւորի պատրաստարան երգիչը, նուագածուն եւ զուարճաբանը: Իր խաղերէն մէկուն մէջ հպարտութեամբ կ'ըսէ.-

«Վրաստանի թագաւորի սագանդարն եմ ես, Սայեաթ-Նովան, որին Արութին կ'ասեն» (էջ 77.):

Տարիներ յետոյ Սայեաթ-Նովա այսպէս պատմել է. «Եւ երբ Էրէկլէ թագաւորը խնջոյք սարքեց եւ մեզ՝ նուագածուներիս, տարան նրան մօտ, այն ժամանակ ես պարսկական ձայնեղանակներում (*modes, melody-types*) վրացերէն երգեցի: Թագաւորը շատ հաւանեց ու խալաթ պարգեւեց ինձ: Ապա շատ ուրիշներ էլ (նոյն կերպ) երգեցին եւ ինձ նմանուեցին» (էջ 77.):

Հասկնալու համար Սայեաթ-Նովայի բերած այն նորութեան արժէքը, կարեւորութիւնն ու անոր ունեցած տարողութիւնը պալատէն ներս, պէտք է ընթերցողը ծանօթացած ըլլալը ԺԷ-րդ դարու պալատականներու եւ ժողովուրդի հարուստ դասակարգի քաղաքական ըմբռնումին, նիստ ու կացին, մշակոյթին ու այդ գետնի վրայ երգ ու նուագի, որոնք զօրեղ կերպով, աննախընթաց չափերով պարսկական ազդեցութեան ենթարկու-

Նվիրվում է Նիկողոս Թահմիզյանին

ած էին:

ԺԸ-րդ դարուն, սակայն, լուսամիտ ղեկավարներու շնորհի շարժում մը կը սկսի ղէպի ազգային մշակոյթի վերահաստատում: Ու, այդ գետնի վրայ կու գայ, առաջին հերթին, վրացերէն լեզուին վերարժեւորումը:

Սայեաթ-Նովա, ահաւասիկ, իր յանդուգն եւ խորիմաստ քայլով ու երաժշտական դարձած ճաշակին ղէմ ելլելով, պարսկական ձայնեղանակներու վրայ վրացերէն լեզուով կ'երգէ, ջատագով հանդիսանալով նոր ազգայնական շարժումին, որու համար ոչ միայն կը գնահատուի թագաւորէն, այլ նոր ուղի կը բանայ միւս երաժիշտներուն առջեւ, որոնք մեծ աշուղին վրացերէն լեզուի կատարման կերպը ընդօրինակելով, ինչպէս Սայեաթ-Նովա կ'ըսէ. «ինձ նմանուեցին»:

Մինչեւ 1750-ական թուականներուն սկիզբները Հերակլ Բ. թագաւորը միշտ գնահատած է Սայեաթ-Նովայի կարողութիւններն ու շնորհները: Իսկ, Սայեաթ-Նովա բարձր գաղափար ունենալով թագաւորի մասին հպարտութեամբ ծառայած է անոր, եւ որպէս «հոգեւոր հօր» անկեղծ սէր ու յարգանք տածած՝ անոր հանդէպ:

Սակայն Սայեաթ-Նովայի ճորտութեան մասին յօրինած խաղը, որ մեծ տարածում գտեր էր ամբողջ երկրին մէջ, հարուստ դասակարգի ներկայացուցիչները այդ առթիւ բողոքեր են թագաւորին, բայց ան անուշաղբրութեան մատնելով եղածը, ջանացեր է լռութեամբ լուծել հարցը:

Սակայն, պալատին մթնոլորտը կը սկսի թանձրանալ:

Սայեաթ-Նովայի այս առանձնաշնորհեալ վիճակը նախանձը կը շարժէ պալատական երաժշտախումբի միւս անդամներուն:

Սայեաթ-Նովայի ծագումով ռամիկ ըլլալն ու արքունիքի մէջ թագաւորին կողմէ այնքան պատիւներու արժանանալը մեծապէս կը գրգռեն պալատ այցելող հարուստ դասակարգին ներկայացուցիչները:

Ինչպէս ամէն տեղ, Վրաստանի պալատը եւս այս շրջանին դարձած էր քծնանքի, շողորթութեան, կեղծիքի ու երեսպաշտութեան, միւս կողմէ՝ բամբասանքներու, բանասրկութեան, քսութեան, մեքենայութիւններու, խարդաւանքի ու դաւերու կենդրոն:

Սայեաթ-Նովա համաձայն իր աշուղութեան դաւանանքին, առանց զիջելու, պայքարեր է Չարի ղէմ երգելով Բարին, ճշմարիտն ու եղեցիկը:

Սկիզբը, պալատի մեծահարուստ հիւրերը Սայեաթ-Նովայի այսպիսի խաղերը վերագրելով աշուղի մտամարզանքին վտանգ չեն տեսած անոնց մէջ: Սակայն, հետզհետէ սկսած են հասկնալ, որ փառաբանուած աշուղը ոչ թէ սիրերգակ է, կամ խրատաբան, այլ՝ այլաբանութեան եւ փոխաբերութեան լեզուով փաստօրէն ամէն տեսակի բացասական տիպարները - անկախ իրենց ընկերային դիրքերէն - ոչնչացնող քննադատութեան ենթարկող մը:

Այլեւս մթնոլորտը դարձած է անշնչելի:

Սայեաթ-Նովայի ղէմ հայածանքի պայքարն սկսած է:

Պալատական այցելուները կարողացած են նոյնիսկ ազդել թագաւորին ու համոզել, որ պալատէն հեռացնէ

երգիչը:

«Եիս ռամիկ իմ, ինձի վուխչ-վուխչ թաղեցին» (էջ 80.), կը բողոքէ աշուղը:

Սայեաթ-Նովա երկու անգամ պալատէն հեռացուած է: Առաջին անգամ 1752-ին, որուն պատճառը յայտնի չէ. իսկ երկրորդին պատճառը, ինչպէս կը տեսնէք, բացատրութեան ընթացքին մէջ է:

Երգիչն ունեցած է անլուր տառապանքներու ուրիշ անձնական եւ զուտ հոգեբանական աղբիւր մը: Ան ներկայիս մեծ սիրով կատուած էր Հերակլի քրոջ՝ բացառիկ գեղեցկութեամբ օժտուած իշխանուհի Աննային:

Ան փոխադարձ սիրով բախտատրուելու միտք երբեք չէ ունեցան: «Եիս կանչում եմ լալագին» խաղին մէջ կ'ըսէ.

«Գիղիմ վուր, եար, դուն ինձ լայիղ չիս անի:

Դուն մէ թագաւոր իս, եիս մէ խիղճ

դալրիշ» (էջ 81.):

Թահմիզեան կ'ըսէ.- «Սայեաթ-Նովայի համար Աննայի նկատմամբ տածած պատռուական սէրը մի երկրային նախասկզբնական կայծ էր, որից գնալով բորբոքում էր երկնային սիրոյ հրդեհը»:

Սայեաթ-Նովայի ստեղծագործական աշխատանքը, այս շրջանին, կը հասնի զագաթնակէտային բարձրութեան:

Ահա ծածկագրութեամբ Աննային նուիրուած խաղին առաջին տունը միայն.

«Եիս կանչում իմ լալանին.

Բաղեշխանէն լալ անին.

Վայ թէ հասրաթ-էտ մեռնիմ,

Բլբուլ լիզուս լալ անին.

Դոստիրըս հեռու կանգնին,

Ետդիրըն գան լալ անին» (էջ 81.):

Այսպէս կը պատասխանէ գոռոզ պալատականներուն, իր մասին գրելով.-

«Աստղալուսով ծովըն ինչպէս կու ցամքի.

Մաղով քրոյ ջուրըն ինչպէս կու չափուի.

Որքան գուզէ քամին փըչէ մինձ ուժով,

Ժեռ քարեմէն եիփ կանա մի բան տանի» (էջ 81.):

Եւ յետոյ կ'ըսէ.

«Դուն չասիս, թէ էս խիղճ սագանդարն ճիւ ա.

Խօսկիս տէրն իմ, հունարըս է գըրով ա» (էջ 82.):

Եւ վերջապէս, աշուղը իր լատագոյն խաղերէն մէկուն մէջ խօսքը թագաւորին ուղղելով հետեւեալ ցնցող հաստատումը կ'ընէ.

«Ամէն մարթ - չի կանա խըմի՝

իմ ջուրըն ուրիշ ջըրէն է.

Ամէն մարթ - չի կանա կարթ-ա՝

իմ գիրըն ուրիշ գըրէն է:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՆԻԿՈՂՈՍ ԹԱԽՆԻԳՅԱՆԻՆ

Բունիաթ-ըս աւագ չիմանաս՝
քարափ է, քարուկրրէն է:
Սելաի պէս, առանց ցամբիլի, դուն շուտով
խարաբ մի անի» (էջ 82.):

Աշուղին պալատի թշնամիները թագաւորի մօտ, անարգ կերպով շահագործելով Սայեաթ-Նովայի երգերէն Աննայի հանդէպ տաժած գաղտնի սիրոյ զգացումներ ցոյց տուող արտայայտութիւնները, բամբասանքներով կը կարողանան համոզել թագաւորը, որ այս ան-

գամ ոչ միայն վերջնականապէս կը հեռացնէ Սայեաթ-Նովան պալատէն, այլ՝ ամբողջովին լուրջաբան կը դատապարտէ հանճարեղ երգիչը:

Այսպիսի դժբախտ դատադրութիւններու եւ սաղ-րանքներու զոհ երթալով Սայեաթ-Նովա, ոչ միայն կը հեռացուի արքունական շրջանակէն ու պալատէն, այլ՝ թագաւորական հրահանգով, որպէս պատիժ, կը պարտադրուի իրեն ձեռնադրուիլ քահանայ, որով կը ստանայ Տէր Ստեփանոս անունը:

(Հարունակելի)

Բանալի-քառեր. Սայեաթ-Նովա Ստեփանոս, Աննա, Թիֆլիս, աշուղական դպրոց, Նիկողոս Թախնիգեան, կեանքը և գործունէութիւնը, քահանայ, երգեր:

Ключевые слова: Саят-Нова, Степанос, Анна, Тифлис, ашугская школа, Никогос Тагмизян, жизнь и творчество, пастор, песни.

Keywords: : Sayat Nova, Stepanos, Anna, Tiflis, Ashug school, Nikoghos Tagmizyan, life and work, priest, king, songs.

